ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(76-րդ տարի) Թիվ-11 (1669) Նոյեմբեր 2022

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Քննություն (էջ 1-3)

2- Քաղաքական

Սեդօ Պոյաճեան
Հայաստա՞ն, թէ՞ Արցախ (էջ 4-5)

Սաբինա Մուրադյան
Թուրքը ոչ միայն յաթաղանով, այլև փափուկ ուժի միջոցով՝ «բամբակով է վիզ կտրում» (էջ 6-10)

3- Տարածաշրջանային

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Իրանի կարմիր գծերն ու նախազգուշացումները (էջ 11-13)

Արմեն Պետրոսյան, Կարինե Մկրտչյան.
Հակառուսական քարոզչության դրսևորումները ադրբեջանական հանրային խոսույթում (էջ 14-18)

Ժաննա Վարդանյան
Իրար դեմ վարժանքներից՝ իրար հետ վարժանքի լուրեր. Իրան-Ադրբեջան ռազմական համագործակցության միտումները (էջ 19-21)

4- Աշխարհաքաղաքական

Վարդան Հակոբյան
Ի՞նչ եղավ, և դեռ ի՞նչ է լինելու արևելաեվրոպական ջունգլիներում (էջ 22-25)

Դմիտրի Նեֆյոդով
«Չինական վիշապը» Մերձավոր Արևելքում և Իսրայելի տարածաշրջանային երկընտրանքները (էջ 26-28)

5- Դաշնակցական բեմ

Աւօ Գաթրճեան
Հայ ազատագրական շարժման մեծագոյն նուիրեալ Գէորգ Չաւուշին ձօնուած երգերը (մաս 3) (էջ 29-37)

6- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Արցախը Միացյալ Հայաստանի գաղափարի համատեքստում: Թևանի ու թևանականների պայքարը Արցախը Հայաստանին վերամիավորելու համար (էջ 38-42)

7- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
«Ամե՛ն ջանք» եւ... «բոլո՛ր ուժերովս» (էջ 43-44)

Քննություն

Հոկտեմբերի 6-ին՝ Պրահայի բանակցություններից հետո, Հայաստանի վարչապետի և Ադրբեջանի նախագահի ստորագրած հայտարարությամբ ակնհայտորեն դրսևորվեց հայ-ադրբեջանական խնդիրների լուծման նախաձեռնությունը Ռուսաստանից խլելու, առհասարակ Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու Արևմուտքի ցանկությունը, ինչը միաժամանակ Հայաստանի իշխանությունների՝ չորսուկես տարի շարունակվող հետևողական քաղաքականությունն է: Նոյեմբերի 1-ին ռուսական «Ռեգնում» լրատվական գործակալության վերլուծաբան Ստանիսլավ Տարասովը գրեց. «...աշխարհաքաղաքական փոփոխությունների դինամիկան տարածաշրջանում Մոսկվայի օրակարգ է բերում ազդեցության ոլորտների վերաբաշխման խնդիրը: Գլխավորը հիմա չուշանալն է»[1]: Ինչպես պարզվեց, չուշանալու մտահոգություն ուներ ոչ միայն ռուս վերլուծաբանը. շատ չանցած՝ Ռուսաստանի նախագահը Հայաստանի վարչապետին և Ադրբեջանի նախագահին հրավիրեց հանդիպման: Իսկ մինչ հանդիպումը տեղի կունենար, համապատասխան մթնոլորտ ձևավորելու համար ռուսական լրատվամիջոցների կազմակերպված լռությանը մոտ երկու շաբաթ փոխարինեց «քարոզչական նախապատրաստական թնդանոթաձգությունը» և՛ Հայաստանի «սորոսական իշխանությունների» ու նրանց նպատակների, և՛ Ադրբեջանի ու Թուրքիայի ծավալապաշտական հավակնությունների ուղղությամբ: Իհարկե, սեփական դիրքերը վերականգնելու Ռուսաստանի ընդվզումը աննկատ չմնաց Արևմուտքի աչքից, և հանդիպման հրավերին հետևեց ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի ծառայության ղեկավար Նեդ Փրայսի արձագանքը, որ ամերիկացիները «սատարում են Բաքվի և Երևանի միջև խաղաղ բանակցությունները», և Բաքուն ու Երևանը «իրենք պետք է որոշեն՝ օգտակար կլինի՞ արդյոք Պուտինի հրավերը իրենց համար կայուն խաղաղություն հաստատելու հարցում»[2]: Այս շարքին կարելի է դասել նաև Ֆրանսիայի նախագահ Մակրոնի հայտարարությունը, ով ռուսական կողմին մեղադրեց Հայաստանի և Ադրբեջանի միջև վերջին բախումները հրահրելու մեջ՝ Կովկասի տարածաշրջանում, ինչպես և դրանից դուրս իրավիճակն ապակայունացնելու նպատակով:[3]

Հոկտեմբերի 31-ին Սոչիում տեղի ունեցած Պուտին-Ալիև-Փաշինյան հանդիպումը վերահաստատեց Ռուսաստանի միջնորդական դերը հայ-ադրբեջանական խնդիրների լուծման հարցում և ըստ էության արձանագրեց դրանց լուծման ժամկետների երկարաձգումը: Ինչ վերաբերում է կողմերի միջև եղած պայմանավորվածությունների անշեղորեն կատարմանը, ուժի կիրառմանը և դրա կիրառման սպառնալիքից զերծ մնալուն և այլն, կարելի է վերագրել հեքիաթի ժանրին, մանավանդ որ, հանդիպումից

շատ չանցած, Ադրբեջանը վերսկսեց հայկական տարածքների ռմբակոծումը: Ինչ վերաբերում է այս հանդիպման արդյունավետությանը, ապա այդ առնչությամբ մեջբերենք ռուս վերլուծաբան Ստանիսլավ Տարասովի տեսակետը. «Պարզ է այլ բան: Նույնիսկ եթե Բրյուսելում խաղաղության պայմանագիրը ստորագրվի (Ալիևն ու Փաշինյանն այնտեղ կլինեն դեկտեմբերի սկզբներին), Ռուսաստանի ներգրավումից ոչ մեկին չի հաջողվի խուսափել: Ուստի առկախ է մնում նաև այն հարցը՝ արդյոք Սոչիի գագաթնաժողովը պարզապես ծիսական բնույթի իրադարձությո՞ւն կդառնա, թե՞ կծառայի որպես ԵՄ հովանու ներքո խաղաղության պայմանագրի ստորագրմանը նպաստող ազդակ: Առայժմ կայուն զգացողություն է ձևավորվում, որ Ռուսաստանը սկսում է հեռավորություն պահպանել՝ «հնարավորությունների միջանցք» թողնելով Արևմուտքի համար: Համենայնդեպս, Սոչիում, ի հեճուկս շատ ռուս փորձագետների կանխատեսումների, հրապարակայնորեն Մոսկվան երկու կողմերի համար նոր փաստարկներ չի ներկայացրել և դուրս չի եկել նախկինում առաջարկվածի շրջանակներից: Դա կարծես պայմանավորված է նրանով, որ Ռուսաստանը տեսնում է, թե ինչպես է Արևմուտքը թուլանում և կորցնում Անդրկովկասում մեծ խաղ վարելու կարողությունը, թեև նա ձգտում է փլուզելու ստատուս քվոն, որը հաստատվել է 2020 թվականին:

Իսկ տարածաշրջանային այնպիսի խաղացողների շահերը, ինչպիսիք են Իրանն ու Թուրքիան, այժմ կապված են Ռուսաստանի հետ: Հաշվի առնելով այդ գործոնները՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացը հեշտ չի լինելու, որոշումների տարբերակների ընտրությունը շարունակվելու է»[4]:

Կարելի է թերևս մտածել, որ պրն. Տարասովն արտահայտում է Ռուսաստանի իշխանությունների տեսակետը, սակայն որքանո՞վ է այն իրականանալի, երբ սկիզբ առած գործընթացները շարունակվում են: Մասնավորապես արդեն հաջորդ շաբաթ Վաշինգտոնում տեղի կունենա Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարներ Միրզոյանի և Բայրամովի հանդիպումը, իսկ մոտ մեկ ամսից սպասվում է Փաշինյան-Ալիև նոր հանդիպումը Եվրոպայում: Տարբեր հայտարարություններից ակնհայտ է, որ ինչպես Հայաստանի ու Ադրբեջանի, նույնպես և արևմտյան շահագրգիռ տերությունների առաջնորդները շտապում են մինչև տարեվերջ գլուխ բերելու սահմանագծման ու սահմանազատման գործը (եթե դա չիրականացվի ըստ ռուսական ռազմական քարտեզների, ապա հրապարակում կմնան Ադրբեջանի քարտեզներն ու նրա կամքը: Այս դեպքում շատ հավանական է դառնում, որ հայկական կողմը կհամաձայնի սահմանագծի անցկացմանը՝ նախկին ադրբեջանաբնակ անկլավների ու ներկայումս ադրբեջանական զորքերի տնօրինության տակ գտնվող՝ Հայաստանի տարածքների ներառմամբ, որտեղ նրանք դիրքերի ամրակայման լուրջ աշխատանքներ են իրականացնում): Ինչպես պնդում են նաև ռուսական աղբյուրները, այս լուծման հետ համաձայն են նաև արևմտյան հովանավորները: Իհարկե, այս դեպքում խոսք չկա Արցախի որևէ կարգավիճակի մասին, քանի որ հայկական կողմի լուռ համաձայնությամբ Արևմուտքը հրաժարվեց Արցախի կարգավիճակի հարցը բարձրացնելուց, որովհետև գերխնդիրը մնում է խնդիրների համալիր և արագ լուծումը, քանի դեռ Ռուսաստանը գլխի չի ընկել, որ այս տարածաշրջանի հարցերում այլևս անելիք չունի: Իսկ Ռուսաստանը, ուկրաինական բեռին զուգահեռ կամ դրանից ձերբազատվելով, կկարողանա՞ իրականացնել այն, ինչ իր գլխում է: Նախ մենք չգիտենք, թե խնդիրների հստակ ու մանրամասն լուծման առումով ինչ կա Ռուսաստանի մտքում: Ակնհայտ է, սակայն, որ այն չի կրկնելու մեր գլխում եղածը: Մյուս կողմից՝ Ռուսաստանը չի կարող հաշվի չնստել արդեն իսկ ձևավորված իրողությունների հետ, որոնց հիմքում ընկած է Թուրքիայի բազմակողմանի և Արևմուտքի քաղաքական ճնշումը: Եվ սա այն պարագայում, երբ Հայաստանի իշխանությունները հետևողականորեն ձգտում են արևմտյան ազդեցության գերակայությանը, ռուսական ուժի չեզոքացմանը և Արևմուտքի անունից Թուրքիայի հաստատմանը իր համար բաց տարածաշրջանում՝ ինչը նույնն է, թե Արցախի վերջնական կորստին: Եթե հետևենք վարչապետի ու նրա կնոջ թերթի հրապարակումներին, ինչպես և սոցցանցերի դաշտը գրված իշխող ուժի և նրա համակիրների գրություններին, ապա ակնհայտ է դառնում, որ, ըստ այս թիմի կամ քաղաքական հոսանքի, Ռուսաստանը Արցախն օգտագործում է որպես լծակ՝ Անդրկովկասը լարվածության մեջ և Հայաստանի ու Ադրբեջանի իշխանություններին իրենից կախման մեջ պահելու նպատակով: 44-օրյա պատերազմի ժամանակ Հայաստանի իշխանությունը փորձեց ձերբազատվել այդ կապանքներից, սակայն դա նրան ամբողջովին չհաջողվեց: Դրանից հետո նույն իշխանությունը բոլորին համոզեց, որ բացարձակապես հավակնություններ չունի այս հարցում, այլ, ընդհակառակը, համաձայն է, որ Արցախը մնա Ադրբեջանի կազմում արցախահայության, որպես էթնիկ փոքրամասնության՝ ինչ-ինչ իրավունքներով: Այդ իսկ պատճառով իշխող ազգադավ ուժը հանկարծ նոր վրդովմունք ապրեց, երբ արցախցիները իրենց իշխանությունների գլխավորությամբ միահամուռ հրապարակ դուրս եկան՝ հայտարարելով, որ չեն ընդունելու իրենց անկախության կորուստն ու ադրբեջանական ստրկությունը: Արցախում, կամ Հայաստանում հայրենակործան այս ծրագրերի դեմ որևէ ընդվզում վրդովեցնում ու կատաղեցնում է իշխող ուժին, որը դրա մեջ տեսնում է իր դավաճանական ծրագրերի ձախողման վտանգ:

Հայաստանի իշխանությունը խաղաղության հաստատման դիմաց վարկերով, ներդրումներով և այլ ձևերով վճարելու պատրաստ ուժերին գոհացնելով ձգտում է հասնելու խաղաղության, ինչի մեջ էլ տեսնում է իր իշխանության պահպանման հնարավորությունը: Իսկ Հայաստանի իշխանությունը իրապե՞ս հավատում է, որ թեկուզ ազգի ու պետության համար ծանրագույն կորուստների գնով կարելի է հասնել երկարատև խաղաղության, անվտանգության ու ապահովության: Թերևս նա դրան հավատում էր, երբ դեռ ՀՀՇ դպրո-

Պրահա. 6-ը հոկտեմբերի

ցում քաղաքական դասեր էր սերտում, հավատում էր 3-4 տարի առաջ, երբ կուրացած ամբոխի ուսերի վրա փողոցից հայտնվեց իշխանության ղեկի մոտ, բայց հիմա, երբ հայտնվել է թուրք-ադրբեջանական կործանարար ծրագրերի պարտադրանքի առջև, նա անշուշտ պատկերացնում է և՛ այդ պահանջների ծավալը, և՛ խորքը, և՛ անվերջանալիությունը:

Ահա երկու հատված ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանի խոսքից՝ ասված նոյեմբերի 3-ին խորհրդարանում բյուջեի քննարկման ժամանակ. «Հանրահայտ է, որ գործընթացն առանց նախապայմանների է, և միևնույն ժամանակ թուրքական կողմն անընդհատ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման հետ է կապում, որը ինչ-որ առումով ինքնին մի քիչ նախապայման է հիշեցնում», «Ադրբեջանի հետ բանակցային գործընթացի բոլոր ոլորտներում մենք, ըստ էության, բախվել ենք մաքսիմալիստական մոտեցման»: Ըստ նրա՝ Ադրբեջանը, մարտադաշտում որոշակի ռազմական հաջողությունների հասնելով, փաստացի եկել է այն եզրակացության, որ կարող է հակառակ կողմին պարտադրել իր պայմաններն ու տեսակետը:

Հայտնվելով և երկիրը գցելով նման ծանր կացության մեջ՝ ձեռնարկում է արդյոք Հայաստանի ղեկավարությունը ինչ-որ քայլեր՝ իրավիճակը հաղթահարելու, երկիրն ու պետությունը փրկելու համար: Մենք տեսնում ենք, որ պետությունը հզորացնելու, սեփական ուժերով սեփական խնդիրները լուծելու ուղղությամբ չի արվում ոչինչ: Կարելի է պնդել, որ ցանկության դեպքում իսկ չի կարող անել, որովհետև Ադրբեջանն արգելում է նրան հզորացնել բանակը, ամրացնել սահմանը, հարաբերություններ զարգացնել մեր շահերի հետ համընկնող շահեր ունեցող իրական դաշնակիցների հետ և այլն: Հայաստանի իշխանությունը պետության ու ժողովրդի անվտանգությունն իր ուժերով ապահովելու ուղղությամբ ոչ մի հուսադրող բան չի ասել և չի արել: Նրա արածը բոլորից ու ամեն տեղ ադրբեջանական վտանգից պաշտպանություն խնդրելն է, փորձը՝ գերուժերի շահերի հակադրություն հրահրելով ստեղծելու մրցակցություն՝ Հայաստանի նկատմամբ հովանավորություն ստանձնելու համար, որպես իշխանություն իր խնդիրները գնդակի պես ուրիշների դաշտ նետելը: Նիկոլ Փաշինյանի գլխավորած իշխանությունը աշխարհաքաղաքական ասպարեզում զբաղված է ոչ թե քաղաքականություն վարելով, այլ մանր ինտրիգայնությամբ ու խորամանկությամբ, այն դեպքում, երբ Ադրբեջանի նախագահն իր աշխարհաքաղաքական, տնտեսական, ռազմական, դիվանագիտական և այլ արժեքների շահարկմամբ կարողանում է խաղալ բոլոր դաշտերում՝ ամենուր ստեղծելով շահագրգռություններ և որոշակի կախումներ: Նման պայմաններում ոչ ոք չի գա և հայության համար չի անի այն, ինչը որ չի ցանկանում կամ ունակ չի անելու հայությանը և նրա պետությունը ներկայացնող ուժը: Փաշինյանը հստակ գիտի, որ քանի դեռ ինքն է ղեկավարում պետությունը,

Արցախն ու Հայաստանը այս կործանարար ջրապտույտից դուրս գալ չեն կարող, նա գիտի, որ կամ Հայաստանն իրենով կկործանվի, կամ փրկության հնարավորություն կստանա առանց իրեն: Փաշինյան ղեկավարը գերադասում է պահպանել իշխանությունը Հայաստանը կործանելու գնով:

Այս պայմաններում Հայաստանի և հայության՝ որպես ազգի փրկությունը կախված է ոչ թե Ռուսաստանից, Ամերիկայից, Եվրոպայից կամ ուրիշներից, այլ հայ ժողովրդից: Հայ ժողովուրդն է միայն ունակ ու իրավասու լուծելու իր այն ներքին խնդիրը, որով պայմանավորված է մնացած բոլոր խնդիրների համալիր լուծումը: Արցախահայությունը Արցախի լեռներից արդեն հնչեցրել է վերազարթոնքի կոչնակը, ինչպես 1988 թ.: Եթե մենք հայ ենք և որպես պետականության ազատ քաղաքացիներ ունենք արժանապատվություն, պետք է ոտքի կանգնենք: Այդ մենքն իհարկե բաղկացած է բազմաթիվ եսերից, որոնցից յուրաքանչյուրն իր համար պետք է կայացնի որոշում՝ ինքը ծնվել է լինելու արժանապատիվ քաղաքացի, թե՞ թուրքի ճորտ: Փորձությունը յուրաքանչյուրիս համար է, և ամեն մեկս պետք է հանձնի իր քննությունը: ■

Հղումներ

1. https://regnum.ru/news/polit/3718827.html (մուտք՝ 15.10.2022).
2. https://regnum.ru/news/polit/3736425.html (մուտք՝ 02.11.2022).
3. Նույն տեղում:
4. Станислав Тарасов, Саммит в Сочи. Путин — Алиеву и Пашиняну: ребята, давайте жить дружно, 1 ноября 2022, https://regnum.ru/news/polit/3739387.html (մուտք՝ 05.11.2022).

Հայաստա՞ն, թէ՞ Արցախ

Սեդօ Պոյաճեան
Միջազգային իրաւունքի մասնագետ

Սոչիի եռակողմ հանդիպումին վերև կը սաւառնէր Արցախեան հարցի ուրուականը:

Հանդիպումին օրակարգը, անոր քննարկումները և զայն քննողները կը խուսափէին ուրուականէն: Աւարտին ուրուականը շրջանցած ըլլալու խաբուսիկ գոհունակութեամբ երեք կողմերը վերադարձան տուն:

Ռուսաստանը գոհացած էր ամերիկեան ծրագիրը ռուսականի վերածելու և ռուսական միջնորդութիւնը գերակայելու իր յաջողութեամբ:

Ատրպէյճանը բաւարարուած էր Հայաստանի և Արցախի դէմ իր ցարդ ձեռք բերած ապօրինի նուաճումներու «ստատուս քուոն» պահելով:

Իսկ Հայաստանը ձեռնածալ ու ապա ձեռնունայն շուարած էր, թէ ինչու իր «խաղաղութեան» բոլոր զիջումները կը շարունակէին իրենց ձախող տեղքայլը:

Անշուշտ, շուարելիք բան չկայ, պէտք չէ ըլլայ: Ի վերջոյ ամէն բան զիջողը, ամէն ինչ յանձնողը Հայաստանի իշխանութիւնն է: Բայց հիմա իշխանութիւնը ինչ բացատրութիւն պիտի տայ մեր ժողովուրդին իր այդքան փայփայած «խաղաղութեան» անհասանելիութեան մասին: Բնականաբար, բացատրութիւն պիտի չտայ, ինչպէս միշտ, ինչպէս իր միւս բոլոր ձախողութիւններու պարագային: Փոխարէնը պիտի փորձէ կողմնակի ու անհետևանք հարցերով ու մեղադրանքներով ուշադրութիւնը շեղել իր յայտարարած ծրագրային օրակարգերու վիժումներէն:

Նայինք ետ և հարց տանք. ինչպէ՞ս հասանք այսօրուան:

Նիկոլ Փաշինեանը և իր խմբակցութիւնը իշխանութեան տիրացան «նախկինները», հեռացնելու,

կաշառակերութիւնը վերացնելու, մարդկային իրաւունքները հաստատելու, ժողովրդավարութիւնն ամրապնդելու և ժողովուրդին վիճակը բարելաւելու օրակարգով: Այս օրակարգի իւրաքանչիւր կէտ այսօր մոռցուած է և ձախողութեան մատնուած: Եւ ընդհակառակը՝ օրակարգի իւրաքանչիւր կէտ՝ իր բոլոր բնագաւառներով, գլխիվայր շրջուած է: «Նախկիններէն» հնազանդները մաս կը կազմեն իշխանութեան, մաֆիոզ օլիգարխները խորհրդարանի պատգամաւոր և կառավարութեան անդամ են: Կաշառակերութիւնը պետականացուած է՝ ներառնելով ազգականական ու խնամիական բոլոր մակարդակները: Հաստատուած է բռնատիրութիւն՝ մենատէրի մը գերիշխանութեամբ, որ իր կարգին կաշառած ու իրեն հլու դարձուցած է ուժային ծառայութիւնները և արդարադատական համակարգը:

Բայց ուրկէ՞ բուսաւ այս իշխանութեան «խաղաղութեան» օրակարգը: Այդ մասին «թաւշեայ յեղափոխութիւնը» ոչ մէկ խօսք ըրած էր: Ի սկզբանէ չկար նման օրակարգ:

Իրապէ՞ս չկար: Անշուշտ կար: Այդ մէկը նիկոլական շարժումին իսկական ու միակ օրակարգն էր: Մնացեալը շղարշ էր՝ ծածկելու իշխանափոխութեան նպատակը, որպէսզի հետապնդուէր «խաղաղութեան» օրակարգը:

Նիկոլական շարժումը ճիշդ այդ օրակարգին համար պատրաստուած էր արտաքին ուժերու (իմա՛ Արևմուտք, Թուրքիա և Ատրպէյճան) դաստիարակութեամբ, խորհրդատուութեամբ և յատկապէս քաղաքական ու նիւթական աջակցութեամբ: Աւելի քան քսան տարուան պատրաստութեան պատմութիւն կայ այս բոլորի ետին, որուն շան գլուխը կը սկսի առաջին նախագահով:

«Խաղաղութեան» օրակարգը այլ բան չէր, եթէ ոչ ներսէն կազմաքանդել Հայաստանի բարոյական արժէքները, մշակութային ըմբռնումները և ընկերու-

Երևան. 5-ը նոյեմբերի

թեան միասնականութիւնը հիւսող թելերը, որպէսզի իրականացուին թրքական կողմի հակահայաստանեան ծրագիրները: Արևմուտքի շահն էր Հայաստանը տկարացնելով մէկ կողմէ հարուածել Ռուսաստանը, միւս կողմէ թրքական կողմը գոհացնել Հայաստանի հաշւոյն:

«Խաղաղութեան» օրակարգին առաջին յաղթանակը եղաւ 44-օրեայ պատերազմին Հայաստանի պարտութիւնը՝ քայքայելով Արցախի ամբողջականութիւնը և հարցականի տակ դնելով անոր ինքնիշխան գոյութիւնը:

Ուրեմն նոյեմբերի 10. 2020-ին պատերազմի աւարտով նիկոլական «խաղաղութեան» օրակարգը մեկնարկեց իր ոդիսականը: Թրքական կողմին համար այս ոդիսականը տուն պիտի հասնի իր պատկերացուցած հայկական բոլոր զիջումներու ձեռքբերումով: Արևմուտքի և Ռուսաստանի համար ոդիսականը պիտի աւարտի այն ատեն, երբ Հայաստան իրենց հաշւոյն տալիք չունի այլևս:

Իշխանութիւնը, սակայն, ոչ մէկ հակակշիռ ունի իր «խաղաղութեան» օրակարգին վրայ, որպէսզի կարենայ հետևիլ այս ոդիսականին ու մասնաւորապէս պատկերացնել անոր աւարտին Հայաստանի ու հայ ժողովուրդին վճարելիք գինը:

Սոչիի հանդիպումը տակաւին մէկ անվերջանալի արարն է այս ոդիսականին: Սակայն որքան ալ երկարին արարները, բոլորին վերև պիտի յարատևէ Արցախեան հարցի սաւառնումը:

Այնքան ատեն, քանի դեռ Արցախը գոյութիւն ունի, այս ոդիսականը տուն՝ Հայաստան, պիտի հասնի Արցախի ինքնիշխանութեան ճամբով: Քանի որ չկայ Հայաստան առանց Արցախի, ինչպէս չկայ Արցախ առանց Հայաստանի: Այս բանաձևումին մէջ է հայութեան յաղթանակը: Հետևաբար մերժելի է այն երկընտրանքը, որ նիկոլական շարժումը մեր ժողովուրդին առջև դրած է ու կը շարունակէ պնդել՝ Հայաստա՞ն, թէ՞ Արցախ:

Նիկոլական շարժումը քաղաքական իմացականութենէ դատարկուած, գաղափարական լիցքաւորումէ անտեղեակ և հայրենասիրութեան ըմբռնումէ զուրկ ամբոխ մըն է:

Հայրենիքը ունի իր տրամաբանութիւնը, և հայրենասիրութիւնը ունի իր բանականութեան կշռոյթը, ուր անհամատեղելի է «Հայաստա՞ն, թէ՞ Արցախ» ընտրանքը:

Իբրև հայ չես կրնար Հայաստանի հետ ըլլալ և միաժամանակ ըլլալ Արցախի դէմ: Չես կրնար Արցախի հետ ըլլալ և միաժամանակ ըլլալ Հայաստանի դէմ: Եթէ հետն ես, հետն ես երկուքին: Եթէ դէմն ես, դէմն ես երկուքին: ■

Թուրքը ոչ միայն յաթաղանով, այլև փափուկ ուժի միջոցով՝ «բամբակով է վիզ կտրում»

Սաբինա Մուրադյան
Թուրքագետ

Թուրք-հայ բարեկամութիւն մը կարելի՞ է: Այսօր Ո՛Չ: Եւ ով որ հակառակը կը պնդէ, կամ Թուրքը չի ճանչնար, կամ ինքզինքը: Աւելի ճիշդ՝ ոչ Թուրքը կը ճանչնայ, ոչ ինքզինքը:

Մեր կարծիքով՝ թուրք-հայ բարեկամութեան մը մէջ յոյս տեսնողները գիտակցօրէն ու անգիտակցօրէն թշնամի են հայութեան: Եւ վաղը այսպիսի քայլէ մը առաջ գալիք նոր արիւններու պատասխանատուութիւնը, անկախ արտաքին դաւերէն, ամէնէն առաջ կ'իյնայ Հային վրայ:

ՇԱՀԱՄ ՆԱԹԱԼԻ

Հայ-թուրքական հարաբերություններում «խաղաղության դարաշրջանի» մեկնարկի և սահմանների բացման ռիսկերի գնահատման առնչությամբ թուրքական տարածաշրջանային քաղաքականության մասին առավել համապարփակ պատկերացում կազմելու համար բավական է միայն ուսումնասիրել Վրաստանում և առհասարակ ողջ հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի վարած տնտեսական ու մշակութային էքսպանսիոնիստական քաղաքականությունը և հասկանալ, որ Թուրքիայի կողմից Հայաստանի հանդեպ այլ որակի և այլ բովանդակության քաղաքականության ակնկալիքներն ու պատրանքները, մեղմ ասած, հիմնազուրկ են:

Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան նախկին խորհրդային գերտերության մի շարք շրջաններ սկսեց դիտարկել որպես իր ազդեցության գոտիներ: *1991 թ. Անկարան առաջինն էր, որ շտապեց ճանաչելու Կենտրոնական Ասիայի նորանկախ թյուրքալեզու պետությունները: Եվ արդեն 1992 թ. հունվարին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Կրտսերի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց իր երկրի տարածաշրջանային կարգավիճակի փոփոխության մասին՝ հաշվի առնելով նրա համար բացվող հնարավորությունները՝ ԱՊՀ երկրներում որոշելու մուսուլմանների քաղաքական ապագան: Այս առումով Թուրքիան պետք է լուծեր երկու կարևորագույն խնդիր՝ ապահովել Արևմուտքի և այդ հանրապետությունների միջև շփումների անհրաժեշտ մակարդակը և համոզել նրանց առաջնորդներին, որ Անկարան կարող է ծառայել որպես ԱՊՀ մուսուլմանական երկրների շահերի ներկայացուցիչը Արևմուտքում՞:*

Այս համատեքստում Հարավային Կովկասը՝ իր երեք հանրապետություններով, կդառնա կամուրջ, որը նավթի պաշարներով հարուստ Միջին Ասիան և կասպյան ավազանը Թուրքիայի միջոցով կկապի Արևմուտքի հետ:

Առհասարակ ողջ Հարավային Կովկասը միաժամանակ և՛ տարածաշրջանային, և՛ գլոբալ խաղացողների շահերի բախման էպիկենտրոն է: Այս տարածաշրջանում ծավալվող ցանկացած գործընթաց ուղղակիորեն կախված և կապված է գլոբալ քաղաքական տրանսֆորմացիաների հետ: Թուրքիան, ձգտելով դառնալու տարածաշրջանային առաջատար, ջանք չի խնայում քաղաքականապես և տնտեսապես ամրապնդելու իր դիրքերը տարածաշրջանում՝ փափուկ ուժի² ռազմավարության կիրառմամբ սկիզբ դնելով թուրքական քաղաքական, մշակութային և տնտեսական ակտիվ ներթափանցմանը:

Վրաստանում, ՌԴ թաթարաբնակ մարզերում, Կենտրոնական Ասիայում և Ադրբեջանում, տնտեսական հարմարավետ ենթակառուցվածքներից բացի, հիմնվում են բազմաթիվ կրթական կենտրոններ, բուհեր և հիմնադրամներ, որոնք բավականին գրավիչ պայմաններ են ապահովում տեղի բնակիչների համար, որոնց երեխաները, մատչելի և որակյալ կրթություն ստանալուց բացի, նաև հնարավորություն են ստանում շարունակելու կրթությունը արտերկրում՝ գլխավորապես Թուրքիայում: Ավարտելուց հետո նրանք ապահովվում են աշխատանքով, բնականաբար թուրք գործատուների մոտ:

Իր նպատակներին հասնելու համար Թուրքիան ընտրել է քողարկված տեղեկատվական պատերազմի մեթոդները, ինչպես նաև իր տնտեսական համակարգում տարբեր պետություններ աստիճանաբար ընդգրկելու մեթոդը: Սրանք փափուկ ուժի դրսևորման արտահայտություններ են: Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ թուրքերենի տարածման խթանում, մշակութային համագործակցություն, համագործակցություն կրթության և գիտության ոլորտում, տնտեսական համագործակցություն: Նման գործելաոճը նպաստում է Թուր-

քիայի դրական և գրավիչ իմիջի ձևավորմանը: Ամրապնդելով իր դիրքերը և ձեռք բերելով քաղաքական կշիռ՝ Թուրքիան սկսում է դիրքավորվել որպես տարածաշրջանային ուժ և փորձում է ազդել ողջ տարածաշրջանում և առանձին երկրներում ծավալվող քաղաքական գործընթացների վրա: Կարող ենք արդյոք պնդել, որ Հայաստանը զերծ կմնա Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականության նման դրսևորումներից: Իհարկե ոչ: Առավել ևս հիմա, երբ վերջերս կառավարության կողմից շրջանառության մեջ դրված մի նախագծով սահմանվել են չափանիշներ, որոնց համաձայն՝ Հայաստանի տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության և սպորտի բնագավառներում նշանակալի ավանդ ունեցած օտարերկրացիները, անկախ ազգային և էթնիկ պատկանելությունից, կարող են ստանալ ՀՀ քաղաքացիություն 150 հազար ԱՄՆ դոլար Հայաստանում ներդնելու դեպքում (նախագիծը ներկայացված է e-draft.am պաշտոնական կայքում): Թուրքիայի գործելաոճը իր համար հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջաններում կասկած չի թողնում, որ նա ոչ մի դեպքում բաց չի թողնի նման հնարավորությունը և բազմաթիվ ոլորտներում ներդրումներ կկատարի՝ ձգտելով մեծացնելու իր ազդեցությունը Հայաստանում ու ներազդելու երկրի ներքին և արտաքին քաղաքական օրակարգերի վրա:

Թուրքական ներդրումային քաղաքականությունը կախման մեջ է դնում և վերահսկողության տակ առնում երկրի ողջ տնտեսական համակարգը: 1990-ականների սկզբներից Թուրքիան, թափանցելով Հարավային Կովկաս, Վրաստանն սկսեց օգտագործել որպես տարանցման հարթակ՝ Կենտրոնական Ասիայի և կասպյան ավազանի հարուստ ռեսուրսները փոխադրելու համար, որով վրացական տնտեսությունը զգալիորեն կախման մեջ հայտնվեց թուրքական կապիտալից: Վրաստանն առանձնապես չէր դիմադրում թուրքական բազմակողմանի էքսպանսիային, քանի որ ընկալում էր Թուրքիան որպես ԵՄ-ին ու ՆԱՏՕ-ին ինտեգրվելու միջոց: Սակայն առ այսօր Վրաստանը ոչ մեկում է հաջողել, ոչ էլ մյուսում: Իսկ Թուրքիան, հակառակը, հաջողությամբ ներթափանցել է Վրաստանի քաղաքական-տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտները և անհրաժեշտության դեպքում ներազդում է երկրի քաղաքական գործընթացների վրա՝ ստանալով ձեռնտու լուծումներ: Հայաստանին նույնպես հրամցվել և հրամցվում է նույն քաղցրաբլիթը՝ Արևմուտքի հետ մերձենալու հույսերով և խոստումներով եղբայրանալ Թուրքիայի հետ: Բայց Թուրքիան Հայաստանից ավելին է պահանջում՝ հարաբերությունները բարելավելու համար: Այս հարցին կանդրադառնանք փոքր-ինչ ուշ: Նախ տեսնենք, թե ինչպիսի սպառնալիքների և մարտահրավերների առջև է կանգնած Վրաստանը, ինչը չի շրջանցի նաև մեզ:

Բացի այն, որ Վրաստանում թուրքական բիզնեսը զանգվածաբար անշարժ գույք է ձեռք բերում, մեծ ներդրումներ են կատարվում նաև շինարարության ոլորտում, հյուրանոցային և ռեստորանային բիզնեսում, որոնց ղեկավար կազմը բաղկացած է միայն թուրքերից, իսկ վրացիները՝ որպես էժան աշխատուժ, ընդգրկված են սպասարկման ոլորտում:

Վրացի, թուրք, աղրբեջանցի և այլ մահմեդականներ Թբիլիսիի Ջումա մզկիթում՝ աղոթքի պահին

Վրաստանում թուրքերի ձեռամբ ծաղկում է նաև ոչ լեգալ բիզնեսը: *Վրացի ակտիվիստ Սանդրո Բրեգաձեն համոզված է, որ թուրքական էքսպանսիան իրեն դրսևորել է հատկապես «սև բիզնեսում»[3]: Ջրոսաշրջիկների և ապրանքների ավանդական հոսքերին ավելացել են մարդկանց թրաֆիքինգը և թմրանյութերի առևտուրը: Միևնույն ժամանակ Վրաստանում գործող ազատական օրենսդրության մեջ թուրքական բիզնեսի ներկայացուցիչները լավ հնարավորություն են տեսնում մոլախաղերի խրախուսման գործում՝ հատկապես հաշվի առնելով այս ճանապարհով արագ հարստանալու՝ իրենց հայրենակիցների ընդգծված հակումը[4]: Իսկ որտեղ մոլախաղն է, այնտեղ կան բոլոր հարակից ծառայությունները[5]:*

Բայց սա դեռ ամենը չէ: Վերը նշվածին գումարվում են նաև մզկիթաշինությունն ու Վրաստանի աստիճանաբար իսլամացումը: Առհասարակ թուրքերը մեծ նշանակություն են տալիս մզկիթների կառուցմանը անգամ այն վայրերում և երկրներում, որտեղ արդեն իսլամ են դավանում, և կան մզկիթներ (օր.՝ միջինասիական երկրներ, ՌԴ-ի՝ թաթարական էթնիկ կազմ ունեցող շրջաններ): Դրանք, աղոթատներ լինելուց բացի, նաև քարոզչական օջախների դեր են կատարում, այլ կերպ ասած՝ ուղեղի լվացման կենտրոններ են: Իսլամի քարոզչությունն իրականացվում է թուրքական մենկնաբանությամբ. պատրաստվում են թուրքամետ հայացքներով կադրեր, որոնք անհրաժեշտ պահին կարող են օգտագործվել թուրքական շահերը սպասարկելու նպատակով:

Վրաստանի մահմեդականները կազմում են երկրի ընդհանուր բնակչության ավելի քան 10 տոկոսը, և այդ ցուցանիշն անընդհատ աճում է: Իսլամացումն ակտիվորեն իրականացվում է թուրք միսիոներների կողմից 2000-ականների սկզբից ի վեր: Այսպես՝ 2002 թ. Աղրբեջանին սահմանակից Մառնեուլիի շրջանի Մեորե Քեսալո գյուղում Թուրքիայի դրամական աջակցությամբ բացվեց իսլամական մեդրեսե, ուր հաճախում են զգալի թվով տեղացի աշակերտներ, որոնք թուրքամետ քարոզչություն են ծավալում ուսումնական

հասարակության պարերից դուրս: Թուրքական կողմը հետագա կրթության համար ընտրել է լավագույն ուսանողներին: 2006-2008 թթ. կրթություն ստանալով Թուրքիայում՝ նախկին ուսանողները Վրաստանում հիմնել են մի քանի թուրքամետ երիտասարդական կազմակերպություններ, ինչպիսիք են «Հուզուրը», «Վրաստանի մահմեդականների միությունը» և «Կրթություն և աջակցություն Վրաստանի երիտասարդներին» միությունը: Անցած տարիների ընթացքում այս կազմակերպությունները զգալիորեն ավելացրել են իրենց անդամների թիվը և ձեռք բերել հեղինակություն ու համակրանք տեղի բնակչության շրջանում: Դրանում մեծ դեր է խաղացել կրոնական տոների ժամանակ անապահով ընտանիքներին անհատույց օգնություն բաժանելը: Նման բարեգործության համար միջոցներ է հատկացրել TIKA-ն (Türk işbirliği ve koordinasyon ajansi – Թուրքիայի համագործակցության և համակարգման գործակալություն, գործում է Մշակույթի և զբոսաշրջության նախարարության հովանու ներքո): Նշենք, որ ներկայումս թուրքամետ հասարակական կազմակերպությունների և մարդասիրական ծրագրերի ողջ ցանցը գործում է TIKA-ի հովանու ներքո: Այս կառույցը հաճախ հանդես է գալիս MIT-ի՝ Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության աշխատանքը քողարկելու նպատակով: Հատկանշական է, որ Անկարան կիրառում է փափուկ ուժ՝ փորձելով լինել անտեսանելի, և չի ակնկալում իր ջանքերի ու ներդրումների շուտափույթ արդյունք: Թուրքիան կենտրոնանում է իր ազդեցության կրոնական, տնտեսական և կրթական բաղադրիչների վրա: Բացի այդ՝ Քվեմո Քարթլիի և Կախեթի շրջաններում, որտեղ ադրբեջանական համայնքները համախումբ են, Թուրքիան լայնորեն օգտվում է Ադրբեջանի աջակցությունից[6]:

Այսքանից հետո ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանի կողմից այդքան չարչրկված՝ ազերի փախստականների՝ Հայաստան վերադարձի խնդրի լուծվելուց հետո Հայաստանում թուրքական տարրերի վերաբնակեցման հետևանքով այստեղ նույնպես կհայտնվեն մզկիթներ և մեդրեսեներ: Թյուրք/թաթար ազերիներն աստիճանաբար կփոխեն նաև երկրի ժողովրդագրական պատկերը՝ իրենց բնակության պատմական վայրերից և զբաղմունքի ոլորտներից դուրս մղելով հայերին: Նրանց թվական աճը հղի է նաև այլ վտանգներով. բավարար թվաքանակ ապահովելու դեպքում նրանք իրենց պահանջներին կարող են հասնել ապստամբության կամ հեղաշրջման սպառնալիքով: Թուրք-ադրբեջանական տանդեմը ոչինչ չի խնայելու իր ծրագրերն իրականացնելու ճանապարհին, ինչի հետևանքով Հայաստանը կանգնելու է ներսից պայթելու վտանգի առաջ:

Թուրքիան նաև աշխատում է շիադավան համայնքներում սուննիների թվաքանակի ավելացման ուղղությամբ: *Վրացական «Ռոնդելի» ռազմավարական և միջազգային հետազոտությունների հիմնադրամի փորձագետների՝ 2021 թ. մայիս-հունիս ամիսների տվյալներով՝ Քվեմո Քարթլիի մեծավ մասամբ շիադավան ադրբեջանական համայնքում նկատվում է սուննի մահմեդականների թվի աճ: Փորձագետների կարծիքով՝ այս գործընթացը կապված է թուրքական կողմի աջակցությամբ գործող սուննի բարեգործական կազմակերպությունների, այդ թվում՝ TIKA-ի և Կրոնական հարցերի վարչության («Diyanet») գործունեության հետ[8]:*

«Diyanet»-ը գործադիր իշխանության մարմին է, որն անմիջականորեն հաշվետու է Թուրքիայի նախագահին և պաշտոնապես լիազորված է կառավարելու մահմեդական համայնքների գործերը երկրում և երկրից դուրս, դրանց հարաբերությունները երկրի ղեկավարության և արտերկրում գտնվող մահմեդականների հետ, ինչպես նաև վերահսկելու և կարգավորելու այլ կրոնական կազմակերպությունների գործունեությունը:

Նախատեսվում է շիաներով խիտ բնակեցված վայրերում բացել սուննիների կրթական կենտրոններ՝ դասախոսական կազմում ընդգրկելով թուրք աստվածաբանների: Մասնավորապես 2021 թ. «Diyanet»-ի խնդրանքով Թուրքիայի ղեկավարությունը մոտ 3 միլիոն ԱՄՆ դոլար է հատկացրել Վրաստանի մարզերում և առանձին բնակավայրերում նոր կրոնական ուսումնական հաստատություններ բացելու և սուննիադավան քարոզիչներին վճարելու նպատակով:

Վրաստանի սուննի իմամների մեծ մասը դրամական սուբսիդիաներ է ստանում Թուրքիայից. նրանք թուրք կրոնական քարոզիչներ Օսման Թոփբաշիի և Ահմեդ Յունլուի գաղափարախոսության քարոզիչներն են: Թուրքական կազմակերպությունները շիադավան երիտասարդության շրջանում սերմանում են սուննի իսլամի ամենաարմատական ուղղությունը՝ սալաֆիզմը, ինչի պատճառով ադրբեջանական համայնքում պարբերաբար հակասություններ են ծագում շիաների և սուննիների միջև: Ադրբեջանական համայնքի աստիճանական արմատականացումն իրողություն է. կան միջազգային ահաբեկչական կազմակերպություններում նրա անդամների մոբիլիզացման վտանգներ: Քվեմո Քարթլիում սալաֆիական գաղափարախոսության տարածման հիմնական կենտրոններն են Մառնեուլի, Գարդաբանի, Բոլնիսի և Դմանիսի շրջանները[9]:

«Ռոնդելի» հիմնադրամի ուսումնասիրություններում նշվում է, որ թուրքական քարոզչության ազդեցությամբ Վրաստանում նկատվում են բնակչության իսլամացման միտումներ:

2005 թ. ի վեր սալաֆիական համայնքի անդամների թիվն ավելացել է 70 հազարով և ներկայում հասնում է 470 հազարի (կազմում է երկրի բնակչության 13 %-ը՝ 2005 թ. 9 %-ի դիմաց): Նման գործընթացների հիմնական պատճառը թուրքական սուննիզմի մասսայականացումն է Վրաստանի մուսուլմանների համախումբ բնակության շրջաններում, ինչպես նաև նոր աղոթատեղիների և իսլամական կրթական հաստատությունների բացումը Թուրքիայի դրամական և այլ բնույթի աջակցությամբ:

Թուրքիայի կողմից կրոնական գործոնի օգտագոր-

ծումը Վրաստանի ադրբեջանական համայնքում հանգեցնում է տեղի շիա և սուննի հոգևորականների միջև հակասությունների սրմանը, ինչպես նաև ստեղծում է կովկասյան հանրապետություններում իսլամական արմատականության ամրապնդման վտանգ[11]:

Հարկ է նշել, որ Վրաստանի ադրբեջանաբնակ շրջանները սահմանակից են Հայաստանին, և ՀՀ-ն ՌԴ-ի հետ կապող ռազմավարական միակ ցամաքային ճանապարհն անցնում է ադրբեջանաբնակ Մառնեուլիի շրջանով: Ինչպես տեսնում ենք վերը նշվածից, Թուրքիան անհրաժեշտության դեպքում որպես Հայաստանի վրա ճնշման և շանտաժի լծակ կարող է օգտագործել վրաստանաբնակ ադրբեջանցիներին Հայաստանից դեպի Ռուսաստան բեռնափոխադրումները կաթվածահար անելու և Հայաստանը հյուսիսից նույնպես շրջափակելու համար: Ի դեպ, նույնպիսի վտանգ կա նաև հարավում՝ Հայաստան-Իրան սահմանային գոտում: Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող Ատրպատական (պարսկերեն՝ Ազրբայջան) նահանգը հիմնականում բնակեցված է թրքախոս էթնիկ տարրերով, որոնց շրջանում Թուրքիան ստեղծել է ակտիվ պրոթուրքական բջիջներ (պրոքսիներ), որոնք Թուրքիայից իջեցված հրահանգով իսկույն խոչընդոտներ են ստեղծում դեպի Հայաստան եկող և հակառակ ուղղությամբ փոխադրվող բեռների համար՝ փակելով ճանապարհները (վերջին թարմ օրինակը՝ 44-օրյա պատերազմի ընթացքում որպես օգնություն Հայաստան ուղարկվող բեռները տեղ չէին հասնում թրքախոս էթնիկ խմբերի կողմից ճանապարհների փակ լինելու պատճառով):

Ինչպես տեսնում ենք, արևելքից և արևմուտքից շրջափակված Հայաստանը հարաբերական կամ էլ պոտենցիալ շրջափակման մեջ է նաև հյուսիսից և հարավից, քանի որ քաղաքական դրդապատճառներից ելնելով՝ Թուրքիան, ակտիվացնելով իր պրոքսի շրջանակները նաև Իրանի և Վրաստանի ուղղություններով, կարող է խոչընդոտներ ստեղծել արտաքին աշխարհի հետ Հայաստանի ցամաքային կապի համար: Ստացվում է, որ Հայաստանը թուրքական շրջանակի մեջ է, և Թուրքիայի բարեհաճությունից է կախված միայն, թե որքանով կսեղմվի կամ կընդարձակվի այդ օղակը Հայաստանի պարանոցի շուրջ:

Վերադառնալով Վրաստանում Թուրքիայի ազդեցության տարածմանը՝ կարճ անդրադարձ կատարենք նաև մեսխեթցի թուրքերի վերաբնակեցման խնդրին: Թուրքիան ձգտում է մեսխեթցի թուրքերին վերադարձնելու Վրաստան, ինչի մասին վկայում է 2021 թ. նոյեմբերի 15-ին մեսխեթցի թուրքերի տեղահանման տարելիցի կապակցությամբ թուրքական իշխանամետ «Daily Sabah»[11] թերթում հրապարակված հոդվածը:

Ինչպես նշված է ԱԳՆ հաղորդագրության մեջ, *«Թուրքիան նշում է Խորհրդային Միության տարիներին ահիսկա (մեսխեթ) թուրքերի տեղահանման 77-րդ տարելիցը»:* Հայտարարության համաձայն՝ «1944 թ. նոյեմբերի 14-ին մոտ 100.000 ահիսկա թուրքեր աքսորվեցին Վրաստանի Մեսխեթի շրջանի իրենց պապենական հողերից Խորհրդային Միության հեռավոր շրջաններ»: Հայտարարության մեջ նաև ասվում է, որ *«Թուրքիան կշարունակի ուշադիր հետևել ահիսկա թուրքերի վերադարձին իրենց հայրենիք և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել նրանց հարազատներին»*[12]:

Մեսխեթցի թուրքերի վերադարձը խոչընդոտողները հիմնականում Վրաստանի իշխանություններն են: Վրացական վերնախավի հիմնական մտահոգությունն այն է, որ խիտ բնակեցված թյուրքալեզու մահմեդական փոքրամասնությունը կարող է բարձրացնել Թուրքիային միանալու հարց: Հաշվի առնելով Աբխազիայի և Հարավային Օսիայի կորուստը՝ կարելի է հասկանալ վրացական կողմի անհանգստությունը, մանավանդ որ Աջարիայում աճող թուրքական գործոնը նույնպես նման ռիսկերի համար պարարտ հող է ստեղծում: Իսկ Թուրքիան իր հերթին հայտնի է նրանով, որ օգտագործում է իր էթնիկ տարրերի գործոնը՝ համապատասխան հող նախապատրաստելով ռազմական ներխուժման համար (Սիրիա, Լիբիա, Հ. Կիպրոս):

Վրաստանում Թուրքիայի ջանքերով կառուցված գազատարներն ու նավթատարները, որոնք ադրբեջանական գազն ու նավթը փոխադրում են Թուրքիա, շրջանցում են Հայաստանը՝ պատճառաբանելով դա արցախյան հիմնախնդրով: Սակայն սա միակ խնդիրը չէր, որի պատճառով Թուրքիան հրաժարվում էր Հայաստանի հետ տնտեսական ու դիվանագիտական կապեր հաստատելուց: Հայաստանի անկախացումից ի վեր Թուրքիան մի քանի անգամ փորձել է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ՝ արցախյան հիմնախնդրի ադրբեջանանպաստ լուծման պահանջից զատ առաջ քաշելով նախապայմաններ, որոնք հակասում են Հայաստանի ազգային շահին: Դրանցից հատկապես կարևորվում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքականությունից հրաժարման և Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչման պահանջները: Ահա այն գինը, որը մենք պետք է վճարենք թվացյալ բարեկեցիկ և անհոգ կյանքի համար:

Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականությունը, հարաբերություններում դոմինանտության ձգտումը ցույց են տալիս, որ մենք ապրիորի չենք կարող շահեկան դիրքերում լինել՝ բացելով սահմանները և բարելավելով հարաբերությունները ի հաշիվ մեր ազգային շահերի:

Նման հնարավոր զարգացումների դեպքում Հայաստանն ամբողջությամբ կկորցնի իր սուբյեկտայնությունը և կվերածվի աշխարհագրական տարածքի, որի Հայաստան անվանումը կդառնա պայմանական և զուտ ձևական բնույթ կկրի: Հետևելով Ադրբեջանի ագրեսիվ հռետորաբանությանը և տեսնելով, թե ինչպես է նա ադրբեջաներենով անվանափոխում հայաստանյան մարզերի և քաղաքների անունները՝ չի բացառվում, որ ժամանակի ընթացքում մեր երկրի անվանումն էլ կարող է այլևս Հայաստան չլինել այնպես, ինչպես որ թուրքերը Արևմտյան Հայաստանն են կոչում «Արևելյան Անատոլիա»՝ ձգտելով արմատախիլ անե-

Թուրքական բիզնեսը Աջարիայում

լու հայության պատմական հիշողությունը: Ինչը կարող է խանգարել նրանց հետագայում նույն կերպ վարվել նաև Հայաստանի Հանրապետության անվան հետ՝ ընտելացնելով հայ ժողովրդին բարեկեցիկ, կուշտ ու թուլամորթ խաղաղությանը, և ստիպել հրաժարվել «կեղծ ազգային կատեգորիաներից»:

Որպեսզի հասկանանք, որ Թուրքիան երբեք չի հրաժարվում իր ազգային նպատակներից և համակարգված կերպով աշխատում է դրանք իրականացնելու ուղղությամբ, պետք է հայացք նետենք ոչ վաղ անցյալին: Ավելի քան 100 տարի առաջ նույնպես նմանատիպ մի «խաղաղության դարաշրջան» էր բացվում հայերի և թուրքերի միջև: Այն ժամանակ նույնպես Հայաստանը պարտություն էր կրել պատերազմում, և նրան պարտադրվում էր կապիտուլյացիոն փաստաթուղթ ստորագրել: Ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի՝ *«Հայաստանը զրկվում էր ընդհանուր զինապարտություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից. նա կարող էր ունենալ միայն 1500 զինվոր, 8 թնդանոթ և 20 գնդացիր: .... Դրա փոխարեն Թուրքիան պարտավորվում էր զինված օգնություն ցույց տալ Հայաստանին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին վտանգի դեպքում, եթե Հայաստանի կառավարությունը նման խնդրանքով դիմեր նրան: .... Թուրքիան իրավունք էր ստանում վերահսկել Հայաստանի երկաթուղիներն ու հաղորդակցման ճանապարհները, ռազմական միջոցառումներ ձեռնարկել Հայաստանի տարածքում: .... Պայմանագրով Հայաստանի մաս ճանաչված, բայց Թուրքիայի կողմից օկուպացված շրջանները պետք է ազատվեին Հայաստանի կողմից պայմանագրի բոլոր կետերի կատարումից հետո: .... Պայմանագրի մյուս հոդվածները վերաբերում էին ազատ տարանցիկ առևտրին, փախստականների վերադարձին իրենց բնակավայրերը, Հայաստանի իսլամադավան բնակչության իրավունքներին»*[13]:

Եթե համեմատելու լինենք 1920 թ. և այսօրվա իրավիճակները, ապա կտեսնենք, որ տարբերությունը մեծ չէ: 2020 թ. պատերազմից հետո մեզ պարտադրվեց կապիտուլյացիոն փաստաթուղթ ստորագրել: Այսպես կոչված «հաղթած» երկրի ղեկավարը հայտարարում էր, որ Հայաստանն այլևս զինված ուժեր չպետք է ունենա, քանի որ արցախյան հիմնախնդիրն արդեն ստացել է «արդարացի» լուծում, և Հայաստանը բանակի կարիք այլևս չունի: ՀՀ ղեկավարությունն էլ հայտարարել է, որ Հայաստանն անցում է կատարում պրոֆեսիոնալ բանակի ձևավորմանը, և պարտադիր զորակոչն աստիճանաբար պետք է դադարեցվի: Որպես հետևանք՝ Հայաստանն ունենալու է փոքրաթիվ բանակ, որն ի զորու չի լինի դիմակայելու արտաքին սպառնալիքներին:

Այսօր թշնամին, սողացող եղանակով զավթելով ՀՀ տարածքները և գրավելով ռազմավարական բարձունքները, ստացել է դիրքային առավելություն և վերահսկողության տակ վերցրել միջպետական նշանակության ճանապարհները: Նա պահանջներ է ներկայացնում, այսպես կոչված, «անկլավների» վերաբերյալ, որոնք նույնպես գտնվում են ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում, և որոնցով անցնում են Հայաստանի հաղորդակցության կարևոր ենթակառուցվածքները: Հետագայում այդ վայրերը պետք է բնակեցնեն իսլամադավան տարրերը, ինչը հանգեցնելու է հայ բնակչության դուրսմղմանը և ժողովրդագրական կազմի փոփոխությանը: «Խաղաղության դարաշրջան» նախագծի անվան տակ տեղի կունենա Հայաստանի աստիճանական վիլայեթացում:

Արդյոք մենք այսօր նույն իրավիճակում չենք, ինչպես 100 տարի առաջ, և «խաղաղության դարաշրջանի» ծրագիրը 100 տարի անց էլ Հայաստանի պետականության ոչնչացմանն ու հայկական գործոնի իսպառ վերացմանն ուղղված նույն թուրքական ծրագրի համակարգված և կազմակերպված իրականացումը չէ՞ արդյոք:

Թուրքը ոչ միայն յաթաղանով, այլև փափուկ ուժի միջոցով՝ «բամբակով է վիզ կտրում»: ■

Հղումներ

1. Տես Сергей Дружиловский: «Турция: привычка управлять», https://polit.ru/article/2006/01/11/druzhilovsky/ (մուտք՝ 20.10.2022):
2. Տես Joseph Nye «Soft Power»: In opposing hard power, soft power emphasizes not the ever-possibility of war, but the possibility of cooperation; not military power, but the power of ideas, https://www.e-ir.info/2013/03/08/joseph-nye-on-soft-power/ (մուտք՝ 20.10.2022):
3. Տես «Нелегальный турецкий бизнес», https://ria.ru/20190625/1555910276.html (մուտք՝ 20.10.2022):
4. 1997 թ. թուրքական կառավարությունն արգելեց մոլախաղերի բիզնեսը երկրում: Այնուհետ իշխանության եկած քաղաքական իսլամի հետևորդները հույս չթողեցին, որ մի օր այդ արգելքը կվերացվի: Թուրքական ընկերությունների համար հուսալի և եկամտաբեր ներդրումներ են դարձել Բաթումում մոլախաղերի բիզնեսի վրա ծախսվող միջոցները, իսկ Թուրքիայից դեպի Վրաստան և հատկապես Բաթում խաղային զբոսաշրջությունը դարձել է տարածաշրջանի զբոսաշրջության բիզնեսի հիմնական ուղղություններից մեկը:
5. Տես «Турецкая угроза: кто на самом деле скупает Грузию», https://sputnik-georgia.ru/20190625/Turetskaya-ugroza-kto-na-samom-dele-skupaet-Gruziyu-245721753.html (մուտք՝ 20.10.2022):
6. Տես Давид Табатадзе: «Турецкая экспансия продолжается в Грузии. Исламизация грузин не за горами», https://regnum.ru/news/society/2708584.html (մուտք՝ 20.10.2022):
7. Տես «Турция радикализирует азербайджанскую общину в Грузии», https://voskanapat.info/?p=40582&l=ru (մուտք՝ 20.10.2022):
8. Տես նույն տեղում:
9. Տես նույն տեղում:
10. Տես նույն տեղում:
11. Տես Turkey marks 77th anniversary of deportation of Ahiska Turks, https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkey-marks-77th-anniversary-of-deportation-of-ahiska-turks (մուտք՝ 20.10.2022):
12. Տես նույն տեղում:
13. «Ալեքսանդրապոլի պայմանագիր», https://tinyurl.com/ybf6qkvy (մուտք՝ 20.10.2022):

Իրանի կարմիր գծերն ու նախազգուշացումները

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Ս. թ. հոկտեմբերի 20-ին եռօրյա պաշտոնական այցով Հայաստան էր ժամանել Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը: Այցը բավական հագեցած էր և բովանդակալից: Ընդ որում, իրանական կողմն ամեն ինչ արել էր, որպեսզի Երևանից և Կապանից, որտեղ Աբդոլլահիանի այցի ընթացքում բացվեց Իրանի հյուպատոսությունը, ոչ միայն հնչեն հայ-իրանական հարաբերություններին վերաբերող հայտարարություններ, այլև հստակ գնահատականներ տրվեն տարածաշրջանի աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական զարգացումներին: Միայն այն փաստը, որ Իրանի արտգործնախարարի այցը Հայաստան տևել է 3 օր, արդեն իսկ շատ խոսուն է: Այդ ընթացքում նա հանդիպել է ՀՀ արտգործնախարարին, Ազգային ժողովի նախագահին և վարչապետին, մասնակցել Կապանում Իրանի հյուպատոսության բացման հանդիսավոր արարողությանը:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Իրանի Իսլամական Հանրապետությունը զգալիորեն մեծացրել է իր մասնակցությունը Հարավային Կովկասի քաղաքական զարգացումներին: Պատճառը պարզ է. պատերազմի ընթացքում մեր տարածաշրջանում փոխվել է ուժերի հավասարակշռությունը, առաջացել են նոր ռիսկեր, և պարզ է, որ Թեհրանը չէր կարող այդ ամենը անարձագանք թողնել: Առաջին ահազանգը պարսկական կողմի համար հնչեց հենց 2020 թ. սեպտեմբերի 27-ին, երբ պարզ դարձավ, որ Արցախի դեմ սանձազերծած նոր պատերազմում թուրք-ադրբեջանական դաշինքը ներգրավել է ոչ միայն ահաբեկչական կազմակերպությունների ներկայացուցիչների Մերձավոր Արևելքից, այլև հրեա հրահանգիչների Իսրայելից:

Պատերազմի ավարտից հետո պարզ դարձավ, որ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախ-Իրան սահմանագիծն ու դրան հարող տարածքները վերածվում են թուրքական բանակի ներկայության ու գործունեության կարևոր կենտրոնի, որտեղ որոշակի աշխատանքներ են իրականացնում նաև Իսրայելի զինված ուժերը: Ավելին՝ Ադրբեջանը չի բավարարվել Արցախի տարածքների օկուպացիայով և պատերազմից անմիջապես հետո գրավել է նաև ՀՀ որոշ տարածքներ՝ արգելափակելով Իրանն արտաքին աշխարհի հետ կապող՝ Հայաստանի միջպետական ճանապարհի որոշ հատվածներ: Սա էլ բավական չէր, Ադրբեջանի և Թուրքիայի իշխանությունները որոշեցին հաջորդ քայլն անել և գրավել Սյունիքի մարզը: 2021 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին թուրք-ադրբեջանական համապատասխան զորախումբն արդեն տեղակայված էր Նախիջևանում և Սյունիքին հարող՝ Արցախի օկուպացված տարածքներում: Եվ սա եղավ այն վերջին զարգացումը, որը ստիպեց իրանական կողմին Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության խնդիրներն այլևս չվստահել որևէ երրորդ կողմի, մասնավորապես՝ Ռուսաստանին, և լրջորեն զբաղվել այստեղ կուտակված խնդիրներով:

2021 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Իրանի Իսլամական Հանրապետությունը լայնամասշտաբ զորավարժություններ սկսեց Ադրբեջանի և Արցախի օկուպացված տարածքների սահմանին՝ հստակ ցույց տալով, որ Սյունիքին վերաբերող թուրք-ադրբեջանական սպառնալիքները կյանքի կոչելու փորձի պարագայում իրենք կարող են պատերազմ սկսել Ադրբեջանի դեմ և կանխել նրա այդ ծրագրերը: 2021 թ. աշնանը Իրանի Իսլամական Հանրապետությունը փաստացի հանդես եկավ որպես Հայաստանի տարածքային ամբողջականության երաշխավոր: Այդ ժամանակահատվածում Իրանը շատ բաց էր խոսում իր շահերի, մտադրությունների ու ծրագրերի մասին: 2021 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի այցը Թեհրան, որտեղ նա իրանական կողմից անվտանգության երաշխիքներ և երկկողմանի հարաբերությունները զարգացնելու խոստումներ ստացավ:

Պայմանավորվելով հայկական կողմի հետ՝ 2021 թ. հոկտեմբերի 6-ին Իրանի նորանշանակ արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանն արդեն Մոսկվայում էր, որտեղ Լավրովի հետ հանդիպման ընթացքում հայտարարեց, որ «Իրանը չի հանդուրժի տարածաշրջանի աշխարհաքաղաքական փոփոխությունները», ու նաև զգուշացրեց ռուս գործընկերոջը Հարավային Կովկասում գտնվող «ահաբեկիչների ու սիոնիստների մասին»: Պաշտոնական Թեհրանի՝ այդ շրջանում Ռուսաստանին, Ադրբեջանին և Թուրքիային ուղղված պահանջները շատ հստակ ու միանշանակ էին, ինչը թույլ տվեց այն ժամանակ նվազեցնել նոր պատերազմի հավանականությունը:

Իրանի նման ակտիվության երկրորդ փուլը մեկնարկեց արդեն սույն թվականին՝ ՀՀ արևելյան տարածքների ուղղությամբ սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի իրականացրած ագրեսիվ նոր գործողությունը

ներից հետո: Այս անգամ ևս իրանական կողմը լայնամասշտաբ զորավարժություն անցկացրեց Ադրբեջանի հետ սահմանին, որի ընթացքում իրանական ռազմական տեխնիկան պոնտոնային կամուրջներով անցավ Արաքս գետը: Ահա այդ զորավարժություններին հետևեց Իրանի արտգործնախարարի արդեն հիշատակված այցը Հայաստան, որի ընթացքում վերջինս կրկին հայտարարեց, որ «Իրանն իր անվտանգությունն է համարում Հայաստանի և տարածաշրջանի անվտանգությունը»:

Ավարտելով պաշտոնական այցը Հայաստան՝ Իրանի արտգործնախարարն իր թվիթերյան էջում առանձնացրել է ՀՀ վարչապետ Փաշինյանի հետ զրույցի կարևոր թեմաները՝

-Հարավային Կովկասի, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև սահմանի անվտանգությունը և օտարերկրացիների միջամտության բացառումը,

-հյուսիս-հարավ տարանցիկ երթուղու ապահովումը,

- երկու երկրների միջև առևտրի ու զբոսաշրջության զարգացումը:

Աբդոլլահիանը նաև նշել է, որ Հայաստան է այցելել, «որպեսզի Արարատ Միրզոյանի հետ երկարաժամկետ կտրվածքով երկու երկրների համար մշակենք մեր ճանապարհային քարտեզը»:

Իրանի արտգործնախարարի այս հայտարարություններում հստակ ընդգծվում են այն բոլոր առաջնահերթությունները, որոնք Իսլամական Հանրապետությունը հետապնդում է մեր տարածաշրջանում: Իսկ զորավարժությունների փաստը, այն էլ՝ զրահապատ զինտեխնիկայի՝ Արաքս գետն անցման քայլով, ի ցույց է դնում նաև Իրանի համար ի հայտ եկած սպառնալիքների հիմնական աղբյուրը՝ Ադրբեջանի Հանրապետությունը: Վերջինս, ի դեպ, չափազանց լարված է Իրանի գործողություններով և հակահրանական մեծ արշավ է սկսել ինչպես լրատվականքարոզչական, այնպես էլ միջազգային հարթակներում: Ադրբեջանի ողջ պետական ապարատը լծված է Իրանում սեպտեմբերին սկիզբ առած հանրային դրժգոհության ալիքի տարածմանը, իշխանությունների դեմ դուրս եկած քաղաքացիների հայտարարություններին հնչեղություն հաղորդելու և Իրանի իշխանությունների «հակաժողովրդավար» ու «անմարդկային» կերպարն ի ցույց դնելու գործին: Ավելին՝ իշխանամերձ մամուլի էջերում Ադրբեջանի իշխանությունները սպառնում են Իրանին՝ նշելով, որ կարող են անգամ տարածքային պահանջներ ներկայացնել և նույնիսկ հաջողություն ունենալ Ատրպատական նահանգն Իրանից անջատելու և Ադրբեջանին միացնելու հարցում:

Բայց եթե մի պահ վերանանք այս բոլոր սպառնալիքներից և օրվա ընթացիկ զարգացումների մանրակրկիտ ուսումնասիրությունից, կտեսնենք, որ մեր տարածաշրջանում ի հայտ եկած հիմնական խնդիրը, որին փորձում է դիմագրավել իրանական կողմը, աշխարհաքաղաքական վերափոխումների սկսված գործընթացն է: Թեհրանը լավ է գիտակցում, որ Հարավային Կովկասում, վերջին երեսուն տարիների համեմատ, Թուրքիայի ներկայությունն աննախադեպ ծավալների է հասել: Թեհրանում նաև հասկանում են, որ դա տեղի է ունեցել ի հաշիվ ռուսական ազդեցության նվազման: Խնդիրն Իրանի համար այն է, որ ավելի քան մեկ դար Հարավային Կովկասը համարել է ռուսական ազդեցության գոտի և, մեծ հաշվով, որևէ սպառնալիք այդ իրողության մեջ չի տեսել: Իրանը մշտապես զբաղված է եղել Մերձավոր Արևելքում, Ասիայում և Պարսից ծոցի ավազանում եղած խնդիրներով՝ համարելով, որ ռուսական ներկայությունը Հարավային Կովկասում անվտանգային լուրջ աջակցություն է

Չինաստանի և Իրանի արտգործնախարարները ստորագրում են ռազմավարական համագործակցության պայմանագիրը. 27-ը մարտի 2021 թ.

իրենց կենսական շահերի համար: 44-օրյա պատերազմից հետո այդ իրողությունը, ինչպես արդեն ասացինք, փոխվել է: Իրանում տեսնում են, որ Ռուսաստանն այս պահին չի կարողանում լուծել Հարավային Կովկասի անվտանգային խնդիրները: Ավելին՝ նրանք տեսնում են, որ թուրքական գործոնի ուժեղացմամբ տարածաշրջանում ի հայտ են գալիս նոր սպառնալիքներ, որոնք կարող են նույնիսկ կենսական վտանգ դառնալ Իրանի համար: Այս իրավիճակում պաշտոնական Թեհրանը պարզապես պարտավորված է իր հայացքն ուղղել դեպի մեր տարածաշրջան և ամեն ինչ անել, որպեսզի Հարավային Կովկասում ապահովի իր կոմունիկացիոն, տնտեսական, սոցիալական և ռազմական անվտանգությունը:

Այս հարցում իրանական կողմը, իհարկե, միայնակ չէ: Ռուսական աջակցությունից զատ՝ պաշտոնական Թեհրանն ունի նաև Չինաստանի աջակցությունը: 2021 թ. մարտի 27-ին Իրանի և Չինաստանի միջև ստորագրվել է «Ռազմավարական համագործակցության մասին» համաձայնագիր, որում առանձնահատուկ տեղ է հատկացված Հարավային Կովկասում երկու երկրների համագործակցության հնարավորություններին: Բայց նույնիսկ առանց արտաքին աջակցության՝ Իրանն այսօր ունի բավարար ներուժ՝ մեր տարածաշրջանում իր խնդիրների անհրաժեշտ նվազագույնը լուծելու համար: Հայաստանն այս իմաստով Իրանի համար չափազանց կարևոր է և կարող է լուրջ դերակատարում ստանձնել, մանավանդ որ դա բխում է հենց մեր երկրի շահերից: Խնդիրը, սակայն, այն է, որ Հայաստանի ներկայիս իշխանությունները կարծես այնքան էլ տրամադրված չեն Իրանի հետ հարաբերությունների զարգացմանը՝ նախապատվություն տալով Արևմուտքի հետ համագործակցությանը: Իսկ Իրանի ընկալմամբ՝ Արևմուտք նշանակում է նոր սպառնալիք: Պաշտոնական Թեհրանը բազմիցս հայտարարել է, որ չի հանդուրժի օտար երկրների զինված ուժերի ներկայությունն իր սահմաններին: Բացառություն է թերևս միայն Ռուսաստանը: Բայց նաև փաստ է, որ Արցախի օկուպացված տարածքներում իրավիճակն այսօր ամբողջությամբ վերահսկվում է Թուրքիայի բանակի կողմից: Եվ սա մեծ խնդիր է Իրանի համար:

Երևանում Իրանի արտգործնախարար Ամիր Աբդոլլահիանը հենց այս հարցն էր փորձում բացատրել Հայաստանի իշխանություններին: Թեհրանն ակնկալում է, որ Հայաստանն իր անվտանգային խնդիրները լուծի Ռուսաստան-Իրան-Չինաստան ճամբարի առաջարկներով ու ռեսուրսներով: Իրանական կողմը շատ բաց է խոսում այդ մասին՝ նաև հասկացնելով, որ եթե Հայաստանը չդիմադրի թուրք-ադրբեջանական էքսպանսիոնիստական քաղաքականությանը, ապա դա ստիպված կլինի անել հենց ինքը՝ Իրանը: Եվ այդ սցենարում պարսկական կողմը չի բացառում ոչինչ, անգամ սեփական զինված ուժերը Հայաստանի ու Ադրբեջանի տարածք մտցնելու հնարավորությունը:

Կանսա՞ արդյոք Երևանը իրանական նախազգուշացումներին և կառաջնորդվի՞ արդյոք նրանց առաջարկներով՝ ցույց կտա ժամանակը: Բայց այն, որ Հայաստանի իշխանությունները դեռևս նման որոշում չունեն, փաստ է: Ավելին՝ նույնիսկ ադրբեջանական հարձակումներն ու ՀՀ սուվերեն տարածքների գրավման հանգամանքը պատճառ չեն դարձել, որ Երևանն ավելի բաց ու բովանդակային համագործակցի Իրանի՝ այս հարցում մեր անվտանգության կարևոր երաշխավորներից մեկի հետ: Փաշինյանի վարչակազմը վախենում է, որ դա կարող է ազդել Արևմուտքի հետ իր հարաբերությունների որակի վրա: Եվ սա այն հերթական ապացույցն է, որ Փաշինյանն ու իր կառավարությունը անձնական շահը վեր են դասում պետական ու նույնիսկ երկրի կենսական շահերից: Ցավալի մի իրողություն, որից Հայաստանն արդեն քանի տարի չի կարող ձերբազատվել: ■

Իրանի գլխավոր հյուպատոսության բացումը Կապանում. 20-ը հոկտեմբերի 2022 թ.

Հակառուսական քարոզչության դրսևորումները ադրբեջանական հանրային խոսույթում

Արմեն Պետրոսյան
արևելագետ

Կարինե Մկրտչյան
իրանագետ

Ադրբեջանական ինքնությունը կառուցված է երեք հիմնական «հակա»-ների վրա՝ հակաիրանականություն, հակառուսականություն և հակահայկականություն, ուստի Ադրբեջանում պետական և հասարակական մակարդակներում նկատելի է արտաքին վախի և գոյաբանական սպառնալիքների ընկալման երեք տեսակ՝ «արմենոֆոբիա», «ռուսոֆոբիա» և «իրանոֆոբիա»[1]:

Ադրբեջանում հակառուսական տրամադրությունները կապված են վերջին 30 տարվա իրադարձությունների հետ՝ բխելով Արցախյան առաջին պատերազմից (1988-1994 թթ.), 1990 թ. հունվարի 20-ի դեպքերից:

Այսպես՝ սումգայիթյան ջարդերից հետո ադրբեջանցիների և հայերի միջև հարաբերությունները խիստ լարվել էին: 1990 թ. հունվարի 12-ին Բաքվի հեռուստատեսությամբ հնչեց «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության ներկայացուցիչների հայտարարությունն այն մասին, որ Բաքուն լցված է Ղարաբաղից եկած անօթևան ադրբեջանցի փախստականներով, իսկ հազարավոր հայեր ապրում են հարմարավետ բնա-կարաններում: Հաջորդ օրը Բաքվի Լենինի հրապարակում բազմահազարանոց հանրահավաք տեղի ունեցավ, որի ժամանակ հնչեցին «Փառք Սումգայիթի հերոսներին», «Կեցցե՛ Բաքուն առանց հայերի» կարգախոսները: Երեկոյան ցուցարարների մի մասը յոթօրյա ջարդեր սկսեց հայերի դեմ: Հայտնի է, որ այդ ջարդերից տուժել են նաև այլ ազգությունների բազմաթիվ ներկայացուցիչներ, այդ թվում՝ ռուսներ[2]: Ջարդերն ինքաբուխ չէին և կազմակերպված բնույթ էին կրում. դեռևս նախորդ տարվա վերջին Բաքվի բնակարանային գրասենյակները պահանջել էին բնակիչներին լրացնել հարցաթերթիկներ՝ իբր մթերքի կտրոններ ստանալու համար: Բաքվի դպրոցներից մեկի միջանցքում հետևյալ գրությունն էր փակցված. «ռուս ուսուցիչներ, գնացեք հավաքարարությամբ զբաղվեք»[3]:

1990 թ. հունվարի 19-ին ԽՍՀՄ զինված ուժերի նախագահության հրամանագրով Բաքվում արտակարգ դրություն մտցվեց: 1990 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը, անկարգություններով պայմանավորված, Բաքու մտցվեցին ԽՍՀՄ բանակի և ՊԱԿ-ի զորամասեր: Բաքվում խորհրդային զորքերի և ադրբեջանական զինված խմբերի միջև բախումներ տեղի ունեցան: Ադրբեջանի պաշտոնական տվյալներով՝ ադրբեջանական կողմն ուներ 150 զոհ: Ադրբեջանական քարոզչամեքենան այդ իրադարձությունները կոչեց «Սև հունվար»[4], որից հետո Բաքուն սկսեց ատելություն սերմանել ռուսների նկատմամբ: Շատ տների վրա հայտնվեցին «ռուսներն օկուպանտներ են», «ռուսները խոզեր են» գրությունները[5]: Քաղաք զորքեր մտցնելն ուժեղ հարված հասցրեց Ադրբեջանում խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության դիրքերին. տասնյակ հազարավոր ադրբեջանցի կոմունիստներ հրապարակայնորեն այրեցին իրենց կուսակցատոմսերը: 1990 թ. սկսեցին ռուսներին վոնդել բնակարաններից:

Ադրբեջանի ռուսական համայնքի նախագահ Միխայիլ Զաբելինի զեկույցի համաձայն՝ 2004 թ. երկրում մնացել էր շուրջ 168 հզ. ռուս, մինչդեռ 1979 թ. հունվարի 1-ին Ադրբեջանում բնակվում էր շուրջ 476 հզ. ռուս քաղաքացի[6]:

Հետխորհրդային Բաքուն այնպիսի արտաքին քաղաքականություն որդեգրեց, որի շրջանակներում Մոսկվայի հետ հարաբերություններին ոչ թե վերջ դրվեց, այլ դրանք հասցվեցին նվազ մակարդակի՝ պայմանավորված Թուրքիայի և Արևմուտքի հետ մերձենալու ձգտումներով: Հատկանշական է, որ Ադրբեջանում թերահավատորեն էին վերաբերվում Ռուսաստանի Դաշնության առաջին նախագահ Բորիս Ելցինին (1991 թ. դեկտեմբերի 25 - 1999 թ. դեկտեմբերի 31)՝ դա պատճառաբանելով հայերի նկատմամբ վերջինիս ունեցած համակրանքով: Այդ համատեքստում հարկ է

նշել, որ, տեղացիների մեկնաբանմամբ, Ադրբեջանն Արցախյան առաջին պատերազմում պարտվել է ոչ թե հայերին, այլ Ռուսաստանին[7]:

Արցախյան հիմնախնդրի շրջանակում ռուսների նկատմամբ ադրբեջանցիների հակակրանքի պատճառներից հարկ է նշել ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիրներ Անդրեյ Նույկինի, Ելենա Ալիխանյան-Բոնների և Գալինա Ստարովոյտովայի ներգրավվածությունը արցախյան հիմնախնդրի կարգավորման գործում: Ադրբեջանի հավաստմամբ՝ հենց նրանք են անցյալ դարի 80-ական թթ. երկրորդ կեսին չարագուշակ դեր խաղացել արցախյան հակամարտության բորբոքման և դեռ այն ժամանակ միութենական մամուլում իսկական հակաադրբեջանական հիստերիայի հրահրման մեջ: Բաքվի համոզմամբ՝ կոմիտեն ոչ միայն զբաղվում էր կուսակցական-պետական ապարատի և բարձրաստիճան զինվորականների կաշառմամբ, այլև մամուլում ու հեռուստատեսությամբ Ղարաբաղը Հայաստանին հանձնելու կոչեր էր անում, Ադրբեջանի տարածքում իրադարձությունները մեկնաբանում բացառապես հայերի օգտին և բացահայտորեն ապատեղեկատվություն տարածում խորհրդային հանրության շրջանում՝ անթաքույց ատելությամբ լցված լինելով ադրբեջանցիների հանդեպ[8]:

Ադրբեջանի հակառուսական հիստերիան թափ է հավաքել նաև 1993 թ. հրապարակված Ռուսաստանի նախագահի «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում միջնորդության մասին» հրամանից հետո, որի համաձայն՝ կրճատվում էին Ադրբեջանին և Հայաստանին զենքի մատակարարման ծավալները: Բաքվի մեկնաբանմամբ՝ այս հրամանն ուղղված էր նախ և առաջ Ադրբեջանի դեմ, ուստի Բաքվում հայտարարվեց, որ, ի հեճուկս վերոնշյալ հրամանի, Ռուսաստանը շարունակում է զինել Հայաստանին: Չնայած նման լուսաբանմանը՝ Ադրբեջանը 1993 թ. սեպտեմբերի 24-ին միացավ «Հավաքական անվտանգության մասին համաձայնագրին» (2002 թ. մայիսի 14-ի որոշմամբ այն վերանվանվեց «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն» (ՀԱ ՊԿ)՝ ստանալով միջազգային տարածաշրջանային կազմակերպության կարգավիճակ): Ադրբեջանի առաջ քաշած տեսակետն առ այն, որ Ռուսաստանի բարձրագույն քաղաքական և ռազմական ղեկավարության կողմից արցախյան հակամարտության ընթացքում հայկական կողմին զինտեխնիկայի մատակարարման ծավալը մեծացել էր, հանգեցրեց Բաքվի հետաքրքրության կիզակետից ՀԱՊԿ-ի դուրսմղմանը և ռազմական ոլորտում համագործակցության նպատակով դեպի Արևմուտք շրջվելու քաղաքականության որդեգրմանը: Որպես դրա շարունակություն՝ 1999 թ. ապրիլի 2-ին Ադրբեջանը դուրս եկավ ՀԱՊԿ կազմից և հենց այդ տարի դարձավ ՎՈՒԱՄ կազմակերպության անդամ պետություն, որի գործունեությանն ու հակառուսական կողմնորոշմանը դեռ անդրադարձ կկատարվի:

Ի լրումն վերը նշվածի՝ 2005 թ. ապրիլի 7-ին Ադրբեջան Բորիս Ելցինի ոչ պաշտոնական այցի առնչությամբ Բաքվի «Շարդ» օրաթերթը գրեց, որ Ադրբեջանում մեծամասնությունը դեմ էր նրա այցին, ինչը պատճառաբանվում էր հետևյալ հանգամանքներով՝ վերջինիս կառավարման շրջանում զենքի վաճառք Հայաստանին և Լևոն Տեր-Պետրոսյանին տված «թուրքերին նրա առաջ ծնկի բերելու» խոստում[9]:

Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ին, ապա այն, որպես այդպիսին, Ադրբեջանում ընկալվել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության գործիք, իսկ դրա ցանկացած հայտարարություն՝ Մոսկվայի կիսապաշտոնական դիրքի արտահայտում: 2009 թ. Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Գուդրաթ Հասանգուլիևը հանդես եկավ առաջարկով, ըստ որի՝ եթե Ռուսաստանը ճանաչեր Ադրբեջանի բացարձակ իրավունքը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, Ադրբեջանը նույնիսկ կարող էր միանալ ՀԱՊԿ-ին և թույլ տալ ռուսական ռազմաբազայի տեղակայում իր տարածքում: Այս առաջարկը թշնամաբար ընդունվեց Ադրբեջանի բնակչության մեծամասնության և քաղաքական էլիտայի մի մասի կողմից: 2009 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլուն ադրբեջանական հեռուստաալիքին տված հարցազրույցի ժամանակ նշեց, որ պետք է յուրաքանչյուր ադրբեջանցի ոտքի կանգնի, քանի որ եկել է հակամարտության լուծման պահը: Սակայն դեկտեմբերի 30-ին Ռուսաստանի ԶԼՄ-ներում հրապարակվեց ՀԱՊԿ քարտուղարության (գլխավոր քարտուղար՝ Նիկոլայ Բորդյուժա (2003 թ. ապրիլ - 2016 թ. դեկտեմբեր)) հաղորդագրությունը, ըստ որի՝ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելուն միտված դեսպանի խոսքը սադրանք է: Բաքվում այս հաղորդագրությունը մեկնաբանում էին, թե Ռուսաստանը չէր ցանկանում հակամարտության լուծումը, իսկ ՀԱՊԿ-ը այդ քայլով բացեիբաց ցույց էր տալիս իր աջակցությունը Հայաստանին: Պատահական չէ, որ 2010 թ. հունվարի 14-ին Ռուսաստանում Ադրբեջանի դեսպանությունը բողոքի նոտա հղեց Ռուսաստանի ԱԳՆ-ին և ՀԱՊԿ անդամ երկրների՝ Մոսկվայում տեղակայված դեսպանություններին: Փաստաթղթում ասվում էր, որ դեսպանի հայտարարությունը ոչ թե պատերազմի, այլ նվաճված հողերի ազատագրման կոչ էր, ուստի ՀԱՊԿ քարտուղարության հաղորդագրությունն անտեղի էր, չէր մտնում վերջինիս լիազորությունների մեջ և միջամտություն էր Ադրբեջանի ներքին գործերին: Կազմակերպության գլխավոր քարտուղարի հետագա հայտարարությունները ևս Բաքվում ընթերցվում էին ոչ բարեկամական տոնով: Այս համատեքստում Ադրբեջանի հակառուսական դեմքը երևում էր նաև նրանից, որ, Բաքվի համոզմամբ, ՀԱՊԿ մյուս անդամ երկրները չէին մասնակցի Հայաստանի կողմից Ադրբեջանի դեմ ռազմական գործողությանը, մինչդեռ ինչպես կազմակերպության քարտուղարությունը, այնպես էլ Ռուսաստանի ՊՆ առանձին գեներալներ չէին համապատասխանեցնում իրենց հայտարարությունները արտաքին քաղաքական իրավիճակի և ՀԱՊԿ մյուս անդամների հետ:

Ադրբեջանում արձանագրված հակառուսականության վերջին դրսևորումները պայմանավորված են 2020 թ. նոյեմբերի 9-ի հայ-ռուս-ադրբեջանական հա-

ԽՍՀՄ զորքերը Բաքվում. հունվար 1990 թ.

մատեղ հայտարարության հիման վրա Արցախում ռուսական խաղաղապահ առաքելության տեղակայման և դրա գործունեության իրողություններով: Համաձայն վերոնշյալ եռակողմ հայտարարության՝ խաղաղապահներն Արցախում տեղակայվում են 5 տարի ժամկետով, այնուհետև եթե կողմերից որևէ մեկը չի արտահայտում անհամաձայնություն, ժամկետն ինքնըստինքյան երկարում է ևս 5 տարով[10]:

Ռուս խաղաղապահների նկատմամբ Ադրբեջանի Հանրապետությունում գեներացված ատելության քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել ոչ միայն այդ երկրի պաշտոնական և փորձագիտական դաշտում, այլև հանրային մակարդակում:

Դեռևս 2021 թ. ապրիլին «Մուսավաթ» կուսակցության երիտասարդական կազմակերպությունը հակառուսական ակցիա անցկացրեց Բաքվում Ռուսաստանի դեսպանատան առջև՝ ՌԴ-ին մեղադրելով Արցախում պատերազմի ժամանակ «Իսկանդեր Մ» հրթիռների կիրառման մեջ, և այդ կապակցությամբ պարզաբանումներ պահանջեց: Նրանք հայտարարել են, որ այդ հրթիռի հարվածով Ռուսաստանը ագրեսիա է իրականացրել Ադրբեջանի դեմ: Բացի այդ՝ պնդում էին, որ ռուս խաղաղապահները խոչընդոտում են Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների տեղաշարժը: Ցուցարարների պաստառները հագեցած էին այնպիսի կարգախոսներով, ինչպիսիք էին՝ «Ռուսաստան, ձեռքերդ հեռու՛ Ղարաբաղից», «Ղարաբաղը Ադրբեջան է», «Լաչինը Ադրբեջան է», «Իվա՛ն, գնա՛ տուն»[11]: Հատկանշական է, որ ոստիկանությունն այս անգամ ոչ մի կերպ չի միջամտել ակցիային, ինչը վկայում է եթե ոչ իշխանությունների կողմից դրա ուղղակի կազմակերպման, ապա առնվազն նրանց աջակցության ու թողտվության մասին:

Ադրբեջանի քաղաքականության հակառուսական գիծն առավել ընդգծված տեսք է ստացել 2022 թ. ռուս-ուկրաինական պատերազմից ի վեր, մասնավորապես՝ մարտի վերջին օրերին: Հետաքրքրական է, որ Ուկրաինայում հատուկ գործողության մեկնարկից անմիջապես հետո նախկին խորհրդային հանրապետությունների փոխգործակցության նպատակով ստեղծված ՎՈՒԱՄ կազմակերպության (Ժողովրդավարության և տնտեսական զարգացման տարածաշրջանային կազմակերպություն՝ ստեղծված 1997 թ., որի անդամ երկրներն են Վրաստանը, Ուկրաինան, Ուզբեկստանը, Ադրբեջանը և Մոլդովան) գլխավոր քարտուղար Ալթայ Էֆենդիևը (Ադրբեջանի ԱԳՆ առավել փորձառու պաշտոնյաներից (Guam organization)) հանդես եկավ հակառուսական ուղերձով, որում մասնավորապես ասվում է, թե Ռուսաստանն իր շահերն առաջ է մղում «պատերազմների, հակամարտությունների, ուժի սպառնալիքի, հարկադրանքի, ահաբեկման, շանտաժի, ստի և զանազան մանիպուլյացիաների միջոցով»[12]: Եվ դա միակը չէ. ՎՈՒԱՄ-ի ֆեյսբուքյան[13] և թվիթերյան[14] էջերում հակառուսական հրապարակումները բազմաթիվ են:

Ռուս-ուկրաինական պատերազմին ընդառաջ Ադրբեջանի հակառուսական գիծը դրսևորվել է Արցախի Հանրապետության և խաղաղապահների դեմ իրականացված սադրիչ գործողություններով. խախտելով 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները և շրջանցելով ռուս խաղաղապահներին՝ 2022 թ. մարտին ադրբեջանցիները գրավեցին խաղաղապահ զորագնդի իրավասության դաշտում գտնվող Արցախի Հանրապետության Փառուխ գյուղը՝ փակելով օդային տարածքը ՌԴ ռազմական ինքնաթիռների համար, բացի այդ, օգտագործելով մեդիա ռեսուրսները[15], ատելություն և հակառուսականություն են տարածում:

Ռուսական խաղաղապահ զորախումբը հնարավորինս հեղինակազրկվում, վարկաբեկվում և նսեմացվում է նաև «Ֆեյսբուքի» ադրբեջանական տիրույթում:

Սկզբի թեմատիկ բաժանմամբ ներկայացվում են «Ֆեյսբուքի» ադրբեջանական տիրույթում տեղ գտած գրառում-մեկնաբանություններից առանձնացված հակառուսական բնույթի ակնառու օրինակները՝ շեշտը դնելով խաղաղապահների նկատմամբ վերաբերմունքի վրա:

- *Այսպես կոչված «Սև հունվարից» բիսող ընկալումները առհասարակ ռուսի և Ռուսաստանի վերաբերյալ.*

Ադրբեջանական «AzadliqRadiosu» կայքէջի՝ «Ռուս խաղաղապահները Ղարաբաղում, Մոլդովան ու Վրաստանը չկարողացան ռուս զինվորներին դուրս հանել իրենց տարածքներից» վերտառությամբ տեսանյութին կից մեկնաբանություններից. «Այնտեղ, որտեղ ռուսներն են, չի կարող խաղաղություն լինել: Նրանց հանդեպ վստահություն չկա», «Մենք Վրաստան ու Մոլդովա չենք, հենց որ համաձայնագրի ժամկետն ավարտվի, մեր գերագույն հրամանատարը կարող է ցանկացած ժամանակ նրանց դուրս անել», «Ռուսաստանի առաջ Սովետից մնացած Ադրբեջանը չէ, այլ Թուրանի բանակը», «Ռուսները ճնշել են մեզ, մի՛ մոռացեք հունվարի 20-ը»:

«Ադրբեջանում հունվարի 20-ի կոտորածն իրակա-

Հակառուսական ցույց Բաքվում

նացվել է ոչ թե Ամերիկայի, այլ Ռուսաստանի կողմից»:

«Ռուս և իրանցի գյավուրները միշտ եղել են մեր ժողովրդի թշնամիները, նրանցից բարեկամ չի կարող լինել մահմեդական երկրների համար: Անիծվի ռուս ֆաշիստ բանակը»:

Ադրբեջանական «Azadliq Qəzeti» կայքէջի՝ «Ղարաբաղում տեղակայված ռուս խաղաղապահներն ինչո՞վ են զբաղված» վերնագիրը կրող տեսանյութին կից մեկնաբանություններից. «Ռուսը կենդանության օրոք մեր նկատմամբ բարի մտադրություններ չի ունեցել»:

«Ռուսը մեզ երբեք չի օգնել: Հայկական արյունով այս անազնիվները Պուտինի մի մասնիկն են»:

«Ռուսը, պարսիկը և հայը Ադրբեջանի թշնամիներն են»:

«Ռուսները, որ երկրում էլ լինեն, այդ երկրում արյուն է թափվելու»:

Համաձայն վերոբերյալ կարծիքների՝ ռուսը, «Սև հունվարի» իրադարձություններով պայմանավորված, դիտվում է թշնամի, որն արյուն է թափում և անազնիվ է:

• Խաղաղապահները որպես Հայաստանի և Արցախի շահերի ներկայացուցիչներ.

«Ռուսաստանի հետ պայմանագրի գինը նույնիսկ ավելի ցածր է այն թղթի արժեքից, որի վրա այն գրվել է»:

«Ռուսաստանի հետ համաձայնագիրը նման է ջրի վրա գրված նամակի»:

«Ռուսաստանի Դաշնությունը 1995 թ. ճանաչել է Հայոց ցեղասպանությունը և դարձել կեղծ ցեղասպանությունը ճանաչած առաջին երկիրը: Հայաստանի ռազմաքաղաքական-ռազմավարական դաշնակիցը Ռուսաստանն է, այլ ոչ թե ԱՄՆ-ն: Հայաստանի օդային տարածքն ու ցամաքային սահմանները պաշտպանում է ոչ թե ԱՄՆ-ն, այլ Ռուսաստանը: Ղարաբաղում երկրորդ լեզուն ոչ թե անգլերենն է, այլ ռուսերենը: Ղարաբաղի հայերին ռուսական անձնագրեր են բաժանում, ոչ թե ամերիկյան: 1992-1993 թթ. ադրբեջանական հողերը օկուպացվել են Ռուսաստանի, այլ ոչ թե ԱՄՆ-ի աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ: Հայկական բանակին զինում է ոչ թե ԱՄՆ-ն, այլ Ռուսաստանը: Տարածաշրջանի երկրներին, այդ թվում՝ Ադրբեջանին, Պուտինն է անվանել քվազիպետություններ, այլ ոչ թե Բայդենը: Աբխազիան, Հարավային Օսիան, Մերձդնեստրը, Ղրիմը և Դոնբասը օկուպացվել են Ռուսաստանի, ոչ թե ԱՄՆ-ի կողմից: Այնպիսի հիմար ու վտանգավոր հայտարարություն, ինչպիսին է «Ղարաբաղը պետք է միանա Ռուսաստանին», հնչեց ոչ թե ԱՄՆ Կոնգրեսում, այլ Ռուսաստանի Պետդումայում»:

Ադրբեջանական «Azadliq Qəzeti» կայքէջի՝ «Ռուս «խաղաղապահները» Ղարաբաղ գրադ են տանում» խորագրով տեսանյութին կից մեկնաբանություններից. «Ղարաբաղը հանձնեցին Ռուսաստանին: Շունը գնաց, արջը եկավ», «Խաղաղապահները զենիթահրթիռային համակարգեր են տեղափոխում Ղարաբաղ. հասկանալի է, որ ռուսները ռազմաբազա են ստեղծում», «Որտեղ խաղաղապահը, այնտեղ տանկն ու գրադը», «Նրանք խաղաղապահներ չեն, օկուպանտներ են»:

«Խաղաղապահներն ահաբեկիչներին Ղարաբաղից դուրս բերելու փոխարեն պայմաններ են ստեղծում նրանց վերադարձի համար: Այս երեսպաշտ խաղաղապահների ներկայությունը Ղարաբաղում մեզ համար մեծ վտանգ է ներկայացնում: Ավելի ուշ նրանք Ղարաբաղին կարգավիճակ էլ կտան»:

Ադրբեջանական «AzPolitika» կայքէջի՝ «Ռուս խաղաղապահները անջատողականների համերգին են մասնակցում» վերնագրով տեսանյութին կից մեկնաբանություններից. «Շան ձագը շնից վատն է»:

«Եթե Ռուսաստանը չընկնի, ռուսները չեն հեռանա Ղարաբաղից: Շնագայլ ռուսական կայսրության ու ռուս լինելու ստոր խայտառակությունը դեռ առջևում է: Եվ դա նրանց գենետիկայի մեջ է»:

Ադրբեջանական «Caliber.az» կայքէջի՝ «Ռուս խաղաղապահները Լաչինում թալանով են զբաղված» խորագիրը կրող տեսանյութին կից մեկնաբանություններից. «Միջազգային մանդատ չունեցողները երբվանից են խաղաղապահ համարվում: Այսօր հայերն ամրացել են Խոջալուում ռուս շների օգնությամբ»:

«Ռուսը երբեք չի հեռանա, նա հանգիստ զբաղեցրեց իր տեղը: Ինչո՞ւ Ղարաբաղը չազատվեց օկուպացիայից, և հայերին փոխարինեցին ռուսները»:

Համաձայն երկրորդ կետի՝ ռուս խաղաղապահները աջակցում են հայերին և գործում ի վնաս Ադրբեջանի:

• «Խաղաղապահ» բառը չակերտների մեջ առնելը որպես հեգնանքի նշան.

«Ռուսները պատրաստվում են քանդելու ադրբեջանական ազգը, թող հեռանա ռուսական զորքը», «Ղարաբաղ մտցված ռուս «խաղաղապահները» զբաղված են Ղարաբաղում հայերի բնակեցմամբ, նրանք չեն աշխատի մեր օգտին», «Թող սադրիչ ու զավթիչ ռուսական զորքերը հեռանան մեր հողերից», «Քրիստոնյան մուսուլմանին ընկեր չի լինի»:

«Ռուս «խաղաղապահները» հայերին «այցի» են բե-

րում Քելբաջարի շրջանի տարածքում գտնվող ալբանական եկեղեցի: Ռուսաստանի պաշտպանության նախարարությունն այս եկեղեցին նշում է որպես Հայ առաքելական հնագույն եկեղեցի: Ռուս «խաղաղապահները» տուրիզմով են զբաղվում: Նրանք հայերին եկեղեցի են բերում էքսկուրսիայի: Ահա թե ինչ է տեղի ունենում, երբ բերում եք ռուսներին»:

Ադրբեջանական «Azadliq Qəzeti» կայքէջի՝ «Ռուս «խաղաղապահները» ուշադրություն են ցուցաբերում Ղարաբաղում հայ կանանց նկատմամբ» խորագրով տեսանյութին կից մեկնաբանություններից. «Շունը շանն է ուրախացնում: Շունը շան ոտքը չի տրորում: Ռուս զինվորները Ղարաբաղում չեն կարող մնալ: Պետք էր նախ իրենց ռուս կանանց նվիրել ծաղիկներ, թե չէ նրանց այլ տղամարդիկ են նվիրում: Ինչ բոցավառ սեր է. ծաղիկներ են տալիս, վառելափայտ կրում, օգնում, իսկ մեզ այստեղ շոու են ցույց տալիս: Թող ռուսներն իմանան, որ այստեղ իրենց մնալը ժամանակավոր է: Վաղ թե ուշ նրանք այստեղից կհեռանան: Ռուսական խոզը ցանկանում է իրեն քաղաքակիրթ ցույց տալ: Ռուսական բանակը եղել է այդ անազնիվների կողքին»:

«Այդ «խաղաղապահները» չեն կարողանա երկար մնալ: Հայ ազգը ապրելու է ադրբեջանական իշխանության օրենքներով ու կանոններով: Ադրբեջանը Ղարաբաղում կանի այն, ինչ ցանկանա: Ռուսաստանի գերիշխանության ավարտին քիչ է մնացել», «Ժամանակն է, որ Ռուսաստանը պառակտվի, Դերբենդն էլ ադրբեջանական հող է», «Դժբախտ առնետները ներխուժել են Կովկաս որպես օկուպանտ: Ռուսաստանը երբեք չի հեռանա Կովկասից դեպի դժոխք»:

«Ներկայումս Ղարաբաղում գործում է ոչ թե ԱՄՆ-ն, այլ ռուս «խաղաղապահները», որոնք հայերի հետ միասին մտնում են Լաչինի միջանցք և նույնիսկ Ադրբեջանի պետական սահմանը վերահսկում, անցկացնում են շքերթներ, հանդիսավոր միջոցառումներ, համատեղ զորավարժություններ, հիմնում հսկայական ռազմակայաններ»:

Այսպես ադրբեջանցիները նսեմացնում և հեղինակազրկում են ռուսին որպես խաղաղապահի՝ շեշտելով, որ ռուսից խաղաղապահ դուրս չի գա:

• Իշխանություններին ուղղված մեղադրանքները Արցախում ռուսական խաղաղապահ առաքելության համատեքստում.

Հակառուսականությանը զուգահեռ՝ հանրային մակարդակում առաջ են մղվում իշխող վարչախմբին ուղղված մեղադրանքները, որոնց ցայտուն դրսևորումներից են ներքոբերյալները.

«Մեզ մոտ ոչ ոք չի մեղադրում մեր կառավարությանը վախից, ուստի «հեռացեք, ռուսներ» են ասում ու գոռում: Ինչքան էլ Ի. Ալիևի, Հ. Ալիևի նման «ուժեղ» քաղաքական գործիչներ լինեն, ժողովուրդը դրանից միայն տուժում է: Բնակչության մեծ մասն աղքատ է»:

Ադրբեջանական «Azadliq Qəzeti» կայքէջի՝ «Ղարաբաղում տեղակայված ռուս խաղաղապահներն ինչո՞վ են զբաղված» վերնագիրը կրող տեսանյութին կից մեկնաբանություններից. «Իլհամ Ալիևը երկիրը վաճառել է Ռուսաստանին: Ալիևը Ղարաբաղը միացրել է ռուսական հողերին»:

Ադրբեջանական «Azadliq Qəzeti» կայքէջի՝ «Ռուս «խաղաղապահները» ուշադրություն են ցուցաբերում Ղարաբաղում հայ կանանց նկատմամբ» վերնագիրը կրող տեսանյութին կից մեկնաբանություններից. «Մեզ մոտ նստած իշխանության ներկայացուցիչները կաշառվեցին և ռուսներին թողեցին Ադրբեջանում»:

«Մեր ժողովուրդը տեսնում է, որ հայրենիքի զավակների կյանքի գնով ազատագրված հողերի կեսը զբաղեցված է ռուսներով, իսկ մյուս կեսը՝ չինովնիկներով: Փառատոն են անցկացնում, երբ ուզում են, «կեցցե» են բղավում, իսկ մեր մարդիկ կողքից հետևում են: Ռուսներին Ադրբեջան բերելը մեծ սխալ էր»:

Այսպիսով՝ ելնելով «Ֆեյսբուքի» ադրբեջանական տիրույթի՝ ռուս խաղաղապահներին առնչվող մեկնաբանություններից ու կարծիքներից՝ կարելի է եզրակացնել, որ ռուսների նկատմամբ ադրբեջանական հասարակության մեջ պաշտոնական և փորձագիտական մակարդակով ներարկված ատելությունն ու հակակրանքը տվել են ակնհայտ արդյունքներ: Այս պարագայում ռուսների նկատմամբ թշնամանքի արտահայտման թիրախում ռուս խաղաղապահներն են: Վերը նշվածից երևում է, որ Ադրբեջանն աստիճանաբար ավելի է կոշտացնում հակառուսական վարքագիծը:

Հետաքրքրական է, որ պաշտոնատար անձանց և փորձագետների հակառուսականության նետերը որոշ չափով ուղղվել են նաև իրենց իսկ դեմ՝ արտահայտվելով իշխանություններին ուղղված մեղադրանքներով, որոնք թեև մեկնաբանություններում զգալի աստիճանի չեն հասնում, բայց և այնպես, որոշակի վերաբերմունքի արտահայտումն են:

Հղումներ

1. Տես Տոնոյան Ա., Մի քանի դիտարկում Ադրբեջանում իրանոֆոբիայի դրսևորումների շուրջ, «Դրոշակ», Երևան, 2021, թիվ 7, էջ 23-25:
2. Տես Русские беженцы: Январские погромы в Баку были продуманной националистической акцией - Панорама | Новости Армении (panorama.am) (մուտք՝ 20.10.2022):
3. Նույն տեղում:
4. Տես «Սև հունվարը» որպես Ադրբեջանի հակահայկական ատելության քարոզի գործիք | ԱՐՄԵՆՊՐԵՍ Հայկական լրատվական գործակալություն (armenpress.am) (մուտք՝ 20.10.2022):
5. Տես Владислав Швед: "Баку в январе 1990 году кипел ненавистью к русским" (karabakhrecords.info) (մուտք՝ 20.10.2022):
6. Տես В Армении вспоминают жертв погромов в Баку в 1990 году - ИА REGNUM (մուտք՝ 20.10.2022):
7. Տես В ожидании союзника. Почему Россия не спешит помогать Армении в Карабахе - Фонд Карнеги за Международный Мир (carnegiemoscow.org) (մուտք՝ 20.10.2022):
8. Տես Бесславный конец кладбищенской вороны (armiya.az) (մուտք՝ 20.10.2022):
9. Տես Большинство азербайджанцев против приезда Бориса Ельцина в Баку - ИА REGNUM (մուտք՝ 20.10.2022):
10. Տես Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը - Մամլո հաղորդագրություններ - Լրատվություն - Հայաստանի Հանրապետության վարչապետ (primeminister.am) (մուտք՝ 20.10.2022):
11. «Иван – иди домой!»: кто «заказал» антироссийскую акцию в Баку? | Инфотека 24 (infoteka24.ru) (մուտք՝ 20.10.2022).
12. Տես https://twitter.com/GUAMSecretariat/status/1497466315887448069 (մուտք՝ 20.10.2022):
13. Տես Organization for Democracy and Economic Development - GUAM | Facebook (մուտք՝ 20.10.2022):
14. Տես https://twitter.com/guamsecretariat?lang=en (մուտք՝ 20.10.2022):
15. Տես https://www.trend.az/azerbaijan/politics/3573918.html

Իրար դեմ վարժանքներից՝ իրար հետ վարժանքի լուրեր. Իրան-Ադրբեջան ռազմական համագործակցության միտումները

Ժաննա Վարդանյան
Իրանագետ

Ավելի քան մեկ ամիս առաջ հայտարարվեց Իրան-Ադրբեջան համատեղ զորավարժության անցկացման հավանականության մասին: Հոկտեմբերի 3-ին Իրանի ԶՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերին և Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը հեռախոսազրույց են ունեցել[1]: Իրանական կողմի տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ կողմերը ողջունել են սահմանային զորավարժություն անցկացնելու գաղափարը:

Ադրբեջանական կողմի հաղորդագրության[2] մեջ զորավարժության մասին ոչինչ չէր նշվում, ինչից կարելի է ենթադրել, որ առաջարկն արել է իրանական կողմը: Նախքան հեռախոսազրույցի համատեքստին և զորավարժության անցկացման գաղափարին անդրադառնալը ներկայացնենք, թե ռազմական ոլորտում առ այս ինչ համագործակցություն է եղել Իրանի ու Ադրբեջանի միջև:

Զենքի վաճառք

Տարբեր տարիների թե՛ իրանցի և թե՛ ադրբեջանցի պաշտոնյաների կողմից հնչել են հայտարարություններ Իրանից Ադրբեջան զենքի մատակարարումների կամ դրանց հնարավորության մասին: Այսպես.

- 2014 թ. ապրիլին Զաքիր Հասանովին Թեհրանում ընդունելիս ԻԻՀ ԶՈՒ ԳՇ պետ Սեյյեդ Հասան Ֆիրուզաբադին հայտարարել է, որ ռազմական ոլորտում իր կարիքների մի մասը Ադրբեջանը բավարարում է Իրանի պաշտպանական արդյունաբերության արտադրանքները գնելով[3]: Սակայն զինվորականը չի մանրամասնել, թե կոնկրետ ինչ արտադրանքի մասին է խոսքը:
- 2015 թ. ապրիլին Բաքու կատարած այցի ժամանակ ԻԻՀ պաշտպանության նախարար Հոսեյն Դեհղանը հայտարարել է, որ Թեհրանը շահագրգռված է զարգացնելու համագործակցությունն ադրբեջանական կողմի հետ ռազմական ոլորտում և այդ համատեքստում պատրաստ է դիտարկելու նաև զենքի մատակարարումը ադրբեջանական բանակին[4]:
- 2016 թ. մայիսին Ադրբեջանի ԶՈՒ պահեստազորի գեներալ-լեյտենանտ Յաշար Այդեմիրովը հայտարարել է, որ Իրանը քաղաքական և ռազմական մեծ աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին: Նրա խոսքով՝ Իրանից ձեռք բերված «Դ-30Ա» հաուբիցները, 107 մմ-անոց համազարկային կրակի ռեակտիվ համակարգերը, 60 մմ-անոց ականանետերը և այլ զինատեսակներ հաջողությամբ օգտագործվել են Արցախում Ապրիլյան պատերազմի ժամանակ[5]: Գեներալի այս հայտարարության հավաստիությունը փաստող կամ հերքող որևէ տվյալ չկա:
- 2016 թ. հունիսին Իլհամ Ալիևը հայտարարել է, որ Ադրբեջանը զենքեր է գնում նաև Իրանից: «Ռուսաստանը միակ երկիրը չէ, որից մենք զենք ենք գնում: Գաղտնիք չէ, որ մեզ զենք են վաճառում նաև Թուրքիան, Իսրայելը, Բելառուսը, Իրանը և շատ այլ երկրներ, որոնք օգնում են մեզ արդիականացնելու մեր բանակը»,- ասել է Ադրբեջանի ղեկավարը[6]:
- 2017 թ. տված հարցազրույցի ժամանակ ԻՀՊԿ նախկին զինվորական Մանսուր Հաղիղաթփուրը հայտարարել է, որ Արցախյան 1-ին պատերազմի տարիներին զենքի մատակարարումների համար Ադրբեջանն Իրանին 30 մլն դոլար է պարտք[7]:

Հարկ է նշել, որ Իրանի զինված ուժերի ծանր սպառազինության մի մասը ամերիկյան արտադրության է կամ ստացվել է դրա արդիականացման միջոցով, իսկ ադրբեջանական բանակի ծանր սպառազինությունը հիմնականում խորհրդային-ռուսական արտադրության է: Եթե Ադրբեջանը Իրանից գնի ծանր սպառազինություն, ապա ստիպված է լինելու լրացուցիչ ենթակառուցվածքներ հիմնել այդ զինտեխնիկայի սպասարկման համար, ինչը ֆինանսապես ձեռնտու չէ:

Այլ հարց է, եթե Ադրբեջանը Իրանից գնի խորհրդային-ռուսական սպառազինություն: Այս դեպքում կողմերը հնարավոր է ավելի էժան գործարքներ կատարեն: Մյուս հավանական տարբերակն էլ այն է, որ Իրանը Ադրբեջանին կարող էր մատակարարել թեթև սպառազինություն կամ այնպիսի զինատեսակներ, որոնք նոր են իրենց տեսակով, ինչպես ռոբոտացված համալիրները:

Ըստ Ադրբեջանի Մերձավոր Արևելքի հետազոտությունների կենտրոնի ղեկավար, իրանագետ Սադրեդդին Սոլթանի՝ ավելի էժան լինելու և տեղափոխման հեշտության առումով Իրանից որոշ զինատեսակների

գնումը ձեռնտու է Ադրբեջանին: Բայց իրանագետն առավել հավանական է համարում համազգեստի գնումը: Պատճառն այն է, որ Իրանում նման ապրանքի արտադրության ինքնարժեքն ավելի ցածր է[8]:

Հայաստանի ՊՆ ղեկավարությունն էլ 2015-2017 թվականներին տեքստիլ և սննդի արդյունաբերության, շինարարության ոլորտներում համագործակցության հարցեր է քննարկել Իրանի ՊՆ կազմում գործող «Էթքա» կազմակերպության հետ:

Հարկ է նշել, որ 2015 թ. Իրանի և «5+1» երկրների միջև կնքված միջուկային համաձայնագրից հետո ընդունված ՄԱԿ-ի ԱԽ 2231-րդ բանաձևով Իրանին արգելվում էր մինչև 2020 թվականը գնել կամ վաճառել տանկեր, զրահամեքենաներ, խոշոր տրամաչափի հրետանային համակարգեր, մարտական ինքնաթիռներ, ուղղաթիռներ, հրթիռներ, հրթիռային համակարգեր և այլ ծանր տեխնիկա: Այս արգելքը սահմանվել էր դեռևս 2010 թ. ընդունված ՄԱԿ-ի ԱԽ 1929-րդ բանաձևով: Սա նշանակում է, որ նշված տարիներին Ադրբեջանը չէր կարող օրինական ճանապարհով Իրանից ծանր տեխնիկա գնել: Հավանական գնումներ Ադրբեջանը կարող էր կատարած լինել 1990-ականներին:

Ընդհանուր առմամբ, թեև Իրանի համար Ադրբեջանն իր զենքի արտահանումների պոտենցիալ շուկա է, սակայն, դատելով Ադրբեջանի ռազմական գործարքներից, Բաքուն Իրանը չի դիտարկում որպես զինտեխնիկայի գնումների առաջնային ուղղություն:

Իրանի շահագրգռությունը և հակասությունները

Ադրբեջանի անկախացումից հետո Բաքվի հետ ռազմական համագործակցությունը Իրանը կարևորել է՝ ելնելով հետևյալ գործոններից.

- Ադրբեջանը կարող էր օգտագործվել որպես Իրանի դեմ հարթակ, ինչը, ըստ Թեհրանի, պետք էր կանխել:
- Ելնելով Ադրբեջանի բանակի մարտական ուժից՝ պետք էր կանխատեսելի դարձնել նրա կողմից Իրանի դեմ հնարավոր գործողությունները:
- Իրանում արտադրված զինատեսակները ադրբեջանական շուկա հանելով կարելի էր գովազդել դրանք: Առաջին գործոնը հատկապես առաջնահերթություն է եղել 2003-2006 և 2010-2012 թթ., երբ, պայմանավորված Իրանի միջուկային խնդրով, այս երկրի շուրջ միջազգային իրադրությունը խիստ լարվել էր, և առաջացել էր ռազմական բախումների վտանգ: Այս տարիներին Իրանի վրա հարձակում գործելու հնարավոր հարթակներից է դիտարկվել նաև Ադրբեջանը, որով պայմանավորված՝ Իրան-Ադրբեջան հարաբերությունները խիստ լարվել էին[9]:

Լարվածությունն առաջին դեպքում առերևույթ թուլացավ 2005 թ. մայիսին Ադրբեջանի հետ կնքած պայմանագրով, որով կողմերը պարտավորվեցին չտրամադրել իրենց երկրների տարածքները որևէ երրորդ կողմի՝ մյուս երկրի անվտանգության դեմ ուղղված գործողություններ իրականացնելու համար: Իրանի, Ադրբեջանի և Կասպից ծովի ափամերձ մյուս երկրների միջև կասպյան ծովային տարածքի վերաբերյալ նմանատիպ համաձայնությունը և ռազմածովային ուժերի փոխայցերը թույլ տվեցին նվազեցնել լարվածությունը նաև ծովում:

Երկրորդ փուլում Բաքու-Թեհրան հարաբերությունները, ի թիվս այլ գործոնների, լարվել էին նաև այն պատճառով, որ Ադրբեջանը 1.6 մլրդ դոլարի սպառազինության գնման պայմանագիր էր կնքել Իսրայելի հետ: Գործարքի մասին հայտնի դառնալուց հետո Թեհրան է մեկնել Ադրբեջանի պաշտպանության այն ժամանակվա նախարար Սաֆար Աբիևը՝ վերահաստատելու, որ թույլ չեն տա՝ երրորդ կողմը Ադրբեջանի տարածքն օգտագործի ընդդեմ Իրանի[10]: Նույնը Ադրբեջանի պաշտպանության հաջորդ (գործող) նախարար Զաքիր Հասանովը կրկնել է 2014 թ. Իրան այցի ժամանակ[11]:

Ժամանակի ընթացքում Իրանի վրա միջազգային ճնշումը թուլացավ, ինչի գագաթնակետը եղավ 2015 թ. Իրանի և միջազգային վեցյակի միջև կնքված միջուկային համաձայնագիրը: Այս ամենի հետևանքով նվազեց Իրանի և նրա միջազգային հակառակորդների ռազմական բախման հավանականությունը, նաև Իրանի դեմ Ադրբեջանի տարածքի կիրառման վտանգը, լարվածությունը պարպվեց:

2020 թ. արցախյան պատերազմը և դրա հետևանքները

Իրավիճակը նորից սրվեց 2020 թ. արցախյան պատերազմի և դրանից հետո տեղի ունեցած գործընթացների հետևանքով: Պատերազմի օրերին Ադրբեջանի կողմից Իրանի սահմանների հարևանությամբ Թուրքիայի միջոցով բերված վարձկան ահաբեկիչների տեղակայումն ու թուրքական և իսրայելական ռազմատեխնիկայի կիրառումն Իրանին ստիպեցին ուժեղացնել սահմանների հսկողությունը, անցկացնել զորավարժություններ: Սակայն անգամ պատերազմից մեկ տարի անց Իրանի մտահոգությունները չվերացան, և դրանց արտահայտման բարձրակետը երկրի հյուսիսարևմտյան շրջաններում մի քանի զորավարժությունների անցկացումն ու Ադրբեջանին ուղղված սպառնալիքներն էին: Ու թեև 2021 թ. աշնանը Իրան-Ադրբեջան հարաբերություններում առաջացած գերլարվածությունը որոշակիորեն թուլացավ, սակայն այսօր էլ Թեհրանը շարունակում է Ադրբեջանից բխող վտանգներ տեսնել ու նախազգուշացնել այդ մասին:

Այս համատեքստում պատահական չէ, որ իրանական կողմը հիմա էլ շարունակում է հստակ ուղերձներ հղել Բաքվին և անընդունելի համարել տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունը: Ուշագրավ է, որ 2022 թ. հոկտեմբերին ԻՀՊԿ ցամաքային ուժերը հերթական զորավարժությունն անցկացրին երկրի հյուսիսարևմտյան սահմաններին[12]:

Հետպատերազմական զարգացումների համատեքստում Իրանին մտահոգում է նաև Իսրայել-Ադրբեջան խորացող համագործակցությունը: Հոկտեմբերի ընկզ-

Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Մոհամմադ Բաղերի

բին Իսրայելի պաշտպանության նախարար Բենի Գանցի՝ Բաքու այցը Իրանում դիտարկեցին հակահրանական՝ շեշտելով, որ այն երկու խնդիր էր լուծում՝ Հայաստանի դեմ պատերազմի սանձազերծում և Իրանի դեմ ադրբեջանական հարթակի օգտագործում[13]: Պատահական չէ, որ Իրանի ԶՈՒ ԳՇ պետի և Ադրբեջանի պաշտպանության նախարարի հեռախոսազրույցը համընկավ հենց Գանցի այցի հետ:

Նախադրյալները և ընթացիկ փուլը

Այս տարվա հոկտեմբերին երկու երկրների միջև համատեղ զորավարժության մասին խոսակցությունները պետք է դիտարկել հենց շարադրվածի համատեքստում: Իրան-Ադրբեջան ռազմական համագործակցության զարգացման, այդ թվում՝ զորավարժությունների անցկացման հարցը միշտ էլ քննարկվել է երկու երկրների համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների հանդիպումների, հեռախոսազրույցների ժամանակ: 2017 թ. Բաքվի և Թեհրանի միջև ռազմական համագործակցության հարցերով համատեղ հանձնաժողով է ստեղծվել[14], իսկ վերջին տասնամյակում ակտիվացել են նրանց պաշտպանական գերատեսչությունների ներկայացուցիչների փոխայցերը: Երկու երկրները մասնակցում են նաև միմյանց ռազմական արտադրանքի ցուցահանդեսներին և այլն:

Լինելով Կասպից ծովի ավազանի երկրներ՝ Իրանն ու Ադրբեջանը երբեմն նաև ռազմածովային ուժերի ներկայացուցիչների մակարդակով են փոխայցելություններ ու համատեղ վարժանքներ իրականացնում: Հետևաբար կարող ենք նշել, որ, որպես այդպիսին, ռազմական համագործակցության զարգացման և զորավարժությունների անցկացման գաղափարը նորություն չէ:

Այստեղ, սակայն, հարկ է ուշադրություն դարձնել, որ խոսվել է նաև սահմանային զորավարժության մասին, ինչն արդեն պետք է դիտարկել 2020 թ. արցախյան պատերազմից հետո Իրանի համար առաջացած նոր սպառնալիքների ու մարտահրավերների, մասնավորապես՝ սահմանից այն կողմ Իսրայելի ներկայության շուրջ մտահոգությունների համատեքստում:

Մյուս կողմից՝ իրանա-ադրբեջանական սահմանին, հիմնականում մաքսանենգների գործունեությամբ պայմանավորված, միշտ էլ խնդիրներ են եղել: Երկու երկրների սահմանապահների ու մաքսանենգների միջև հաճախ են փոխհրաձգություններ տեղի ունենում: Եղել են նաև միջադեպեր, երբ Ադրբեջանի սահմանապահները Իրանի քաղաքացու և սահմանապահի են սպանել, ինչը երկկողմ հարաբերություններում լարվածության սրման պատճառ է դարձել[15] Ընդհանուր առմամբ վերջին 10 տարվա ընթացքում նման միջադեպերի հետևանքով եղել է 20-ից ավելի զոհ, այդ թվում՝ սահմանապահների ու սահմանախախտների շրջանում:

Վերոնշյալից եզրակացնելով՝ կարելի է ենթադրել, որ Թեհրանը փորձում է վարել Ադրբեջանին «մոտ պահելու» և համագործակցության շնորհիվ իր դեմ հնարավոր գործընթացները չեզոքացնելու քաղաքականություն: ■

Հղում

1. Տես تاکید ایران بر ضرورت حل مسالمت‌آمیز مناقشه میان آذربایجان و ارمنستان, IRNA, 03.10.2022, https://www.irna.ir/news/84903413/ (մուտք՝ 15.10.2022):
2. Տես Zakir Həsənov İran ordusunun Baş Qərargah rəisi ilə telefonla danişib, Report, 03.10.2022, https://report.az/herbi-xeberler/azerbaycanin-mudafie-naziri-ile-iran-silahli-quvvelerinin-bas-qerargah-reisi-arasinda-telefon-danisigi-olub/ (մուտք՝ 15.10.2022):
3. Տես بخشی از نیاز های دفاعی جمهوری آذربایجان از ایران تامین می‌شود, Farsnews, 15.04.2014, https://www.farsnews.ir/amp/13930126000512 (մուտք՝ 15.10.2022):
4. Տես Իրանի պաշտպանության նախարարի ադրբեջանյան այցի առաջին օրվա ամփոփում, Razm.info, 20.04.2015, https://razm.info/63149 (մուտք՝ 15.10.2022):
5. Տես Яшар Айдемиров: Военная помощь наших иранских братьев незаменима для нас, Oxu.az, 03.05.2016, https://ru.oxu.az/politics/130043 (մուտք՝ 15.10.2022):
6. İlham Əliyev silah aldığımız ölkələrin adını açıqladı, Sabahinfo, 07.06.2016, https://www.sabahinfo.az/posts/detail/bilham-eliyev-silah-aldigimiz-olkelerin-adini-aci-qladib-10070 (մուտք՝ 15.10.2022).
7. Տես باکو 30 میلیون دلار از باب تسلیحات جنگ قراباغ به ایران بدهکار است, Azariha, 04.04.2017, http://azariha.org/1979/ (մուտք՝ 15.10.2022):
8. Տես Зачем иранский генерал приезжал в Азербайджан?, Vzglyad.az, 22.02.2018, https://vzglyad.az/news/103811/ (մուտք՝ 15.10.2022):
9. Տես RPT-INSIGHT-Azerbaijan eyes aiding Israel against Iran, Reuters, 01.10.2012, https://www.reuters.com/article/iran-israel-azerbaijan-idUSL6E8KU0YE20121001 (մուտք՝ 15.10.2022):
10. Տես Азербайджан не станет площадкой для нанесения ударов по Ирану, заверил министр обороны Азербайджана, https://russian.eurasianet.org/node/59226# (մուտք՝ 15.10.2022):
11. Տես Zakir Hasanov: Israel will not attack Iran through Azerbaijan, Turan, 15.04.2014, https://www.turan.az/ext/news/2014/4/free/politics_news/en/20962.htm (մուտք՝ 15.10.2022):
12. Տես «فردا؛ آغاز مرحله اصلی رزمایش اقتدار نیروی زمینی سپاه با شعار «ایران مقتدر, Tasnim, 16.10.2022, https://www.tasnimnews.com/fa/news/1401/07/24/2789089/ (մուտք՝ 15.10.2022):
13. Տես اهداف ضد ایرانی گانتز از سفر به باکو, Rahbordemoaser, 06.10.2022, https://rahbordemoaser.ir/fa/news/153157 (մուտք՝ 15.10.2022):
14. Տես Զևավորվել է Իրանի և Ադրբեջանի պաշտպանական համագործակցության հարցերով համատեղ հանձնաժողով, Razminfo, 24.10.2017, (մուտք՝ 15.10.2022):
15. Տես سفیر جمهوری آذربایجان به وزارت خارجه احضار شد, 21.10.2011, https://www.mehrnews.com/news/1438994/ (մուտք՝ 15.10.2022):

Ի՞նչ եղավ, և դեռ ի՞նչ է լինելու արևելաեվրոպական ջունգլիներում

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

Աշխարհում Արևմուտքի տեղի ու դերի վերաբերյալ օրերս ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի և ԵՄ արտգործնախարար Ժոզեֆ Բորելի արտահայտած մտքերը բացահայտեցին, այսպես կոչված, լիբերալ գլոբալիստների գաղափարական-քաղաքական նպատակները և դրանց հասնելու համար ծրագրած քայլերը:

Է. Բլինքենը շատ պարզորոշ և անկեղծորեն բացատրեց, որ աշխարհը պետք է կազմակերպել և կառավարել քաոսից խուսափելու համար («Ճշմարիտ, Ճշմարիտ եմ ասում» կարող էր շարունակել նա): Իսկ ո՞վ պետք է այն կազմակերպի ու կառավարի, եթե ոչ Միացյալ Նահանգները: Հո այդ գործը չե՞ն թողնելու չինացիների հույսին: Դա ԱՄՆ-ի գործն է, և բոլորը պետք է ընդունեն աշխարհը կազմակերպելու ամերիկյան խաղի կանոնները: Իսկ Ժ. Բորելը նույնքան անկեղծորեն արտահայտեց այն միտքը, որ միացյալ Եվրոպան մի խնամված այգի է, որտեղ բնակվում է մարդկության ամենաառաջադեմ հատվածը: Այդ այգին շրջապատված է ջունգլիներով, որոնցում բնակվում են վայրենության տարբեր աստիճանների վրա գտնվող ցեղախմբեր: Նա խոստովանեց, որ այդ այգին ծաղկել ու բարգավաճել է ռուսական էժան գազի և չինական աշխատուժի, այսինքն՝ ջունգլիների հաշվին: Ջունգլիները պետք է մշտապես հոգ տանեն ու խնամեն այգին, պաշտպանեն այն, հարկ եղած դեպքում՝ իրենց կյանքի գնով, ինչպես դա անում է ջունգլիների ուկրաինական հատվածը:

Երբ տարիներ առաջ որոշ վերլուծաբաններ ակնարկում էին Արևմուտքի նման նպատակների մասին, նրանց մեղադրում էին կոնսպիրոլոգիական հերյուրանքներ տարածելու մեջ: Սակայն Էնթոնիի և Ջոզեֆի նման ազնիվ դիվանագետները լիբերալիստական ուղղամտությամբ (չպետք է դա որակել որպես ցինիկություն) բացեիբաց խոսեցին այդ մասին: Սակայն ջունգլիներում կան պետություններ, որոնք չեն ընդունում այդ ազնիվ նպատակներն ու գնահատականները և դիմադրում են դրանց իրականացմանը: Դրանցից առավել համառը Ռուսաստանն է իր նախագահ Վ. Պուտինի հետ: Հեշտ չէ ռուսներին կարգի հրավիրել, բայց պետք է: Գործը սկսելու համար, սակայն, նախ պետք էր կարգի հրավիրել արևմտաեվրոպական դաշնակիցներին, մասնավորապես՝ Գերմանիային, որոնք առևտրատնտեսական ակտիվ գործակցության մեջ էին ՌԴ-ի հետ, շահում էին դրանից ու հարստանում: Միացյալ Եվրոպան հսկայական գումարներ էր ծախսում էկոլոգիական, ԼԳԲՏ անձանց իրավունքների, մուլտիկուլտուրալիզմի ծրագրերն իրականացնելու և աշխարհով մեկ տարածելու համար, բայց չնչին միջոցներ էր հատկացնում ինչպես սեփական, այնպես էլ ՆԱՏՕ-ի ռազմական բյուջեին: Եվրոպական երկրներից առաջատար Գերմանիայի ղեկավարությունը, ի դեմս Ա. Մերկելի, մտադիր չէր այն աստիճան վատթարացնել

հարաբերությունները ՌԴ-ի հետ, որ, հասցնելով խզման, զրկեր իր երկիրը ռուսական էներգետիկ ռեսուրսներից: Մերկելի, ինչպես և ԵՄ որոշ երկրների ղեկավարության վարած քաղաքականությունը խանգարում էր գլոբալիստներին համախմբելու Եվրոպան Ռուսաստանի դեմ: Նրանց փոխարինեցին երդվյալ լիբերալները, որոնք պատրաստ էին հանուն գլոբալիզմի հաղթանակի մի կողմ դնելու իրենց երկրների շահերը և ձևավորելու հակառուսական, հակապուտինյան միասնական ճակատ: Ինչ վերաբերում է «առաջադեմ մարդկությանը» և մասնավորապես առավել «առաջադեմ եվրոպացիներին», որոնք վախենում էին, որ «եվրոպական այգին» կարող է ցրտահարվել առանց ռուսական գազի և կորցնել բերքատվությունը, ապա նրանց համոզեցին, որ զրկանքները ժամանակավոր են, պատերազմը կընթանա միայն Ուկրաինայի տարածքում և ուկրաինացիների ձեռքով: Փոխարենը հաղթանակից հետո Ռուսաստանի հարստությունները կանցնեն իրենց տրամադրության տակ:

Ռուսաստանի վերաբերյալ արևմտյան հանրության գիտակցության մեջ լիբերալների ներարկած կանխադրույթները՝ «ռուսները իրենց էությամբ ագրեսիվ են, խաբեբա և ոչ քաղաքակիրթ», «Պուտինը դիկտատոր է ու կորուպցիոներ» և, ըստ Ջ. Բայդենի, մարդասպան («Murderer»), հնարավորություն են տալիս էլեկտրոնային տեղեկատվական միջոցներով շատ արագ տարածելու ռուսատյաց և հակապուտինյան ցանկացած կեղծիք և ձևավորելու իրենց անհրաժեշտ հասարակական կարծիքը այս կամ այն իրադարձության վերաբերյալ: Այսինքն՝ եթե ռուսներն ագրեսիվ են ու խաբեբա, ուրեմն ինչպես չհավատանք, որ գրավված տարածքներում նրանք բռնաբարում են հղի կանանց և գողանում ուկրաինացիների լվացքի մեքենաներն ու զուգարանակոնքերը: Եթե Պուտինը մարդասպան է, ուրեմն ինչպես չհավատանք, որ նա է հրահանգել պայթեցնել հյուսիսային գազատարի խողովակները և պատրաստվում է միջուկային հարված հասցնելու Ուկրաինային, իսկ հետո էլ՝ Եվրոպային: Այսինքն՝ ճիշտ

է ասում Ժոզեֆը՝ դրանք ջունգլիների վայրենիներ են:

Անդրադառնանք Արևմուտքի վերոնշյալ ծրագրերի իրականացման գործընթացին և այն իրադարձություններին, որ տեղի են ունենում արևելաեվրոպական «ջունգլիներում»:

Միացյալ Նահանգների կողմից նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացը փուլ առ փուլ շարունակվում է և ընթանում համաձայն մշակված ու հաստատված ծրագրի: Ընթանում է հաջողությամբ: Այդ հաջողություններից վերջինը Ռուսաստանին Ուկրաինայի դեմ պատերազմի մեջ ներքաշելն էր: Ճիշտ է, շատ ջանք ու եռանդ պահանջվեց դրան հասնելու համար: Նախ՝ ամերիկյան իշխանությունները հեղաշրջման ճանապարհով Ուկրաինայում իշխանության բերեցին իրենց իսկ աճեցրած և իրենցից ամբողջությամբ կախման մեջ գտնվող լիբերալներին: Որպես վերջիններիս հենարան օգտագործեցին ֆինանսական կախվածության մեջ գտնվող ուկրաինացի օլիգարխներին, որոնց կապիտալներն արևմտյան բանկերում են ներդրված, և հատուկ ծառայությունների վաղուց հավաքագրած բանդերական ծայրահեղականներին: Սրանց՝ ֆաշիստական բնույթի մարտական ջոկատները օգտագործեցին հասարակության մեջ ուկրաինական ազգայնամոլական և հակառուսական տրամադրություններ սերմանելու և բորբոքելու համար: Դրանք նաև պետք էին իշխանության եկած լիբերալներին՝ վերահսկելու, խթանելու ուկրաինացիների պայքարը ռուսների դեմ: Հեղաշրջումից անմիջապես հետո ութ տարի շարունակ զինեցին ուկրաինական բանակը, վարժեցրին սպայական կազմը, պատրաստեցին դիվերսիոն և հետախուզական խմբեր, մշակեցին բախման մարտավարությունն ու ռազմավարությունը: Մի խոսքով՝ ծրագրել էին պատերազմ ուկրաինացիների ու ռուսների միջև և հետևողականորեն տանում էին դրան: Բայց ռուսները համառորեն հրաժարվում էին հարձակվելուց և ամեն ինչ անում հարցերը բանակցությունների միջոցով լուծելու համար: Պուտինի համառությունը կոտրելու համար ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ղեկավարությունը հայտարարեց, որ չեն կարող մերժել Ուկրաինային որպես սուվերեն պետություն անդամակցելու Հյուսիսատլանտյան կազմակերպությանը: Դրա հետ մեկտեղ նախապատրաստել էին ուկրաինական բանակի հարձակումը Դոնբասի և Լուգանսկի ինքնահռչակ հանրապետությունների վրա: Եթե ռուսները չկանխեին այդ հարձակումը հատուկ ռազմական գործողություն սկսելով, Դոնբասը կհայտնվեր Արցախի այսօրվա վիճակում: Ինչևիցե, ԱՄՆ-ի կողմից պատվիրված ու նախագահ Բայդենի կողմից բազմիցս հայտարարված ռուսական ագրեսիան Ուկրաինայի դեմ վերջապես սկսվեց: Պլանավորելով այս պատերազմը՝ ԱՄՆ լիբերալ-գլոբալիստական ղեկավարությունը, ի թիվս բազմաթիվ քաղաքական, ռազմական, հետախուզական, ֆինանսատնտեսական հաշվարկների և վերլուծական եզրակացությունների, կիրառում է կանխագծման մեկ այլ՝ տիպիկ ամերիկյան (կարելի է ասել հոլիվուդյան) մեթոդ ևս՝ «արա՛ ճիշտ այնպես, ինչպես ես եմ անում», կամ այս դեպքում՝ «ռուսները Ուկրաինայի հետ կվարվեն այնպես, ինչպես կվարվեինք մենք»: Այսպես, օրինակ, դեռ Վ. Պուտինը չէր էլ հայտարարել Ուկրաինայի դեմ հատուկ ռազմական գործողություններ սկսելու մասին, արևմտյան ԶԼՄ-ները արդեն տարածում էին Պենտագոնի և ՆԱՏՕ-ի ռազմավարների պնդումները, թե ռուսների բլիցկրիգը մի քանի օրում ծնկի կբերի ուկրաինացիներին՝ չնայած նրան, որ ո՛չ Պուտինը, ո՛չ ռազմական ղեկավարությունը նման հայտարարություններ երբևէ չէին արել: Պարզապես, ըստ վերը նշված մոտեցման, վաշինգտոնյան ռազմագետները ենթադրում էին, որ ռուսները կվարվեն Ուկրաինայի հետ այնպես, ինչպես իրենք վարվեցին Իրաքի, Սերբիայի և Լիբիայի հետ՝ վարելով նրանց դեմ տոտալ պատերազմ: Բայց արի ու տես, որ Պուտինը կարգադրել էր հատուկ ռազմական գործողությունն իրականացնել այնպես, որ հնարավորինս չվնասեն քաղաքացիական կառույցներն ու խուսափեն մարդկային զոհերից և, կոտրելով ուկրաինական բանակի դիմադրությունը, ազատագրեն Ուկրաինան դրածո իշխանություններից և բանդերական ծայրահեղականներից: Համենայնդեպս, գործողությունը սկսելուց առաջ նա այդպես ձևակերպեց ռազմական ներխուժման նպատակները և հույս ուներ դրանց հասնելու նաև բանակցությունների միջոցով: Չնայած որ ռուսական զորքերը գրեթե շրջափակել էին Կիևը, կառավարությունն էլ փախել էր մայրաքաղաքից, Պուտինը կանգնեցրեց զորքերի առաջխաղացումը, քանի որ դեռ փետրվարին սկսված ռուս-ուկրաինական բանակցություններում կողմերը շատ մոտ էին համաձայնության գալուն: Արդեն մարտի 29-ին Ստամբուլում ուկրաինական կողմը հայտարարեց, որ համաձայն է ընդունել ապամիջուկային ու չեզոք երկրի կարգավիճակ և կիրաժարվի զանգվածային ոչնչացման զենք արտադրելուց ու տեղակայելուց: Դրա դիմաց ՌԴ պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ լարվածությունը թուլացնելու, բանակցություններում փոխադարձ վստահության մակարդակը բարձրացնելու

Ուկրաինական իշխանափոխությունը. Կիև 2014 թ.

նպատակով ետ կքաշի զորքերը Կիևից ու Չերնիգովից: Ռուսների վարքագիծը զարմացրեց և զայրացրեց Արևմուտքին (ի դեպ, դրանից դժգոհեցին նաև շատ ռուս վերլուծաբաններ): Այդ ամենը դուրս էր նրանց ծրագրից: Ռուսների ետ քաշվելուն պես, ինչը արևմտյան ԶԼՄ-ները անմիջապես ներկայացրին որպես ռուսական բլիցկրիգի տապալում, փառապանծ ուկրաինական բանակի կողմից «ազատագրված» Կիև ժամանեց հավաքական Արևմուտքը ներկայացնող Բորիս Ջոնսոնը, որը հիշեցրեց Զելենսկուն, որ չի կարելի խախտել պայմանավորվածությունները և պետք է կռվել «մինչև վերջին ուկրաինացին»: Բորիսը բունկերից նոր դուրս եկած, չսափրված, զինվորական շապիկ ու վարտիք հագած, վախվորած ու մտամոլոր մարդու դիմախաղով (ծանոթ պատկեր է չէ՞) «Վոլոդիմիրին» դուխ տվեց (հայերեն ասած՝ ոգևորեց), խոստացավ ֆինանսական օգնություն և ժամանակակից հզոր զինատեսակներ մատակարարել: Մի խոսքով՝ վախը չափեց ու գնաց: Շատ չանցած՝ Ուկրաինայի կառավարությունն օրենքով արգելեց բանակցություններ վարել ՌԴ-ի հետ: Ամառվա ընթացքում ստացած արևմտյան ռազմական օգնությունը հնարավորություն տվեց ուկրաինացիներին հակահարձակման անցնելու և որոշ ուղղություններում հաջողության հասնելու: Արևմուտքում դա ներկայացվեց որպես գրեթե ուկրաինացիների հաղթանակ, իբր թե մնում է մի հարված էլ հասցնել, և Պուտինի իշխանությունը կտապալվի: Մինչդեռ Վ. Պուտինը, անդրադառնալով հատուկ ռազմական գործողությունների վերաբերյալ այդ գնահատականներին, ասաց. «….մենք դեռ չենք էլ սկսել»: Արդեն հոկտեմբերի սկզբին ռուսական բանակի գրաված տարածքների բնակչությունը արտահայտեց իր ցանկությունը՝ միանալու «պարտված» Ռուսաստանին: «Առաջադեմ» ԶԼՄ-ների պնդումները, թե Ուկրաինան հաղթում է, և տնտեսական պատժամիջոցների հետևանքով ՌԴ ռազմաարդյունաբերական համալիրը չի կարողանում ապահովել բանակը, չեն կարող քողարկել իրականությունը, որ «հաղթող» Ուկրաինան կորցրեց իր տարածքների մեկ հինգերորդ մասը, գրեթե ողջ արդյունաբերությունը, տասնապատիկ ավել զոհեր է տվել, քան ռուսները (հիշո՞ւմ եք 2 տարի առաջ ամեն օր հնչող «հաղթելու ենք» բացականչությունը): Իսկ ելնելով նրանից, որ վերջերս ՌԴ-ում զորակոչվեց ևս 300 հազար զինվոր, և բանակն ապահովվեց նոր՝ ավելի հզոր զինատեսակներով, կարելի է ենթադրել, որ ռուսները հոկտեմբերյան հարաբերական դադարից հետո պատրաստվում են, ինչպես կասեր Պուտինը, «սկսելու»: Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության առաջին փուլն ավարտվեց: Կողմերից ով ի՞նչ շահեց և ի՞նչ կորցրեց: Ուկրաինայի համար դժվար է նշել որևէ շահեկան ձեռքբերում: Կորուստները բազմաթիվ են և, ինչպես այսօր ընդունված է ասել, էկզիստենցիալ: Սոցիալ-տնտեսական համակարգը խարխլված է և գոյատևում է արևմտյան ֆինանսական դոտացիաների շնորհիվ, պետական պարտքը վաղուց գերազանցել է ՀՆԱ ծավալը: Կես տարվա ընթացքում միլիոնավոր քաղաքացիներ հեռացել են երկրից, իսկ մնացածները պատկերացում անգամ չունեն, թե ինչ է սպասվում իրենց, մանավանդ մոտեցող ձմռանը: Պետական ապարատը կորցրել է իր գործառույթների մեծ մասը՝ կարևորներից մի քանիսի կառավարումը հանձնելով արևմտյան կուրատորներին, մասնավորապես՝ լեհերին: Ուկրաինական բանակի, բանդերական ջոկատների, օտարերկրյա ռազմական մասնագետների ու հազարավոր վարձկանների հիմնական նպատակը ռուս սպանելն է, այլ ոչ թե ուկրաինացիներին պաշտպանելը: Վերլուծելով Ուկրաինայի քաղաքական ղեկավարության վարքագիծը և հայտարարությունները՝ տպավորություն է ստեղծվում, որ նրանք, մի կողմ դրած պետության շահերը, աղանդավորների մոլեռանդությամբ առաքելություն են կատարում (նրման առաքելության կատարմանն էլ ենք տեղյակ): Կարելի է ասել, որ Ուկրաինան՝ որպես ինքնիշխան պետություն, գոյություն չունի, և, ըստ էության, այս հակամարտության կողմերն են հավաքական Արևմուտքը՝ ամերիկյան գլոբալիստների ղեկավարությամբ, և Ռուսաստանը: Ուկրաինան այս հակամարտությունում ընդամենը միջոց է, գործիք:

Եվրոպական երկրների և եվրոկառույցների ղեկավարները թեթև սեթևեթանքներից հետո նույնպես լծվեցին Ռուսաստանի և անձամբ Վ. Պուտինի դեմ մղվող պայքարին: Ընդունեցին պատժամիջոցների արդեն ութերորդ փաթեթը, տասնյակ միլիարդների օգնություն հատկացրին Ուկրաինային, իրենց վերջին հրանոթներն ու զրահամեքենաները ուղարկեցին, իրենց դրոշների կողքին ամրացրն ուկրաինական դրոշը, սկսեցին դրա գույներով՝ դեղին-երկնագույն զգեստներ կրել, ուկրաիներեն բացականչություններ անել և նման այլ զվարճալի բաներ: Սակայն լուրջ զարմանք են առաջացնում եվրոպական քաղաքական գործիչների անտրամաբանական, չփաստարկված հակառուսական քաղաքական քայլերը: Մի՞թե չեն հասկանում, որ «ջունգլիներում» բորբոքվող կրակը կարող է տարածվել և հրդեհել նաև եվրոպական ծաղկուն այգին: Դժվար է բացատրել դա ուկրաինացիների նկատմամբ նրանց ունեցած կրքոտ սիրով կամ նրանց պատրաստակամությամբ՝ զոհվելու հանուն Ուկրաինայում լիբերալ-ժողովրդավարական արժեքների հաստատման: Մնում է մտածել, որ նրանք շատ մեծ սպասելիքներ ունեն, այնքան մեծ, որ չեն վախենում անմիջականորեն ներգրավվել պատերազմի մեջ ռուսների դեմ:

Ռուսաստանի համար Արևմուտքի կողմից իր պարանոցին փաթաթված այս պատերազմը դարձել է իրական փորձություն: ՌԴ տնտեսական, ռազմաքաղաքական, ներհասարակական վիճակը կարելի է գնահատել, բժշկական լեզվով ասած, որպես «կայուն ծանր»: Տնտեսությունը ճկվել է պատժամիջոցների բեռի տակ, սահմանների ողջ երկայնքով պայթյունավտանգ իրավիճակ է, մերձակա հարևան պետություններում բորբոքվում են հակառուսական տրամադրությունները: ԱՄՆ լիբերալ-գլոբալիստական կառավարությունը, որն այս ամենի կնքահայրն է, խուսափում է իրավիճակի կարգավորմանն ուղղված որևէ բանակցությունից և բաց չի թողնում առիթը, որը հաճախ ինքն էլ հնարում է, էլ ավելի սրելու հարաբերությունները ռուսների հետ: Ռազմավարական նախաձեռնությունը գլոբալիստների ձեռքում է, իսկ Ռուսաստանը հասցնում է միայն

դիմակայել ալիք առ ալիք իր գլխին թափվող փորձություններին: Եվ պետք է ասել՝ դեռ հաջողությամբ է դիմակայում դրանց: Հաջողությունների թվին կարելի է ավելացնել նաև տարածքային նվաճումները: Նշենք նաև, որ, վերջին հաշվով, ինչպես ասում են, եթե դանակը ոսկորին հասնի, Ռուսաստանն ի զորու է վերականգնելու ռազմավարական հավասարակշռությունը՝ սեղանին դնելով իր միջուկային զինանոցը: Եվ վերջապես, ռուս-ուկրաինական բախումից ակնհայտ շահողը դեռևս Վաշինգտոնն է: Նա կարողացավ ներգրավել Արևմուտքը «Ուկրաինան ռուսների դեմ» աշխարհաքաղաքական խաղի մեջ, համախմբեց իր շուրջ և թելադրեց խաղի իր կանոնները: Պարտադրելով դաշնակիցներին ի վնաս իրենց տնտեսությունների հրաժարվել ռուսական գազից և խիստ սահմանափակել առևտրատնտեսական հարաբերությունները նաև Չինաստանի հետ՝ ԱՄՆ-ն, փաստորեն, մրցակցությունից դուրս թողեց հզոր տնտեսություն ունեցող այնպիսի երկրների, ինչպիսիք են Դաշնային Գերմանիան և Ճապոնիան:

Վերջապես, ամերիկացիները ծանր վիճակի մեջ գցեցին ՌԴ-ին՝ հարվածը հարվածի ետևից հասցնելով նրա առևտրատնտեսական ու ֆինանսական համակարգերին, նրա հեղինակությանը միջազգային հարաբերություններում:

Ամփոփելով ռուս-ուկրաինական բախման, պայմանականորեն ասած, առաջին փուլը՝ կարող ենք ասել, որ այն ավարտվեց գլոբալիստների նշանակալից ձեռքբերումներով: Ինչ վերաբերում է «առաջադեմ մարդկության» կողմից այդքան սիրված ուկրաինացիների հազարավոր մարդկային զոհերին, տարածքային կորուստներին, ավերված քաղաքներին... դե ինչ արած, պայքարը հանուն լիբերալ արժեքների զոհեր է պահանջում: Ուկրաինան միակը չէ. հանուն այդ արժեքների զոհեր են տվել նաև Մոլդովան, Վրաստանը, Սերբիան, բոլորովին վերջերս՝ Հայաստանը, և շատ այլ պետություններ պատրաստվում են դրան:

Չնայած այս նվաճումներին՝ գլոբալիստները տակավին մտադիր չեն բավարարվել: Ընդհակառակը, չանսալով նախկին ու ներկա բազմաթիվ հեղինակավոր քաղաքական գործիչների հորդորներին՝ բանակցելու ռուսների հետ, քանի դեռ կարելի է խուսափել անմիջական բախումից, որն անկասկած կվերածվի միջուկային պատերազմի, շարունակում են շիկացնել մթնոլորտը:

Գլոբալիստները պատրաստվում են երկրորդ հանգրվանին և մտադիր են գնալ մինչև վերջ: Այդ մասին են վկայում նորանոր ու ծանր զինատեսակների մատակարարումը Ուկրաինա, այս կամ այն անվան տակ զինվորական մասնագետների ու վարձկանների թվաքանակի կտրուկ աճը ուկրաինական բանակում, հետախուզական ծառայությունների ներկայացուցիչների հաճախակի այցերը Ուկրաինա և դրանց կողմից համապատասխան տեղեկատվության փոխանցումը ուկրաինացիներին: Երկրորդ փուլին նախապատրաստությունների շարքում ամենածանրակշիռ քայլը օրերս Պենտագոնի կողմից 101-րդ ռազմաօդային գրոհային դիվիզիայի և ֆրանսիական տանկային բատալիոնի փոխադրումն է Ռումինիա և դրանց տեղակայումը ուկրաինական սահմանների մոտ: Միաժամանակ ԱՄՆ-ն վերազինում և ուժեղացնում է արևելաեվրոպական պետությունների (մերձբալթյան երկրներից մինչև Հունաստան) բանակները, ինչպես Բլինքենը հայտարարեց Կիևում, ռուսական ագրեսիային դիմակայելու համար: Այսինքն՝ ասել կուզե, թե Ուկրաինայից հետո թերևս երրորդ փուլում պատերազմի դաշտ կդառնան այդ երկրները, մանավանդ որ դրանցից Լեհաստանը և Ռումինիան հավակնում են տիրանալու ուկրաինական տարածքներին: Իմանալով նաև լիբերալների հակումը՝ վերագրելու հակառակորդին այնպիսի գործողության իրականացումը, որպիսին իրենք են պատրաստվում անելու, այն է՝ կիրառել մարտավարական միջուկային ռումբեր, ռազմական վերլուծաբանները չեն բացառում, որ բանը կհասնի նաև դրան:

Ինչևիցե, ամեն բան վկայում է այն մասին, որ նոյեմբերի կեսերին Ուկրաինայի տարածքում, ամենայն հավանականությամբ՝ հարավարևմտյան հատվածում, կսկսվեն նոր՝ ավելի թեժ մարտեր: Իսկ ինչո՞ւ նոյեմբերի կեսերին: Գլոբալիստները շտապում են: Քաղաքական իրավիճակն աշխարհում արագորեն փոխվում է: Սրընթաց փոխվում է նաև ներքաղաքական իրադրությունը: Արևմտյան երկրների լիբերալ ղեկավարությունները այլևս դժվարանում են սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումն արդարացնել Ուկրաինայով կամ արժեզրկման ու թանկացումների մեջ մեղադրել Պուտինին, ինչպես առանց աչքը թարթելու արեց ծերուկ Բայդենը: «Առաջադեմ քաղաքացիները» իրենց հայացքը Ուկրաինայից ուղղում են սեփական երկրներին, լիբերալիստական քարոզչության ծխածածկույթը ցրվում է, և նրանց ուշադրությունը սևեռվում է իրենց խնդիրների վրա, որոնց լուծումները նրանք պահանջելու են ոչ թե Պուտինից, այլ իրենց կառավարություններից: Նոյեմբերի 8-ին ԱՄՆ-ում միջանկյալ ընտրություններ են, և ամերիկացի ընտրողները նման պահանջներ են ներկայացնելու դեմոկրատական կուսակցությանը: Գլուխ բարձրացնող ներքին բողոքը «քաղաքակիրթ» պետություններում կարող է խանգարել գլոբալ լիբերալիստական ծրագրերի իրականացմանը: Իսկ դրանք լայնածավալ են, ընդգրկում են ողջ աշխարհը: Բոլշևիկների նման լիբերալ գլոբալիստները ձգտում են համաշխարհային հեղափոխության և բոլշևիկյան մոլեռանդությամբ թելադրում ազգերին, այդ թվում նաև՝ ամերիկացիներին, հանուն դրա զոհաբերել սեփական պետական և ազգային շահերը: Ինչպես պնդում են կոնսպիրոլոգիայի սիրահար քաղաքագետները, գլոբալիստները բոլշևիկների նման ձգտում են ստեղծելու, Չարենցի խոսքերով ասած, «համաշխարհային սովնարկոմ», այսինքն՝ համաշխարհային կառավարություն: Հենց այդ համաշխարհային կառավարությունն էլ, որն իրականում նկատի ուներ Բլինքենը, պետք է կառավարի աշխարհը: Եվ զարմանալի է, թե ինչու ռուսները, չինացիները և էլի մի քանի միլիարդ մարդ համաձայն չեն նրա հետ…

«Չինական վիշապը» Մերձավոր Արևելքում և Իսրայելի տարածաշրջանային երկընտրանքները

Դմիտրի Նեֆյոդով

Տարեսկզբին արդեն գրել էինք Սիրիայի հետկոնֆլիկտային վերականգնման գործընթացներում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության աճող ներգրավվածության մասին, նաև մակրոտարածաշրջանային նախագծերի մասին՝ «Գոտիներ և ուղիներ» նախաձեռնության շրջանակներում:

Վերջին ժամանակներս ի հայտ են գալիս Պեկինի և Դամասկոսի երկկողմանի համագործակցության զարգացման նորանոր վկայություններ: Օրինակ՝ չինական պատվիրակությունն աջակցում է սիրիացիներին ՄԱԿ-ում՝ արգելափակելով «զինված ընդդիմության» զինյալների կողմից վերահսկվող տարածքներում «հումանիտար օգնության» մատակարարումների մասին բանաձևը: Ընդհանուր առմամբ, 2021 թ. մարտի դրությամբ, Պեկինը վետո է դրել Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի տասը բանաձևի վրա՝ Մոսկվայի կողմից արգելափակված տասնվեց բանաձևի դիմաց: Չնայած դա զգալիորեն քիչ է, այնուամենայնիվ հատկանշական է. չէ՞ որ նախքան սիրիական հակամարտությունը Չինաստանը 40 տարվա ընթացքում վետո է դրել ընդամենը վեց բանաձևի վրա՝ այն պահից սկսած, երբ նա 1971 թ. ՄԱԿ-ում Թայվանի փոխարեն զբաղեցրեց իրեն հասանելի տեղը: Այսպիսով՝ հատկապես «սիրիական նախադեպն» է պատկերավոր բնութագրում ՉԺՀ արտաքին քաղաքական կուրսի էվոլյուցիան: Մինչ այս չինական ընկերությունների մեծ մասի գործնական մասնակցությունը սիրիական տնտեսության վերականգնմանը սահմանափակվել է լոկալ նախագծերով՝ զուգահեռվելով տեղերում իրավիճակի ճշգրիտ մոնիթորինգին: Որպեսզի Չինաստանը մեծացնի վերականգնմանն ուղղված ներդրումների ծավալները, անհրաժեշտ է հակամարտության քաղաքական իրական լուծում, որի հեռանկարները դեռևս հստակ չեն տեղերում շարունակվող բախումների պայմաններում, որոնք չկարողացավ դադարեցնել (և չէր էլ կարող) վերջերս Թեհրանում կայացած ռուս-իրանա-թուրքական գագաթնաժողովը, որը զգալի չափով նվիրված էր հենց սիրիական խնդրին: Այդուհանդերձ, հուլիսին Դամասկոսում պրոֆիլային գերատեսչությունների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում Սիրիայի Արաբական Հանրապետության կապերի և տեխնոլոգիայի նախարարությանը կփոխանցվեն չինական սարքավորումներ: Բնականաբար, ենթակառույցների վերականգնման ծրագրում առաջնահերթ կդառնան կառավարական ուժերի վերահսկողության տակ անցած առավել տուժած շրջանները: Չինաստանի արտաքին քաղաքականության գերատեսչության վերջին հայտարարությամբ դատապարտվում է

«Սիրիայում նավթի խոշոր հանքավայրերի և ցորենի մշակման շրջանների շարունակվող օկուպացիան ամերիկացիների կողմից…. ԱՄՆ բանակի կողմից սիրիական ռեսուրսների թալանը տեղերում սրել է հումանիտար ճգնաժամը»: Պեկինում արձանագրել են, որ Միացյալ Նահանգները Սիրիայում անհնարին է դարձրել մարդու իրավունքների պաշտպանումը, որոնց նկատմամբ հավատարմությունը մշտապես շեշտում է, չի հարգում երկրի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը և իր պատժամիջոցներով վնասում է նրա բնակչությանը:

Իրենց հերթին Դամասկոսում (ինչպես 2020 թ. Հոնկոնգում «անձրևանոցների հեղափոխություն» կազ-մակերպելու փորձերի խորապատկերին) չէին հապաղել դատապարտելու ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի՝ Թայվան կատարած սադրիչ այցը, որը ծարավ էր (ինչպես պնդում են ոմանք՝ հակառակ «քնկոտ Ջոյի» հանձնարարականների) իր ներկայությամբ աջակցելու տեղական «դինամիկ ժողովրդավարությանը»: Սիրիայի արտգործնախարարության հայտարարության մեջ պառաված կոնգրեսմենուհու ուղևորությունը որակվել է «թշնամական գործողություն, որը չի համապատասխանում միջազգային իրավունքին և չի հարգում ՉԺՀ ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը»:

Նման ձևով է արտահայտվել նաև Իրանի ԱԳՆ ներկայացուցիչ Նասեր Քանաանին, որը հա-ստատել է Թեհրանի հավատարմությունը «միասնական Չինաստանի» քաղաքականությանը: Հուլիսի 29-ին կայացած հեռախոսազրույցի ընթացքում Իրանի նախագահ Իբրահիմ Ռաիսին և ՉԺՀ նախագահ Սի Ցզինպինը քննարկել են երկկողմ

Սաուդյան Արաբիայի և Չինաստանի արտգործ-նախարարների հանդիպումը. 10-ը հունվարի 2022 թ.

հարաբերությունների բարելավման, ինչպես նաև ասիական տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականության հարցերը: Պեկինում աջակցում են ինչպես Դամասկոսին, այնպես էլ Թեհրանին. 2021 թ. 25 տարվա համար ստորագրված չին-իրանական ռազմավարական համագործակցության մասին համաձայնագրի գործարկումն արդեն պտուղներ է տալիս: Այսպես՝ ընթացիկ տարվա առաջին կեսին նկատելիորեն աճել է երկկողմ առևտուրը, սակայն ՉԺՀ կապերը Վաշինգտոնի տարածաշրջանային անվանական «դաշնակիցների» հետ միայն ամրապնդվում են:

Ինչպես հաստատում են իսրայելցի փորձագետները, մի շարք քաղաքացիական ծրագրերի կողքին 2021 թ. վերջին հայտնի դարձավ Սաուդյան Արաբիայի հրթիռային ծրագրի իրականացման գործում Չինաստանի օգնության մասին, ինչը կարող է վերջ դնել բալիստիկ արտադրանքի արտասահմանյան գնումներից Թագավորության կախվածությանը: Իսկ անցնող մարտին «Saudi Aramco»-ն երկար տատանումներից հետո ավարտեց Լյառնին հյուսիսարևելյան նահանգում նավթամշակման և նավթաքիմիական համալիրի շինարարության գործարքը, մեկ ամիս առաջ էլ Աբու Դաբին ձեռք է բերել չինական կործանիչներ, և նույնիսկ Իսրայելում նավահանգստի կառուցման ծրագիրը չի դոփում տեղում: Ինչպես ենթադրում են տարածաշրջանային որոշ դիտորդներ, Պեկինը ձգտում է ոչ միայն ամրապնդելու, այլև ընդլայնելու կապերը Բաշար Ասադի կառավարության հետ, որոնք գործում էին նախքան «հեղափոխական» ցնցումները և 2011 թ. տարածքային ներխուժումները: Լուրջ ներդրումները սիրիական տնտեսության մեջ ոչ միայն դրականորեն կազդեն սոցիալ-տնտեսական վիճակի վրա, այլև նախադրյալներ կստեղծեն արևելամիջերկրածովյան տարածաշրջանում ՉԺՀ դիրքերի ամրապնդման համար: «Կարմիր վիշապը հասմիկի երկրում» ամփոփիչ հոդվածում՝ Թուրքիայում տեղակայված OPC հետազոտական կենտրոնի հեղինակությամբ, ընդգծվում է, որ պաշտպանելով «Ասադի ռեժիմը»՝ Չինաստանին հաջողվեց ամրապնդել իր կապերն Իրանի և Մոսկվայի հետ՝ առանց զգալի ռեսուրսների ներդրման՝ դրա հետ մեկտեղ ստեղծելով փոխներգործության լրացուցիչ ուղիներ (https://opc.center/an-overview-of-chinas-role-in-the-syrian-conflict/):

Օտարերկրյա ապակառուցողական ազդեցությանը համատեղ հակազդումը մեծապես պայմանավորված է Սիրիայի հյուսիս-արևմուտքում շուրջ 5 հազար ույղուր զինյալների առկայությամբ:

Հասկանալի է՝ այս ամենին անտարբեր չի նայում Իսրայելը, որի ավիացիան պարբերաբար գրոհում է սիրիական տարածքը՝ «իրանական ռազմական օբյեկտների» ոչնչացման պատրվակով: «Մոսադի» նախկին տնօրեն Դանի Յատոմի կարծիքով՝ Պեկինի և Դամասկոսի շփումների ակտիվացումը կարող է սահմանափակել ՅԱԽԱԼ-ի գործողությունների ազատությունը՝ Սիրիայում չինացի փորձագետների զոհվելու ռիսկի մեծացմամբ պայմանավորված: Հետևելով իսրայելական և ամերիկյան քարոզչական շաբլոններին՝ քաղաքացիական ենթակառուցվածքային օբյեկտներն անպայման կօգտագործվեն նաև հետախուզական նպատակներով: Վերջապես, Արևմտյան Երուսաղեմում երկյուղում են Սիրիա չինական զենքի և ռազմական տեխնիկայի հնարավոր մատակարարումներից, ինչը նույնպես կարող է նվազեցնել սիրիական երկնքում օդային ավազակության անպատժելիությունը: Կարելի է ենթադրել, որ տեսականորեն խոսքը վերաբերում է «FK-3» զենիթահրթիռային համալիրներին, որոնց արձակման կայանքները Սերբիայի մայրաքաղաքի մերձակայքում են:

Դատելով պաշտոնական հայտարարություններից՝ Բելգրադը պատվիրել է Չինաստանում 4 հրթիռային մարտկոցներ, որոնցից յուրաքանչյուրը կազմված է, մասնավորապես, մի քանի մեկնարկային կայաններից, ռադարներից և հրամանատարական մեքենայից: Ռազմական փորձագետները նշում են ռուսական «Պանցիր-Ս» համալիրների հետ միջին հեռահարության չինական ՀՕՊ համակարգի զուգակցման կարևորությունը, որոնք նույնպես սերբական հակաօդային պաշտպանության սպառազինության մեջ են: Դժվար չէ հասկանալ, որ այդ կապակցությունն արդիական կլինի նաև Սիրիայի համար, եթե, իհարկե, Դամասկոսի կողմից չինական հակաօդային և հակահրթիռային համակարգերի ձեռքբերման հարցը տեղափոխվի գործնական հարթություն…

Արդեն տարեսկզբին «Մեկ գոտի, մեկ ուղի» նախաձեռնությանը պաշտոնապես Դամասկոսի միանալուց հետո իսրայելա-չինական հարաբերությունների ուսումնասիրությունների «SIGNAL» ինստիտուտի վերլուծաբանները եզրահանգել էին «Պեկինի «մերձավորարևելյան» ռազմավարության ճշգրտման մասին: Չի բացառվում, որ առևտրատնտեսական հետաքրքրություններն ու ներդրումային նախագծե-

որը ժամանակի ընթացքում կլրացվեն տարածաշրջանային հակամարտությունների կառավարման, ահաբեկչության դեմ պայքարի և միգրացիոն խնդիրների լուծման գործում առավել ակտիվ ներգրավմամբ: Ընդ որում, միանգամայն տրամաբանական է, որ նման կուրսը կիրականացվի Մոսկվայի հետ համագործակցությամբ, որը կարող է իր վրա վերցնել անվտանգության ապահովման ոլորտում որոշ առանցքային գործառույթներ (https://www.israelhayom.co.il/news/world-news/other /article/7272651):

Նոր իրողությունները, որոնք, բացառված չէ, ավելի վաղ վրա կհասնեն, քան որևէ մեկը կարող է պատկերացնել, առավել քան ակնհայտ կդարձնեն իսրայելցիների անկաշկանդ պահվածքը Սիրիայի օդային տարածքում (և տարածաշրջանում ընդհանրապես): Թեկուզ որոշ ժամանակով իրավիճակը երկարաձգելու համար անհրաժեշտ է «համոզել Վաշինգտոնին վերադառնալ առավել գործնական մերձավորարևելյան քաղաքականությանը», ինչը հակասում է Չինաստանի հետ ավելի մերձեցման կուրսին, «անմասն չմնալու համար Պեկինի կողմից իրականացվող նախաձեռնություններից՝ հօգուտ... տարածաշրջանային մրցակիցների (Իսրայելի)»:

Վերջերս՝ Գազայի հատվածի շուրջ հերթական էսկալացիայի նախաշեմին, վարչապետ Յաիր Լապիդը հերթական ակնարկն է արել Իսրայել պետության «դե ֆակտո» միջուկային կարգավիճակի վերաբերյալ: Ի պատասխան՝ մեջլիսում առաջարկել են մտածել միջուկային զենքից հրաժարվելու Ալի Խամենեիի ֆեթվայի մասին, եթե Իրանի թշնամիները «շարունակեն իրենց սպառնալիքները»: Արտաքին քաղաքական հրատապ խնդիրների հարցում բացառապես ուժային լուծմանն ապավինելը անխուսափելիորեն հանգեցնում է նրան, որ ընդդիմախոսներն էլ են սկսում գործել նմանատիպ մոդելի համաձայն: Փոխադարձ բռնության թափանիվի «պտույտները» կարող են դառնալ անվերահսկելի: Ի հետևանք սրա՝ Մերձավոր Արևելքում Պեկինի և Մոսկվայի կայունացնող դերը կարծես թե այլընտրանք չունի: ■

Ռուսերենից թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի

https://vpoanalytics.com/2022/08/07/kitajskij-drakon-na-blizhnem-vostoke-i-regionalnye-dilemmy-izrailya/



Հին և Նոր մետաքսի ճանապարհները

Հայ ազատագրական շարժման մեծագոյն նուիրեալ Գէորգ Չաուշին ձօնուած երգերը (մաս 3)

Աւօ Գաթրճեան
Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻՆ

Մայիս ամսու մէջ
Վարդն էր՝ նոր բացուեց,
Յանկարծ Սուլուխը,
Չորս կողմից մթնեց:

Ամպեր գոռացին,
Շանթեր արձակուեց[1],
Դրախտի ճամբան
Արեամբ ողողուեց:

Հայոց քաջերի
Ջատիկն էր, ահա[2],
Դարձեալ մի հերոս
Ընկաւ նահատակ:

Այն քաջ հերոսը
Սարհատն էր, աւա՜ղ,
Որ մղեց ուժգին
Կռիւներ անյաղթ:

Փչեց շունչ վերջին,
Ասաց լուսնակին,
Սիրոյ համբոյր տար[3]
Որդւոյս Վարդգէսին:

Քու մահից յետոյ
Ա՛լ մեզի համար
Ի՜նչ կ'արժէ կեանքը,
Ի՜նչ կ'արժէ աշխարհ[4]:

1. Աստղեր փայլակուեց:
2. Աւաղ:
3. Վերջին համբոյրս տար:

«Գէորգ Չաուշին» երգին երկրորդ տարբերակը աւելի նուազ տուներով է, զոր կը ներկայացնենք ստորև:

ՄԱՅԻՍ ԱՄՍՈՒՆ ՄԷՋ

Մայիս ամսուն մէջ վարդերն են բացուեր
Յանկարծ Սուլուխի չորս կողմը մթնեց:

Սև ամպը գոռաց շանթեր արձակեց
Թէ ափ թէ ծաղկունք արեամբ ողողուեց:

Ու այդ շանթերուն ահեղ զարկին տակ
Դարձեալ մէկ հերոս ընկաւ նահատակ:

Ու այդ հերոսը Գէորգն էր աւաղ
Որ մղեց այնքան կռիւներ անյաղթ:

Սուլուխի կռուին անմիջական մասնակից Ռուբէն կը գրէ. «Սուլուխի կռիւը պատահեցաւ 1907 մայիս 27-ին և տևեց մինչև մայիս 28 առաւօտեան: Խորհրդաւոր է այդ օրը: Անկէ ուղիղ 11 տարի ետք պիտի ծնէր Գէորգներու արեան շնորհիւ Հայաստանի անկախութիւնը:

Մենք կորսնցուցած էինք, բացի Գէորգէ, Գալէն և Յակոն, կռուող գիւղացիներէն 18 հոգի, իսկ ժողովուրդէն՝ 23 հոգի: Այդ կռուին մասնակցող 17 ֆետայիներէն 3 սպաննուած, 11 վիրաւոր ունէինք. 4 հոգի միայն բախտաւոր էր, որ անվնաս մնացին. ատոնցմէ մէկն էր քիւրտ Հասանն, որ ֆետայիի նման կռուեցաւ»[2]:

Արդարև, յաջորդ երգին մէջ, որ խորագրուած է «Գէորգի մահուան երգը», վեր կ'առնուի Գէորգ Չաուշի տիպարը: Այդ երգին հեղինակն է Սորտարայ Տիրան վարժապետը:

Տիրան Սորտար (Սորդար) գիւղէն էր: Գիւղը կը գտնուէր Արևմտեան Հայաստանի Պիթլիս նահանգի Մշոյ գաւառին մէջ՝ Մուշ քաղաքէն 30 քմ հիւսիս-արևմուտք՝ Մշոյ Սուրբ Կարապետ վանքէն հարաւ-արևելք, Արածանիի աջ կողմի վտակներէն մէկուն հովիտին մէջ: Գիւղը հարկատու էր Մշոյ Սուրբ Կարապետ վանքին: 20-րդ դարու սկիզբը ունէր 45 տուն բնակիչ: Բնակչութեան հիմնական զբաղումնքը անասնապահութիւնն էր, երկրագործութիւնը և առևտուրը:

Սորտարայ Տիրան վարժապետի մասին նաև ակնարկութիւն կայ Ռուբէն Տէր-Մինասեանի «Հայ Յեղափոխականի մը յիշատակները» գիրքին Գ. հատորի Ը գլուխին մէջ. «Գործի վրայ էր նաև Վարդան Վարդապետը, որուն ուղղութիւնն էր, որ կատարելագործուած ձևով, կը հետապնդէր իր ազգական Հրայրը. գործի վրայ էին նաև Բազլովայ Յովնն, Սորտարայ Տիրանը, Մեղտիի Սիսակը, Ցխաւայ Արութը, Աւրանի

Հայկը, Ասոն, Գոմերի Յովիկը, Տէր Սարգիսը, Փեթարցի Պետոն, Կառնինու Մկրտիչը, Մոկունաց Դաւոն ու Ղազարը, Ֆրանք Սահակը, Դերգևանուց Վարդանը ու Բարսեղը, Բերդակի Ներսոն, Վարդենիսի Մարտիրոսը, Դրմերտու Յովհանը, Ալիգըչբունի Անդրանիկը, Արոսցի Հրաչը, Գոբեցի Արշակը, Քադառլուի Ղազարը և շարք մը ուրիշ գործիչներ, որոնք կը դառնան Հրայրի ստեղծած կազմակերպութեան հիմնաքարերը»[3]:

ԳԷՈՐԳԻ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

Տասն և եօթը տարի վսեմ սուրբ գործիչ,
Ծառայեց հարազատ Գէորգ Չաուշը,
Նեղութեան դիմացող, երկաթեայ մարմին
Անգլիացի պողպատ Գէորգ Չաուշը:

Հազար ինը հարիւր ճիշդ եօթ թուին,
Ուղիղ Մայիս ամսուն քսան և եօթին,
Մշոյ Սուլուխ գիւղում կռիւը վերջին,
Ըրաւ դիւցազն՝ Սարհատ Գէորգ Չաուշը:

Յանկարծ վրայ տուաւ թշնամին վատաբար,
Պաշարեց հերոսին զօրքով անհամար,
Եօթը ժամ դէմ դրեց, կռուեցաւ քաջաբար,
Անբիծ ու անարատ Գէորգ Չաուշը:

Մէկ հազարապետ և հարիւր զինուոր,
Տապալուեցան ինկան թաւագլոր,
Յիշեալ կռուին ինքն ալ ինկաւ վիրաւոր
Ժիր ու անհամեմատ Գէորգ Չաուշը:

Ընկերները քաջ հերոսին դիակը,
Վիրաւորուած՝ առան իրենց շալակը,
Պատռեցին թշնամու զօրաց բանակը,
Ազատեցին քաջահատ Գէորգ Չաուշը:

Թէև բաժէն կարճահասակ էր նա,
Բայց արժէքը ոսկու նմանակ,
Թողուց բարի անուն անմահ յիշատակ,
Ժրաջան բազմաշխատ Գէորգ Չաուշը:

Գէորգ Չաուշը իր ողջ էութեամբ հայ մարտական ոգիի զարթօնքն էր

և իր այդ քաջարի կեցուածքով ու գործունէութեամբ ապացուցեց, որ հայը արթնցած է և կարող է սեփական ուժով ու զէնքով պատուհասել իր թշնամին:

Ահաւասիկ վերոնշեալ գաղափարները լայն կողմերով արտացոլուած են «Տղէ՛ք, ջա՛ն տղէք» երգին մէջ: Այս երգին ու երաժշտութեան հեղինակը մեզի կը մնայ անյայտ:

Երգին մէջ չէ բացայայտուած, թէ որ կռիւի մասին կը խօսուի, բայց, ըստ նկարագրումին, Գէորգ Չաուշի ֆետայական խումբը հանգիստի պահուն կը պաշարուի թշնամիին կողմէ, և ֆետայիները, իրենց հրամանատար Չաուշէն խրախուսուած, իրենց դիրքերէն արդէն հակայարձակողական գործողութեան կ՚անցնին, հետևաբար կարելի է հետևցնել, թէ Սուլուխի կռիւի մասին կ՚ակնարկուի:

Այստեղ հեղինակը ամէնէն հարազատութեամբ ներկայացուցած է հակամարտութեան իրադարձութիւնները, նախ՝ իբրև բառեր, ապա՝ իբրև երաժշտութիւն:

Երգը կը բաղկանայ երեք տուներէ: Երգին իւրաքանչիւր տունի առաջին երկու տողը ընթացք կ՚առնէ երաժշտական ծանր ու հանդարտահոս կշռոյթով, և այդ ծանրութիւնը հետզհետէ կ՚աշխուժանայ և ոգեշունչ կատարում կը ստանայ: Իւրաքանչիւր համարի 3-րդ և 4-րդ տողերը միատեղ ոգևորիչ, խանդավառ կրկներգ է: Երաժշտութիւնը ընդհանրապէս իր ամբողջական վիճակին մէջ աստիճանաբար ձայնի վերելքային բաժինով մեծ տպաւորութիւն ու մթնոլորտ կը ստեղծէ:

ՏՂԷՔ, ՋԱ՛Ն ՏՂԷՔ

Առաւօտ, դէմ արշալոյսին,
Երբ քաջաց խումբերը մեր կը նսջէին,
Հանկարծ ներս մտաւ կտրիճ գիւղացին,
Ասաց՝ ջա՛ն տղէք, մեզ պաշարեցին:

Այն օրուան քաջեր արին զէնքերնին,
Շուտով վազեցին իրենց դիրքերնին,
Գոռաց մոսինը Գէորգ Չաուշին,
Որ խրախուսեց իր ընկերներին:

Տղէ՛ք, ջա՛ն տղէք, մի՛ խնայեք թուրքին,
Գետին փռեցէ՛ք թուրք մեծ պետերին,
Տուէ՛ք մոսինը հայոց մարտիկին,
Որ խրախուսէ իր ընկերներին:

Յաջորդը «Ելի՛ր, Գէո՛րգ, ելի՛ր» երգն է, որ Գէորգ Չաուշին նուիրուած նոր երգերէն կը յամարուի և աւելի յայտնի է «Սուլուխէն ստացանք լուրեր ահաւոր» տողով: Երգին հեղինակն է երգիչ, երգահան Ներսիկ Իսպիրեանը:

Ներսիկ երգին մէջ ամբողջական պատկերացում կու տայ Սուլուխի կռիւին և Գէորգի նահատակութեան: 1907-ի մայիս 27-ին Գէորգ Չաուշ և Ռուբէն Տէր-Մինասեան իրենց զինուորներով գաղտնի գործով հաւաքուած էին Սուլուխ: Երկու ժամ անց գիւղը կը շրջապատեն թուրքերը: Սուլուխի կռիւը սկսած է նոյն օրը և տևած մինչև մայիս 28-ի առաւօտ, ուր կը նահատակուի Գէորգ Չաուշը:

Ներսիկ Աղասի Իսպիրեան ծնած է 15 մայիս 1963-ին Երևան: Հինգ տարեկան հասակէն սկսած է երգել: 1980-ին աւարտած է Երևանի թիւ 160 միջնակարգ դպրոցը: 1980-1982 թուականներուն ծառայած է խորհրդային բանակին մէջ: 1987-1992 թուականներուն ուսանած է Երևանի Կոմիտասի անուան երաժշտանոցին մէջ:

Ուսումին զուգահեռ՝ 1985-էն, աշխատած է Հայաստանի ձայնասփիւռի և պատկերասփիւռի պետական կոմիտէի «Ակունք» ազգագրական համոյթին մէջ որպէս մենակատար:

Սփիւռքի հետ իր առաջին շփումը եղած է 1989 թուականին, երբ ազգագրական-ժողովրդային «Մարաթուկ» նուագախումբին հետ իբրև մենակատար ելոյթներ

ունեցած է Սուրիա և ԱՄՆ:

1995-ին տեղափոխուած է ԱՄՆ: Այդ ժամանակահատուածին մէջ հօր՝ Աղասիի հետ միասին ստեղծած է շուրջ 40 երգ, որոնց երաժշտութիւնը մշակած է ինքը: Երգերու մեծ մասը յեղափոխական են և նուիրուած են Արցախեան ազատամարտին ու մարտիկներուն:

Ներսիկ Իսպիրեան աւելի քան 30 հայրենասիրական, յեղափոխական, Արցախեան ազատամարտին ու մարտիկներուն նուիրուած երգերու հեղինակ է:

Վերամշակած է նաև հին, աշուղական երգեր: Համերգներ տուած է բազմաթիւ երկրներու մէջ: Հրապարակած է 20 ձայնասկաւառակ և տեսասկաւառակ, որոնցմէ 8-ը յեղափոխական երգեր կը պարունակեն:

2011-ին արժանացած է ՀՀ վաստակաւոր արուեստագէտի կոչումին: 2012-ին տեղափոխուած է Երևան:

«Ելի՛ր, Գէո՛րգ, ելի՛ր» երգի խօսքի և երաժշտութեան հեղինակ Ներսիկ Իսպիրեան երգին մէջ մէկ կողմէ կը նկարագրէ Սուլուխէն ստացուած Գէորգի նահատակութեան լուրը, միւս կողմէ կարօտախառն կամեցողութիւն կ՚ընէ Գէորգ Չաուշի վերազարթնման, վերակենդանանալու մասին: Իզուր չէ, որ Ներսիկ կըրկներգի մէջ կտրական կերպով շեշտադրած է «Ելի՛ր, Գէո՛րգ, ելի՛ր» բառերը:

Ներսիկ՝ իբրև Չաուշի շառաւիղներէն՝ հոգեհարազատ տարօնցի, երգին մէջ համապարփակ ձևով ներառած է Տարօն աշխարհը, Մուշի և Սասունի սէգ սարերը, կանաչ դաշտը, արծիւները և այլն: Հոն ներկայացուցած է հայ ֆետայիներու կարողականութիւնն ու անկոտրում կամքը և թշնամին արժանի պատիժ հասցնելու գաղափարները:

Երաժշտութեան տեսակը զուտ Տարօն աշխարհի երգարուեստի հարազատ մեղեդիներէն է՝ կշռութաւոր քայլերգանման ոճով, խրոխտ ու խանդավառ: Խրախուսիչ, յատկապէս խմբային երգեցողութեան ընթացքին ոգևորիչ է:

ԵԼԻ՛Ր, ԳԷՈ՛ՐԳ, ԵԼԻ՛Ր

Սուլուխէն ստացանք լուրեր ահաւոր,
Հայոց արծիւն ընկաւ կուռում վիրաւոր,
Կանաչ դաշտի միջին աւանդեց հոգին,
Մեր սրտերում մնաց յաւերժ թանկագին:

Ելի՛ր, Գէո՛րգ, ելի՛ր, տուշմանը շատ է,
Հայոց ազգի համար մեռնելը փառք է:

Կտրիճ Գէորգ Չաուշ դամբանէն վեր կաց,
Մշոյ սէգ սարերէն նորէն իջի՛ր ցած,
Տարօնի քաջերն են մենակ մնացել,
Ազատութեան համար կռի՛ւ ենք գնացել:

Ելի՛ր, Գէո՛րգ, ելի՛ր, տուշմանը շատ է,
Հայոց ազգի համար մեռնելը փառք է:

Հայոց արծիւների ճամփեքը փուշ է,
Վեր կաց, Գէո՛րգ, վեր կաց, արդէն շատ ուշ է,
Կազմենք նոր-նոր խմբեր, գնանք Մուշ, Սասուն,

Գալէ

Թշնամու զօրքի մէջ գցինք վայնասուն:

Ելի՛ր, Գէո՛րգ, ելի՛ր, տուշմանը շատ է,
Հայոց ազգի համար մեռնելը փառք է:

Իր կենդանութեան արդէն առասպել դարձած Գէորգ Չաուշի մասին տակաւին կը շարունակուին յօրինուիլ նոր երգեր: Այդ երգերէն «Գէորգ Չաուշին»ի խօսքերու հեղինակն է բանաստեղծ Գարեգին Գէորգեանը, իսկ երաժշտութեան հեղինակը՝ հայ ազգային, հասարակական, մշակութային գործիչ, «Սասուն» ազգագրական երգի-պարի համոյթի ղեկավար Անդրանիկ Մանուկեանը: Ան հանդէս կու գայ որպէս Անդրանիկ սարկաւագ Մանուկեան: Երգին մեկնաբանը նոյնպէս Անդրանիկ սարկաւագն է:

Երգը հրապարակուած է 2011-ին տեսահոլովակի ձևաչափով:

Երգի խօսքերուն հեղինակը՝ Գարեգին Գէորգեան, ծնած է 1959 թ. յունուարի 12-ին ՀՀ Աշտարակի շրջանի Ուջան գիւղին մէջ: Ուսանած է Երևանի պետական համալսարանին մէջ: Աւարտած է

Երևանի գեղարուեստաթատերական ինստիտուտի թատերագիտական բաժինը: Աշխատած է «Աղբիւր» մանկապատանեկան ամսագրին և Հայաստանի հանրային հեռուստաընկերութեան մէջ: 1996-էն եղած է «Պարատուն» հեռուստահաղորդաշարի սցենարիստը և նոյնանուն մշակութային հանդէսի գլխաւոր խմբագիրը: Հայաստանի ազգային պարարուեստի միութեան վարչութեան անդամ է: Կը դասաւանդէ Երևանի Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանի մշակոյթի բաժանմունքէն ներս: 2001-էն Հայաստանի գրողներու միութեան անդամ է: Անոր բանաստեղծութիւնները պարբերաբար տպագրուած են հանրապետական գրական մամուլին մէջ: Հեղինակած է հայ պարարուեստին նուիրուած տեսական և վերլուծական բազմաթիւ յօդուածներ: Լոյս տեսած են անոր «Աղբրանց տուն» (1993 թ.), «Ֆրունզէ Ելանեան» (1998 թ.), «Պատրմութ» (1999 թ.), «Սահմանական ներկայ» (2000 թ.), «Ապրելու իրաւունք» (2012 թ.) գիրքերը: 2006-էն ասդին Հայաստանի «Թեքէեան» մշակութային միութեան վարիչ քարտուղարն է:

Երգի երաժշտութեան հեղինակ Անդրանիկ սարկաւագ Մանուկեան արմատներով Արևմտեան Հայաստանէն է, ծնած է 1 մայիս 1967-ին Հայաստանի Ներքին Բազմաբերդ գիւղին մէջ (այժմ՝ Արագածոտնի մարզ):

Աւարտած է իր ծննդավայրի միջնակարգ դպրոցը: 1975-ին 8 տարեկանին առաջին անգամ նկարահանուած է «Գորանի» վաւերագրական ֆիլմին մէջ: Ան առաջին ֆիլմն էր, որ խորհրդային տարիներուն ցուցադրուած է հանրային պատկերասփիւռէն, և որուն մէջ առաջին անգամ կը հնչեն ազգային-ազատագրական երգեր: 1980-էն ետք մասնակցած է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանին մէջ ընթացող, արդէն աւանդական դարձած փառատօններու և տարիներ շարունակ արժանացած առաջին կարգի մրցանակներու և դափնիներու: 1985-ին զօրակոչուած է խորհրդային բանակ: Երկու տարի Պաշքիրիայի մէջ ծառայելէ ետք վերադարձած է Հայաստան, յաջողութեամբ աւարտած Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի վոգալի բաժինը: 1987-ին Մոսկուայի մէջ արժանացած է Ժողովրդային արուեստի համամիութենական երկրորդ փառատօնի դափնեկիրի մետալին:

2013 թուականին Գարեգին Առաքելեանի հետ հիմնած է «Գաթա պենտ» խումբը: Հարուստ մշակութային կենսագրութեան ընթացքին իրականացուցած է բազմաթիւ այլ ծրագրեր և ստեղծած հայոց ազգային ծեսերը, երգերն ու պարերը անթերի ներկայացնող ֆիլմեր, տեսահոլովակներ, տեսաերիզներ ու ձայնասկաւառակներ:

Անոր աշխատանքին շնորհիւ այսօր պահպանուած են հայ մշակոյթի անբաժանելի մաս հանդիսացող ազգային ծեսերը պատկերող բազմաթիւ գործեր:

Անդրանիկ սարկաւագ Մանուկեան 2017 թուականին պարգևատրուած է ՀՀ Երախտագիտութեան մետալով:

«Գէորգ Չաւուշին» երգը անկրկնելի է ըսել, որ գիւղական ժողովրդական երաժշտութեան հարազատ արտացոլումն է, որ կ՚առանձնանայ երաժշտական նշանակալից վարպետութեամբ, գաղափարայուզական խոր բովանդակութեամբ և ցայտուն ազգային նկարագրով:

Երգը, բառ և երաժշտութիւն միաձուլած, Տարօն աշխարհի երգարուեստը կը բուրէ: Գեղեցիկ է երաժշտական իր կշռոյթով և ուղղակի հոգիի խորքերէ կը հնչէ:

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻՆ

Անտոքից մի ժայռ պոկուեց,
Մի արծիւ զարկուեց օդում,
Ա՜խ, մի սիրտ ճրագի պէս
Մարմրեց եղեգնուտում:
Ա՜խ, գոյժ էր, դարձաւ քամի,
Ա՜խ, երգ էր, դարձաւ երդում.
Մըր Սասնա սար ու քարին
Էրկնքից ցաւ էր կաթում:

Կրկներգ.-
Ա՜խ, դժուար վիճակ,
Էս ինչ էր իմ բախտ,
Շատերի հետ էլ
Դարձել եմ անբախտ:
Ա՜խ, դժուար վիճակ,
Էս ինչ էր իմ բախտ,
Շատերի նման
Ես էլ եմ դժբախտ:
Գէորգի հայացքը հուր
Հսկում էր Սուլուխն ի վար,
Նա մահից չունէր երկիւղ,
Պինպաշուց չէր վախենար…
Մարութա լերան խորքից
Բարձրացաւ բոց ու կրակ,
Մէկ սիրտ էր՝ հունցուած ցաւից,
Մէկ ճամփայ՝ հազար ծուղակ:

Մշո Սուլուխ գյուղը

Կրկներգ.-
Ա՜խ, դժուար վիճակ....

Սկիզբ էր, թէ վերջ եղաւ,
Պատմողներ՝ հազար ու մի,
Շուրթերից մի խօսք թռաւ.
Փրկեցէ՛ք զիմ հայրենիք:
Քո կեանքը դարձաւ մի երգ,
Անունդ՝ ահեղ երդում.
Քո մահուան տխուր ժամին
Երկնքից լոյս էր կաթում:

Կրկներգ.-
Ա՜խ, դժուար վիճակ....

2011-ին երգիչ, երգահան Ներսիկ Իսպիրեանի և Աղասի Իսպիրեանի (երգիչ) նախաձեռնութեամբ հրապարակուեցաւ «Հերոս քաջերին» խորագրեալ ձայնասկաւառակ մը: Երգացանկի երկրորդ երգն է «Գէորգ Չաւուշի յիշատակին» (Գէորգ Չաւուշը ո՞ւր է): Երգի բառերը կը պատկանին աշուղ Հայրիկ Ղազարեանի և Աղասի Իսպիրեանի (Ներսիկ Իսպիրեանի հայրը), իսկ երաժշտութիւնը՝ Ներսիկ Իսպիրեանի:

Աշուղ Հայրիկ Ղազարեան ծնած է 1922-ին Գեղարքունիքի մարզի Ձորագիւղ գիւղը: Պապերը գաղթած են Արևմտեան Հայաստանի Ալաշկերտ գաւառի Չլկանի գիւղէն 1828-1830 թուականներուն: Աւարտած է գաւառի մանկավարժական ուսումնարանը և Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական հիմնարկը: Դասաւանդած է հայրենի գիւղի միջնակարգ դպրոցը իբրև հայոց լեզուի և գրականութեան ուսուցիչ:

Աշուղ Հայրիկ ստեղծագործած է երիտասարդ տարիներէն: 1991 թուականին հրատարակած է «Մշոյ հաւքեր» երգերու ժողովածուն:

Մահացած է 1995 թուականին:

Աւագ Աղասի Իսպիրեանը (Ներսիկի հայրը) 200-էն աւելի հայրենասիրական, ազգագրական, ֆետայական երգերու խօսքերու հեղինակ է:

«Գէորգ Չաւուշի յիշատակին» երգը իր բովանդակութեամբ և որակով մեզի կը տանի Տարօն աշխարհ, կարծէք Գէորգ Չաւուշի նահատակութենէն անմիջապէս յետոյ ստեղծագործուած ըլլայ:

Երգին հեղինակները Անտոք լեռի յիշատակումով կը սկսին, Տարօն աշխարհի մէջ Գէորգ Չաւուշը կը փընտռեն, կ՚ուզեն զայն տեսնել և այդ պատճառով ալ հարց կու տան՝ «Գէորգ Չաւուշը ո՞ւր է»: Այսպիսով ընթացք կ՚առնէ երգը՝ նկարագրելով Չաւուշի յեղափոխական գործունէութիւնը, անոր անցուցած հանգրուանները, ինչպէս նաև կը յիշուին Չաւուշի զինակից ընկերները մէկ առ մէկ՝ Սպաղանաց Մակար, Մօրուք Կարօ, Գոմսայ Կորիւն ու Մարգար:

Հոն կը յիշատակուի. «Ո՜վ դու ֆիտայանիստ մեծ Մառնիկայ սար»: Պատմական կարևորութեան համար պէտք է իրազեկ դարձնել Մառնիկ գիւղի մօտ գտնուող լերան և կամ ընդհանրապէս Մառնիկ գիւղի և շրջակայքի՝ յեղափոխական կեանքի մէջ այդ օրերուն ունեցած դերակատարութեան մասին: Մառնիկ Վերին գիւղ մըն է Արևմտեան Հայաստանի Պիթլիս նահանգի Մշոյ գաւառին մէջ: Կը գտնուէր Մուշ-Մերքեզ գիւղախումբին մէջ՝ Մուշ քաղաքէն 9 քմ հարաւարևելք՝ Մեղրագետի վտակներէն մեկուն ափին՝ անտառապատ վայրի մէջ: Գիւղին մօտակայքը եղած է անտառ, որ կը կոչէին Մառնիկի անտառ: Մառնիկ գիւղին և անոր կողքին գտնուող անտառին մէջ կը պատսպարուէին հայ ֆետայիները, այդ պատճառով ալ այս շրջանը եղած է ֆետայանիստ:

Գևորգի կինը՝ Եղսոն (Հեղինե)

Բնակչութիւնը կը զբաղուէր երկրագործութեամբ և անասնապահութեամբ:

Մառնիկ Վերինն ունէր եկեղեցի: Գիւղի հարաւարևելեան կողմը կը գտնուէր Կարմիր վանքը:

Աւելցնենք, որ բնակչութիւնը բռնութեամբ տեղահանուած է 1915 թուականի Մեծ եղեռնի ժամանակ:

Այսպիսով՝ «Գէորգ Չաւուշի յիշատակին» երգը բառերու իր պարզութեամբ, խորհուրդով, ապրումներով և բառերու ու երաժշտութեան ներդաշնակութեամբ շատ հեշտ սրտի խօսող է, իսկ երաժշտութիւնը՝ հանդարտահոս, բայց մորմոք ու կորուստի կսկիծը արտացոլող:

Ուրեմն կը հաստատենք, որ երգը՝ որպէս բառ ու երաժշտութիւն, ժողովրդական է՝ սկսած աւանդական բանաձևային բանաստեղծական շարադրանքէն և աւանդական բանաձևային մեղեդիէն, որ իրարու հետ այնպէս ներդաշնակ են:

Այսպիսով՝ «Գէորգ Չաուշի յիշատակին» երգը մեզի յուշել կու տայ, որ Գէորգ Չաուշը չէ մոռցուած, այլ ընդհակառակը՝ կ'ապրի, և Տարօն աշխարհի մէջ «Հոգին սաւառնում է Գէորգ Չաուշին»:

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Խոցուած սրտով ման եմ գալիս յուսահատ,
Լեզո՛ւ առէք, խօսէ՛ք, լեռնե՛ր ձիւնապատ,
Քաջ Գէորգի ընտրած Անտոքի գագաթ,
Խնդրեմ, ասէք՝ Գէորգ Չաուշը ո՞ւր է:

Ո՜վ արտասուող երգիչ, ի՞նչ տանք պատասխան,
Մէկ Սասուն էր, մէկ՝ Մուշ, Աղթամար ու Վան,
Ե՞րբ է գտել մի տեղ հանգիստ օթևան,
Չգիտենք՝ ինչ լուր տանք Գէորգ Չաուշից:

Ո՜վ դու ֆիտայանիստ մեծ Մառնիկայ սար,
Հազար բովից անցած Սպաղանաց Մակար,
Մօրուք Կարօ, Գոմսայ Կորիւն ու Մարգար,
Խնդրեմ, ասէք՝ Գէորգ Չաուշը ո՞ւր է:

Հայրենիքի վիշտը նրան է պատել,
Ամբողջ կեանքը ազգի համար նուիրել,
Ոչ մի տեղ չի մնայ հինգ օրից աւել,
Չգիտենք՝ ինչ լուր տանք Գէորգ Չաուշից:

Վերջի մարտուակայ սգաւոր Սուլուխ,
Քաջը մէջը փակեց իւր աչքերը թուխ,
Քաջ ֆիտայիներին թողեց անգլուխ,
Չգիտենք՝ ինչ լուր տանք Գէորգ Չաուշից:

Հոգին սաւառնում է Գէորգ Չաուշին
Եւ Անդրանիկի հետ գնում վրէժի,
Երգիչ Ներսիկ այն, որ հայը ցիշի,
Հերոս յիշատակը Գէորգ Չաուշին:

Այս աշխատութիւնը իր լրումին հասցնելու համար անհրաժեշտ է յիշատակել նաև այն կարգ մը երգերը, որոնք ուղղակիօրէն չեն ձօնուած կամ չեն առնչուած Գէորգ Չաուշին հետ, սակայն հոն՝ կարգ մը տուներու մէջ, կամ Գէորգ Չաուշ անունը միայն յիշատակուած է, կամ ամբողջ տուն մը անոր հերոսութեան ու կերպարին նուիրուած է:

Արդարև, 1904-ին Սասնոյ շրջանին մէջ արդէն անհնար կը դառնայ այլևս խուսափիլ կռիւներէ: Յունուար ամսուն կառավարութիւնը մեծաքանակ զօրքերով կը փակէ Սասնոյ բոլոր ճանապարհները: Ալիանք և Շենիկի գիծին պաշտպանութիւնը ստանձնած էր Հրայր Դժոխք:

13 ապրիլ 1904-ին թրքական բազմահազարնոց զօրքը և քրտական աշիրեթները կը յարձակին Կելիեկիւզանի վրայ: Անհաւասար պայքարին մէջ կը նահատակուի Հրայր Դժոխք: Հրայրի նահատակութեան առիթով հիւսուած է երգ մը՝ «Արմենակի երգը» (Հրայր Դժոխքի յիշատակին) խորագրով: 6 տուներէ բաղկացած երգին 3 տուները արդէն կը խօսին Գէորգ Չաուշի քաջութեան, սխրանքին և այլ յատկութիւններուն մասին:

Ստորև կը ներկայացնենք Գէորգին նուիրուած տուները.

Տաճկաց զօրքը թնդանօթով,
Հայ քաջերը մոսիններով,
Քաջ Գէորգը փայլուն զէնքով
Ջարդեց թուրքեր հազարներով:

Քաջ Գէորգը հաստ ու կարճ էր,
Մոսինն իւր ձեռքին խարճ էր,
Ընկերներէն միշտ յառաջ էր,
Թուրք բէկերին շատ կը ջարդէր:

Տաճկաց զօրքը երբ բարձրանար,
Գէորգ Չաուշ կ'ուրախանար,
Կ'ըսէր. «Տղե՛ր, դուք բռնէք պար,
Ես կը ցրուեմ տաճկաց գումար»:

«Հազար ինն հարիւր չորս թիւին» երգը կրկին Հրայր Դժոխքի ղեկավարած կռիւին և այդ կռիւի ընթացքին անոր քաջաբար նահատակութեան մասին է:

Այս երգը յար և նման այլ երգերու թէև կը նկարագրէ կռիւը ընդհանրապէս՝ յիշատակելով հայդուկները՝ Արմենակը (Հրայր), Անդրանիկը, թշնամիի զօրքը, Տարօն աշխարհը, Մուշը, Սասունը, սակայն հոն, բնականաբար, անքակտելիօրէն ներառուած է Գէորգ Չաուշը՝ իր քաջութեամբ ցայտուն և գեղեցիկ յատկութիւններով: Երգի հեղինակը վերջին երեք տուները ընդհանրապէս, բայց վերջին տունին մէջ յատկապէս այսպէս կը բնութագրէ Չաուշը և կ'աւարտէ երգը. «Հայոց փրկիչ քեզ անուանենք, որպէս քաջ Վարդան նմանիս, արժանի ես, որ զովասանենք, հզօր բազում ՍԱՐՀԱՏ[4] սիրալի»:

Թիկնապահն էր Գէորգ՝ քաջ, մտադիր,
Կանանչ լեռները՝ հագուց կարմիր,
Հիւպատոսաց զեկուցագիր
Եւրոբ լսուեց, քաջի խընդիր:

Անտոք կ'եփուէր անմատչելի
Մոսին հրացան մեզ յարգելի,
Տարօնի գործը սքանչելի,
Գերման մնաց զարմանալի:

Հայոց փրկիչ քեզ անուանենք,
Որպէս քաջ Վարդան նմանիս,
Արժանի ես, որ զովասանենք,
Հզօր բազում ՍԱՐՀԱՏ սիրալի:

«Ես մենակ չեմ» խորագիրը կրող երգին չորրորդ տունին մէջ Գէորգ Չաուշը այսպէս կը յիշատակուի.

Սասնոյ սարեր բուսան կակաչ,
Գէորգ կտրեց Խալիլի ականջ,
Մի՛ լար, մայրիկ, ես մենակ չեմ,

Մի՛ լար, հոգի՛ս, ես մենակ չեմ[5]:

Յաջորդ երգին մէջ՝ «Հերոս Տարօնի երգը», որ աւելի ճանչցուած է երգի առաջին տան առաջին տողով՝ «Մայր Հայաստանն է կու լայ սգաւոր», Գէորգ Չաւուշի մասին հետևեալ ակնարկութիւնը կ՚ըրուի.

Շրջում էր Գէորգ փոքրիկ խումբերով,
Ընդդէմ թշնամուն կռիւ մղելով,
Անվեհեր կռուում քաղցր երգերով,
Վրէժ առ վրէժ Հրայր յիշելով[6]:

Սեբաստացի Մուրատին նուիրուած երգին մէջ՝ «Մուրատի երգը», Գէորգ Չաւուշ Հրայր Դժոխքի հետ զուգահեռաբար կը յիշուի.
Գէորգ Չաւուշ և Հրայրը,
Սարսափ պատեց Քիւրտիստանը,
Կոտորուեցաւ ողջ բանակը,
Ազատուած է Հայաստանը[7]:

«Անցնինք Սասուն» կամ «Երգ հայ ֆիտայիներուն» վերնագրուած երգին երկու տուներուն մէջ այսպէս կը վկայակոչուի Չաւուշ.

Հանեց, թափեց իւր փամփուշտներ,
Կողքի ընկաւ, ախ քաշեց,
Գետնի քարեր կը դղրդեն,
Գէորգ Չաւուշ կը բոռեր:

Ելէ՛ք, տղե՛րք, էլ ժամ չկայ,
Շուն թուրք պատել է չորս կողմ,
Գէորգը լը չվերջացուց,
Թուրքեր ցրուան հազար կողմ:

«Մշոյ դաշտեր» երգին մէջ, որ աւելի յայտնի է առաջին տան առաջին տողով՝ «Մշոյ դաշտեր իմ սիրուն», Գէորգ Չաւուշին մասին այսպէս կ՚ըսուի.

Գէորգ Չաւուշը մեր քաջ
Գոռում էր՝ առա՛ջ, առա՛ջ:
Աստուած մեզի օգնական,
Կռուով մտնենք Տաճկաստան,
Փրկենք երկիր Հայաստան:

Մեծ ժողովրդականութիւն վայելող «Արդեօք ովքե՞ր են» երգին երկու տողերուն մէջ Գէորգ ներառուած է.

Գէորգ Չաւուշն էլ ջահել ու ջիւան,
Ունէր մեծ անուն Սարերի ասլան:

Շարքը կը շարունակուի այն երգերուն, որոնց մէջ անպայման կ՚ոգեկոչուի Գէորգ Չաւուշը:
Յաջորդ երգին մէջ ևս, որ խորագրուած է «Հայ քաջեր», այլ ֆետայիներու կողքին կը հանդիպինք նաև Չաւուշին, երբ կ՚ըսուի.

Ֆիտայապետ Գէորգ Չաւուշ
Իւր քաջերով անսասան,
Իւր կատարած սխրանքներով
Կոչուեց Սարերի ասլան:

Յաջորդը «Հայ ֆիտայիք» երգն է, որու առաջին տունին մէջ Չաւուշ ներկայ է Անդրանիկի կողքին.
Մուշն ու Սասուն՝ հայոց պարծանք,
Ոտքի կանգնեցին, անթիւ զոհերի գներով ազգը փրկեցին,
Անմնացորդ իրենց կեանքը ազգին նուիրած,
Քաջ Անդրանիկ, Գէորգ Չաւուշ միշտ առաջ ընկած:

Այստեղ հերթականութեամբ նշեցինք իբրև օրինակ ծառայող կարգ մը երգեր, որոնց մէջ Գէորգ Չաւուշին անունը ընդգծուած է: Ուստի այդ օրինակներու շարքին վերջին կը ներկայացնենք Ներսիկ Իսպիրեանի «Հզօր բանակ» երգին առաջին տունը, որուն մէջ արձանագրուած է.

Սարի ասլան Չաւուշ Գէորգ,
Մուշն է պաշարել թուրքի զօրք,
Կ՚ուզենայ նա ջնջել հային,
Ուր է չկայ քաջ ֆիտային:

Ուսումնասիրութեան ամբողջականութեան համար

Գևորգ Չավուշի գերեզմանը

պարտք սեպեցինք ներկայացնելու երգերու ընդմէջէն կարգ մը տուներ, որոնք տողով մը կամ տունով մը ձօնուած են Գէորգ Չաուշին: Այսպէս կարելի է օրինակներու շարքն ընդարձակել, սակայն կը բաւարարուինք այսքանով:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայ յեղափոխութեան և հայ ֆետայութեան պատմութեան ամէնէն ինքնատիպ դէմքերէն եղաւ Գէորգ Չաուշը: Ֆետայական կռիւները առասպելական հերոսի մը վերածած էին զայն:

27 մայիս 1907 թուականին Սուլուխի կռիւին նահատակուած Չաուշի սխրանքներն ու դիւցազնական կենսագրութիւնը բնութագրող և անոր առթած հպարտանքն ու պարծանքը գովերգող եղանակաւորուած պատմագրութիւն ստեղծուեցաւ նաև երգերով, որոնք յատուկ ուսումնասիրութեան նիւթ դարձուցինք:

Վերջապէս, կը հաստատենք, որ Գէորգ Չաուշին նուիրուած երգերուն արծարծումն ու գեղարուեստական օգտագործումն իրենց մեծ դերը ունեցան քանի մը ուղղութիւններով, և նախ իբրև ականատեսի վկայութիւն՝ դէպքերը արխիւացան թէ՛ իբրև յիշողութիւն ու ազդեցութիւն հայ նոր սերունդին վրայ, թէ՛ իբրև քարոզչութիւն:

Վերոյիշեալ երգերէն մաս մը նախ երգուած է յօրինող անհատներու և անոնց անմիջական շրջանակի՝ անհատ, ֆետայի, և ընդհանրապէս ժողովուրդին կողմէ բանաւոր: Հետագային այդ երգերը բանաւոր փոխանցուած են սերունդէ սերունդ, երբեմն՝ նոյնիսկ աղաւաղուած ձևով: Ժամանակի ընթացքին երգած են նաև բազմաթիւ երգիչ-մենակատարներ և երգչախումբեր զանազան երաժշտական մշակումներով, ամէն մէկը՝ բնականաբար իր յատուկ ոճով: Ձայնագրութեան սարքերու ստեղծումով երգերէն մեծ բաժին մը արձանագրուած և արխիւացած է:

Միւս կողմէ՝ կան այլ երգեր, որոնք թէև ուղղակիօրէն չեն առնչուած կամ նուիրուած յատուկ Գէորգ Չաուշին, սակայն անոնց մէջ ներառուած է Գէորգ Չաուշ իբրև անուն, երբեմն՝ աւելին՝ իբրև կերպար, կամ իր տիպարի մասին քանի մը տող կամ նոյնիսկ տուն, ինչպէս՝ «Հերոս Տարօնի երգը», «Հայ քաջեր», «Հայ ֆիտայիք» և այլն:

Այս ուսումնասիրութեան մէջ ըրած վերլուծումներն ամբողջացնելու նպատակով կը կատարենք կարգ մը եզրայանգումներ երեք բնագաւառներու ուղղութեամբ՝ ազգային, գաղափարական և մշակութային-երգարուեստ.

1.Գէորգ Չաուշի միջոցով կը ներկայացուի հայ ազգային-ազատագրական շարժման հերոսի ամբողջական կերպարը:

2. Գէորգ Չաուշ՝ իբրև Սասունի զաւակ, կը ներկայանայ Տարօն աշխարհի խորհրդանիշը, արտայայտիչը քաջութեան, իր ժողովուրդի ազատագրման գործին նուիրուած անձնազոհ մարտիկը, որուն մէջ շաղախուած են իր հայրենի աշխարհին տուած ուժն ու խիզախութիւնը: Հոգը, որուն վրայ ապրեցաւ ու գործեց, Չաուշի հոգևոր սնունդն էր և քաջութեան ու խիզախութեան աղբիւրը:

3. Գէորգ Չաուշին նուիրուած երգերը հայկական ու մանաւանդ «Հայ յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցութեան մշակութային և պատմական ժառանգութիւնն են:

4. Չաուշին նուիրուած շուրջ մէկ դար առաջուան երգերը մինչև օրս կ'երգուին, դեռ աւելին՝ կը յօրինուին նորերը: Քանի որ կ'երգուին, ու նոր երգեր ծնունդ կ'առնեն, ուրեմն կ'ապրին: Կ'ապրին, որովհետև յաջորդող սերունդներուն մէջ անոնց ուժականութիւնն ու այժմէականութիւնը տակաւին չեն կորսուած, աւելի՛ն՝ ընդգծուած կերպով ունեն դաստիարակիչ դեր:

5. Այսպիսով՝ հայոց հասարակական, ինքնապաշտպանական-ռազմական կեանքին մէջ Գէորգ Չաուշի հերոսութիւնը, հմայքն ու գաղտնիքը իրենց դրոշմը ձգեցին այս երգերու բնոյթի ու կենցաղավարումի հանգամանքներուն վրայ:

6. Գէորգ Չաուշ ամէն բանէ առաջ և ամէն բանէ անդին ազգային, գաղափարական, բարոյական ըմբռնում ու ենթահող ունի իր խիզախութեամբ ու քաջարի բնոյթով և իր հանգամանքով:

Արդարև, այս աշխատասիրութիւնը, ըլլալով գեղարուեստական՝ երգարուեստի բնագաւառին մէջ ինկած հետազօտական աշխատութիւն, դէպքի կամ արարքի յիշատակման ի խնդիր, առ այդ, ինքնաբերաբար կ'ընդգրկէ նաև պատմական և քաղաքական հոլովոյթ և բնութագրում: Այս իսկ պատճառով կ'ընդգծենք, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը Գէորգ Չաուշի նման ֆետայիի կերպարին ընդմէջէն հայ ժողովուրդին բարոյական ու ինչպէս նաև պայքարելու կորովը վառ պահեց: Միւս կողմէ՝ սարսափի մատնեց և զգաստացուց քիւրտն ու թուրքը:

Չաուշ իր ապրած կեանքի փորձառութիւնը, ռազմական և հերոսական տաղանդը խտացուցած էր իր խիստ կարևոր հետևեալ խօսքերուն մէջ. «Յեղափոխականին կեանքը փոթորկալի կեանք մըն է՝ դառնութիւններով լեցուն. անոր ճանապարհը փշոտ և տատասկոտ է: Այդ ճամբան քալողներու վրայէն միշտ կը սաւառնի մահուան աստուածը… Շատերը կը ցանկան ֆետայի ըլլալ, սակայն քիչեր կ'արժանանան այդ պատուոյն: Պէտք է քալել, քալե՛լ, որպէսզի հասնինք մեր նպատակատեղին: Էհ, արծուի ճուտե՛ր, մենք որ այս փոքր նեղութիւնը չկրնանք տանիլ, ինչպէ՞ս տանի այն հերոս ժողովուրդը, որ ամէն օր զրկանք-չարչարանքներու ենթակայ է»:

Հետևաբար Գէորգ Չաուշի այսօրուան պատգամը հայ ժողովուրդի՝ գոյապայքարին ու արդար դատին մէջ քաջ ու անվախ ըլլալն է՝ պայքարելու համար թշնամիին դէմ, որ կը փորձէ խոչընդոտել հայութեան արդար իրաւունքներուն տիրացումը:

Անառարկելի ու անկրկնելի է Գէորգ Չաուշի ազգային, հայրենասիրական, յեղափոխական-մարտական կարողութիւնը, յատկապէս՝ իր գաղափարական դրուածքով ու խիզախութեամբ: Աւելին՝ քիւրտերու և թուրքերու դէմ անոր մղած կռիւներն ու ինքնապաշտպանական գործողութիւնները եկան ապացու-

ցելու, որ աւելի լաւ է զոհուիլ պատիւով իբրև մարդ, քան քարշ տալ խղճուկ, ստրկական գոյութիւն: Եկան հաստատելու, որ Հ.Յ. Դաշնակցութեան դատաստանէն կարելի չէ խուսափիլ երբէք:

Գէորգ Չաուշի կերպարը՝ իբրև ֆետայիի, դաշնակցական բարոյական սկզբունքները և մարտական պատրաստութիւնը միախառնուեցան և դրսևորուեցան առասպելական երևոյթով, որ տասնեակ տարիներ դաստիարակիչ և ուսուցանելիք կողմեր ունեցաւ և տակաւին կ'ունենայ:

Վերջապէս, իրարայաջորդ սերունդներ քաջ կը գիտակցեն, որ հայ ժողովուրդը 19-րդ դարուն Արևմտահայաստանի տարածքին իր մղած ազատագրական զինեալ պայքարի ընթացքին է, որ ծնունդ տուաւ Գէորգ Չաուշի նման անմման հերոսի մը, մէկը, որ ծնաւ հայ ժողովուրդի ծոցէն, սնուեցաւ Դաշնակցութեան յարկին տակ, աւելին՝ իր խիզախութեամբ և սխրանքներով անմահացաւ ժողովուրդի սրտին մէջ: Այդ իմաստով ալ Չաուշի անկրկնելիութիւնը, հզօրութիւնը և ժողովրդականութիւնը կը մնան շեշտադրուած:

Ազատատենչ ու աննկուն ոգիի վերածնունդ, հայ ազատագրական շարժման մարտական ուժի գերագոյն խորհրդանիշ, դաշնակցական Գէորգ Չաուշի պատգամը այսօր տիրական կը մնայ նոր սերունդներուն մէջ՝ անվախ, քաջարի ու պայքարող ըլլալու մինչև հայութեան իրաւունքներու ձեռքբերումը: ■

Օգտագործուած աղբիւրներ

1. «Ազգային ընդարձակ երգարան, աւելի քան 1000 երգեր եւ ոտանաւորներ ազգային, յեղափոխական, գեղջկական եւ երգիծական», մատենաշար «Ազդակ», թիւ 7, Պէյրութ, տպ. «Ազդակ», 1932:
2. «Արեան ձայներ» երգարան, երկրորդ հրատարակութիւն, Թիֆլիս, 1906:
3. «Գողթան քնար» երգարան, հրատարակիչ՝ նկարիչ Աւօ, Հալէպ, 1947:
4. «Դրօշակ», Փարիզ, 1907, յունիս-յուլիս, թիւ 184, օգոստոս, թիւ 185, սեպտեմբեր, թիւ 186, հոկտեմբեր, թիւ 187, 1932, յունիս, թիւ 6 (321):
5. «Ընդարձակ գրպանի երգարան» (Ազգային, յեղափոխական, սիրային, ժողովրդական եւ գեղջկական երգեր: 300 երգ), հրատարակութիւն Պէրպէրեան գրատան, թիւ 5, Բոստոն, 1919:
6. «Ժողովրդային երգարան», հրատարակութիւն Ի. Ա. Երան, թիւ 5, երկրորդ տպագրութիւն, Բոստոն-Վաշինգտոն:
7. «Ծաղկեփունջ» երգարան, Թիֆլիս, 1907:
8. «Հայկական հարց. հանրագիտարան», Եր., 1996:
9. «Հայուն երգարանը», հ. Ա., Կ. Պոլիս, 1911:
10. «Յեղափոխական եւ ժողովրդային երգեր», հրատարակութիւն «Մշակ» մատենաշարի, Պէյրութ, 1972:
11. «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», խմբ.՝ Երուանդ Փամպուքեան, հ. Ե., Պէյրութ, 2007, հ. Զ., Պէյրութ, 2010, հ. Է., Պէյրութ, 2010:
12. «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», խմբ.՝ Հրաչ Տասնապետեան, հ. Ա., բ. տպ., Պէյրութ, 1984, հ. Բ., բ. տպ., Պէյրութ, 1985:
13. «Պատանիին երգարանը», Պէյրութ, 1959:
14. Անձնական արխիւներ:
15. Աստուածատրեան Ա., Գէորգ Չաուշը, «Հայրենիք» ամսագիր, Բոստօն, 1957, թիւ 3, էջ 84-97:
16. Աստուածատրեան Ա., Սուլուխի կռիւը եւ Գէորգ Չաուշի մահը, «Հայրենիք» ամսագիր, Բոստօն, 1959, թիւ 10, էջ 51-64:
17. Աւօ, Գէորգ Չաուշ, Պէյրութ, 1972:
18. Աւօ, Յեղափոխական երգեր, հրտ. «Յեղափոխական ալպոմ», Թ. տիպ, Պէյրութ, 1979:
19. Բդէեան Ս. եւ Մ., Հարազատ պատմութիւն Տարօնոյ, խմբ.՝ Աղան Տարօնեցի, Գահիրէ, տպ. «Սահակ-Մեսրոպ», 1962:
20. Գէորգեան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարութիւնը եւ էջեր նրա հերոսապատումից, Եր., 2012, էջ 261-289:
21. Զարդարեան Ռ., Գէորգ Չաուշ, Պէյրութ, 1967:
22. Հ. Յ. Դաշնակցութեան դիւանէն Գէորգ Չաուշի ինքնակենսագրութիւնը, «Դրօշակ», Փարիզ, 1929, թիւ 9, էջ 181-185:
23. Ղազիեան Ա., Հայ ժողովրդական ռազմի եւ զինուորի երգեր, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1989:
24. Ներսիսեան Ա., Գէորգ Չաուշի սպանութեան առեղծուածը, Եր., 1992:
25. Շառոյեան Ռ., Էրգրի աստուածները. Գէորգ Չաուշ, Եր., «Լուսակն», 2008:
26. Շարաֆեան Ե., Գէորգ Չաուշի կեանքէն, «Հայրենիք» ամսագիր, Բոստօն, 1957, թիւ 10, էջ 95-98:
27. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ., Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1973, հ. Գ., Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1974, հ. Դ., Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1975:
28. Սալման [Համազասպ Բաղէշցեան], 1907-ին, «Գէորգ Չաուշ» (համառօտ կենսագրական, պատկերով), հրատ. «Դրօշակ», Ժընեւ:
29. Սասունի Կ., Գէորգ Չաուշ (կենսագրական գիծեր), Փարիզ, 1939:
30. Սասունի Կ., Հրայրի դերը (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), «Հայրենիք» ամսագիր, Բոստօն, 1931, թիւ 4:
31. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1957:
32. Սասունի Կ., Սասուն–Մուշի կռիւները 1904-ին (մասնակցողներու պատմածներէն), ա. տ., 1917:
33. Սասունի Կ., Սարերու ալանը, Պէյրութ, 1966:
34. Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. Ա., Փարիզ, 1932:
35. Տասնապետեան Հ., Պատմութիւն հայ յեղափոխական շարժման եւ Հ.Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, 2009:
36. Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա., Պոսթրն, 1950:

Հղում

1. «Պատանիին երգարանը», Պէյրութ, 1959, էջ 58:
2. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Դ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1975, էջ 179:
3. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Գ. հատոր, Բ. հրատարակութիւն, Պէյրութ, 1974, էջ 245:
4. Գէորգ Չաուշ:
5. Տպագրուած է «Նոր քնար» երգարանին մէջ (հրատարակութեան տեղն ու թուականը չեն նշուած, էջ 534):
6. «Գողթան քնար» երգարան, հրատարակիչ՝ նկարիչ Աւօ, Հալէպ, 1947, էջ 33: Տես նաեւ «Յեղափոխական եւ ժողովրդային երգեր», հրատարակութիւն «Մշակ» մատենաշարի, Պէյրութ, 1972, էջ 76:
7. Նոյն տեղը, էջ 56:

Արցախը Միացյալ Հայաստանի գաղափարի համատեքստում: Թևանի ու թևանականների պայքարը Արցախը Հայաստանին վերամիավորելու համար

Անի Մելքոնյան
Պատմաբան

«Մանուկները ծնողի մահը չեն ըմբռնում, ազգերը՝ հերոսի»:

Ավետիս Ահարոնյան

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին քաղաքականության օրակարգային գլխավոր հարցը ի սկզբանե՝ ավելի քան երեք տասնամյակ, Արցախի հիմնախնդիրն է: Հիմնախնդիր, որի արմատները հասնում են մինչև ցարական Ռուսաստանի ժամանակները, բայց այն առավել սրվեց 1918-1921 թթ., երբ վերականգնվեց Հայաստանի Հանրապետությունը, և Էնվերի եղբայր Նուրի փաշայի ծրագրով Հայաստանի հարևանությամբ և Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասում ստեղծվեց Արևելամուսուլմանական հանրապետությունը: Արհեստականորեն նորաստեղծ պետական միավորին տրվեց «Ադրբեջան» անվանումը, որը ծրագրում էր զավթել Հայաստանի տարածքները, եթե նույնիսկ դրանք 80 և ավելի տոկոսով բնակեցված էին հայերով: Այդ տարածքներից մեկն էլ 94 % հայ բնակչություն ունեցող Արցախն էր կամ գոնե նրա լեռնային մասը, որը 1921 թ. հուլիսի 5-ին Ստալինի ապօրինի որոշմամբ կցվեց Ադրբեջանին: Այսպիսով՝ մոտ յոթ տասնամյակ հիմնախնդիրը սառեցվեց, այնուհետև կրկին սրվեց 1988 թ. և 1990-ականներին Արցախի ազատագրումից հետո, երբ թվում էր, թե հիմնախնդրի արդարացի լուծումը մոտ է: 2020 թ. կրկին արմատական շրջադարձ տեղի ունեցավ ի վնաս հայության. այս անգամ Հայաստանի ղեկավարը Արցախի մի մասը հանձնեց Ադրբեջանին և Հայաստանի իշխանության անունից հրաժարվեց Արցախի փաստացի անկախ հանրապետությունից:

Առաջին հանրապետության տարիներին Արցախը Հայաստանի կառավարության և խորհրդարանի կողմից հռչակված Անկախ և Միացյալ Հայաստանի անբաժան մասն էր, իսկ խորհրդայնացումից հետո Հայաստանում իշխող հայ բոլշևիկները ձեռքերը լվացին Արցախից՝ բառ անգամ չասելով հայոց հայրենիքի այդ հատվածը Ադրբեջանին կցելու Ստալինի ապօրինի որոշման դեմ: Հակառակ դրա՝ Արցախում թևանականները շարունակում էին հերոսական պայքարը՝ երկրամասը խորհրդայնացված Հայաստանին միացնելու համար: Թևանականներին ու նրանց պայքարին կանդրադառնանք փոքր-ինչ ուշ, իսկ մինչ այդ՝ մի քանի խոսք Անկախ և Միացյալ Հայաստանի մասին: Վերջին 103 տարվա ընթացքում հայ քաղաքական կյանքի օրակարգային գլխավոր հարցը Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծումն է: Յուն հայ քաղաքական օրակարգ մտավ 1919 թ., երբ կարծես նորաստեղծ Հայաստանի Հանրապետության համար Արևմտյան Հայաստանի վեց նահանգները (Պողոս Նուբար փաշայի ներկայացրած ծրագրով՝ նաև Կիլիկիան) իրեն միացնելու բարենպաստ պայմաններ էին ստեղծվել:

1919 թ. մայիսի 28-ին ընդունվեց հռչակագիր Միացյալ և Անկախ Հայաստանի մասին, և արևմտահայ 12 գործիչներ համալրեցին ՀՀ խորհրդարանի պատգամավորների շարքերը: Հայաստանի Հանրապետությունում Անկախ և Միացյալ Հայաստանի գլխավոր գաղափարախոսն ու ջահակիրը իշխող կուսակցությունն էր՝ Դաշնակցությունը: Այդ մասին է վկայում ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովում ՀՅԴ ծրագրում Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման նպատակի ամրագրումը: Այսպես. «1919 թ. աշնանը (սեպտեմբերի 27-նոյեմբերի 2) մայրաքաղաք Երևանում գումարվեց ՀՅԴ 9-րդ Ընդհ. Ժողովը, որում կատարվեց կուսակցության նվազագույն ծրագրի մասնակի փոփոխություն: Նոր ծրագրային փոփոխությամբ Միացյալ Հայաստան ստեղծելու պահանջը պետք է դառնար շրջադարձային Դաշնակցության քաղաքական ծրագրերում»[1]:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը ենթադրում էր Ռուսահայաստանից, Տաճկահայաստանի վեց նահանգներից և Կիլիկիայից ձևավորել



Թևան Ստեփանյան

ընդարձակ հայկական պետություն: Այս առումով ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովը արձանագրում էր. «Հայաստանի արտաքին քաղաքականութեան առանցքը պիտի կազմէ Միացեալ Հայաստանի անկախութիւնը օտար պետութիւններին ճանաչել տալու և ապահովելու մտահոգութիւնը»[2]:

Իսկ ինչ Միացյալ Հայաստանի մասին կարող էր խոսք լինել առանց Արցախի ու Զանգեզուրի: Ուստի կուսակցության 9-րդ Ընդհ. ժողովը հայկական այս երկու երկրամասերի վերաբերյալ ընդունեց Միացյալ Հայաստանի գաղափարից բխող մի բանաձև, որով ՀՀ կառավարությանն ու ՀՅԴ Բյուրոյին հանձնարարում էր. «Հայաստանի եղած սահմանները պահել և այդ սահմաններում իշխանութիւն հաստատել, կը յանձնարարէր նաև անմիջականօրէն ձեռք առնել Ղարաբաղի և Զանգեզուրի վերաբերմամբ....»[3], քանի որ պատմականորեն հայկական այդ երկու երկրամասերը իրավացիորեն համարվում էին «Անբաժանելի մաս Անկախ և Միացեալ Հայաստանի Հանրապետութեան»[4]: Եվ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկեց հնարավոր բոլոր քայլերը՝ Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանի Հանրապետությանը միացնելու համար:

Իրադարձությունները ծավալվեցին գահավեժ արագությամբ և ի վերջո հանգեցրին թուրք-բոլշևիկյան դավադրության հետևանքով Հայաստանի խորհրդայնացմանը, ինչն էլ իր հերթին հանգեցրեց մեր երկրի բզկտմանն ու բաժանմանը մի քանի երկրների միջև, քանի որ հայ բոլշևիկների ծրագրերում, ի տարբերություն ՀՅԴ ծրագրերի, Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծման նպատակ չկար, և նրանք հեշտությամբ զիջեցին ոչ միայն Կարսն ու Սուրմալուի գավառը, այլև Ջավախքը, Նախիջևանը, Արցախն ու Զանգեզուրը:

Իհարկե, շատ է խոսվել այն մասին, որ Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի սահմաններում մնաց միայն Գարեգին Նժդեհի հերոսական պայքարի շնորհիվ, բայց գրեթե չի խոսվում նույն ժամանակահատվածում Արցախում ծավալված ոչ պակաս հերոսական պայքարի մասին: Այստեղ պետք է կանգ առնել մեր պատմության թերևս ամենաքիչ ուսումնասիրված էջի, խորհրդային եզրույթով ասած՝ «թևանիստների» պատմության վրա:

Ովքե՞ր էին թևանիստները, ո՞րն էր նրանց նպատակը, և ո՞վ էր նրանց առաջնորդը: Թևանիստներ կոչվում էին Արցախն Ադրբեջանին կցելու դեմ զինված պայքար մղող արցախցի մարտիկները, որոնց նպատակը Արցախը Հայաստանի հետ վերամիավորելն էր, իսկ նրանց առաջնորդը Դիզակի (Հադրութ) Տումի գյուղից դաշնակցական Թևան Ստեփանյանն էր՝ Նժդեհի անդավաճան զինակիցներից մեկը, որը տասնամյակներ շարունակ դարձել էր բոլշևիկյան իշխանությունների (հատկապես Խորհրդային Ադրբեջանի) սարսափը, իսկ ժողովրդի շրջանում՝ առասպելական հերոս: Ո՞վ էր առասպելական, միաժամանակ իրական Թևան Ստեփանյանը: Թևան Աղաջանի Ստեփանյանը ծնվել է 1892 թ. Դիզակի շրջանի Տումի գյուղում: Սովորել է հարևան Տող գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Թիֆլիսի ռազմական դպրոցում, որն ավարտելուց հետո ծառայել է ցարական բանակում որպես վաշտի հրամանատար: Կարճ ժամանակում արժանացել է արծաթե մեդալի և պարգևատրվել տասհարվածանի մառուզերով: Թևանը կռվել է Արևմտյան, ապա՝ Կովկասյան ռազմաճակատում, ականատես եղել Հայոց ցեղասպանությանը, որը շատ ծանր էր տարել:

«1918 թ. վերադառնալով գյուղ, սկսում է աշխատել սեփական տնտեսությունում: Միաժամանակ գլխավորում էր դաշնակցական զինյալներից կազմված ջոկատը, որով պաշտպանում էր Դիզակի արևելյան գյուղերը Կարյագինոյի (Ֆիզուլի) կողմից պարբերաբար կրկնվող թուրք-թաթարների հարձակումներից: Արցախի համար դժնդակ այդ ժամանակներում՝ 1918-ի ամռանը, Շուշիի հայ ազգային խորհուրդը որոշեց դիմադրել ինչպես հարձակվող թուրքերին, այնպես էլ տեղական ադրբեջանցիների զինված ջոկատներին: Ռազմական գործողությունների ղեկավարի նշանակման հարցի քննարկումներին հրավիրված էր նաև Թևանը: Ցավոք, խորհրդակցությունն այդպես էլ արդյունքի չհասավ: Թևանն իր զինակիցների հետ որոշեց ստանձնել ռազմական գործողությունների ղեկավարությունը հարավարևելյան կողմում: Տողի եկեղեցում հանդիսավոր ծեսից հետո գյուղացիների ներկայությամբ, իր կրոնի ուսուցիչ Տեր-Ավետիքի



Տումի գյուղը մինչև Հադրութի հանձնումը. 2020 թվականին

օրհնությամբ Թևանը զենքով երդվեց պաշտպանել ազգի շահերը: Կազմեցին 400 հետևակայիններից և 150 հեծյալներից բաղկացած ջոկատներ»[5]: Թուրքական զորամասի հետ առաջին զինված ընդհարումը տեղի ունեցավ 1918 թ. հոկտեմբերի 18-ին Մսմնա գյուղի մոտ: Հայկական զորքերի ընդհանուր հրամանատարն էր Արտյոմ Լալայանը, ճակատամարտի անմիջական հրամանատարը՝ Լալայանի օգնական, կեմրակուճցի Ասլան Մարութխանյանը: «Մսմնա գիւղի մօտ հոկտեմբերի 18-ին չարաչար կերպով պարտուելով՝ տաճիկները փախել էին, հայերին թողնելով իրանց թնդանօթները և մեծ քանակութեամբ ռազմամթերք»[6]:Այս հաղթանակը կերտելու գործում մեծ դերակատարություն ունեցավ դիզակցիների հեծյալ գունդը՝ տումեցի Թևանի գլխավորությամբ:

1920 թ.՝ Շուշիի հայերի կոտորածից հետո, Դրոյի ղեկավարությամբ ՀՀ զինված ուժերը մտնում ու ազատագրում են Արցախը, Թևան Ստեփանյանն էլ նշանակվում է Դիզակի հրամանատար:

«Ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացվում է, որից հետո տարածաշրջան, այդ թվում՝ Արցախ են ներխուժում 11-րդ Կարմիր բանակի զորամասերը, որոնց միանում են Ղարաբաղում գտնվող մի քանի հազարի հասնող մուսավաթական ասկյարները և իրագործում անասելի բռնություններ: Թվում էր, բոլշևիկների բանակը դարձել էր Ադրբեջանի ազգայնամոլներին ենթակա պատժիչ ջոկատ, որի նպատակն էր Արցախն ու Զանգեզուրը բռնակցել Ադրբեջանին: Սկսվում է ձերբակալությունների, տեռորի, քաղաքական հետապնդումների փուլը: Կալանավորված, ապա բանտից փախած Թևանին հաջողվում է, հիրավի, ժողովրդական ապստամբություն բարձրացնել, որը հետագայում բոլշևիկյան պատմագիրներն անվանեցին «Թևանական ավանտյուրա», ապստամբներին՝ թևանիստներ: 1920 թվականի նոյեմբերին Թևանը մեկնեց Զանգեզուր, հանդիպեց Նժդեհին, որի ծրագրերում նաև Արցախի ազատագրումն էր, ինչին մեծապես կարող էր օժանդակել Թևանը: Վերադառնալով Արցախ՝ շնորհիվ Նժդեհի տված դրամական օգնության, Թևանը հայթայթեց բավարար քանակությամբ զինամթերք և զինուժը հասցրեց 800-ի, ապա՝ 1800-ի, ինչի շնորհիվ ազատագրեց Խծաբերդ, Մեծ Թաղեր, Դրախտիկ, Սուզ, Սարին շեն, Քեշիշքենդ, Ճարտար ու էլի շատ գյուղեր, մի քանի օրից՝ նաև ներկայիս Ստեփանակերտը՝ Շուշին կտրելով Ադդամից: Խորհրդային զորամասերը, տալով բազմաթիվ զոհեր, թողնելով մեծաքանակ ռազմամթերք, պարեն, փախան Ջեբրայիլի կողմերը: Այսպիսով՝ ազատագրելով Դիզակն ու Վարանդան, նաև այլ շրջանների որոշ գյուղեր, Թևանն Արցախը հայտարարեց Հայաստանի անբաժանելի մաս»[7]:

Վրաստանը խորհրդայնացնելուց և Հայաստանում Փետրվարյան ապստամբությունը ճնշելուց հետո՝ 1921 թ. գարնանը, բոլշևիկները մեծաթիվ ուժեր կենտրոնացրին Արցախի դեմ: Թևանի սակավաթիվ ուժերը պարզապես անկարող էին դիմադրել թվով իրենց մի քանի անգամ գերազանցող բոլշևիկներին, Զանգեզուրից օգնություն ստանալ ևս հնարավոր չէր, քանի որ Երևանից դեպի Զանգեզուր էր գալիս մի կործանարար հողմ: Արցախի փոքրաթիվ պաշտպանները մեն-մենակ էին մնացել թվով մի քանի անգամ իրենց գերազանցող թշնամու դեմ. «Բոլշևիկները շրջափակման մեջ էին առել Արցախը, փակել Պարսկաստանի սահման տանող բոլոր ճանապարհները, ուժեղ հսկողության տակ առել Լաչինով ու Կուբաթլուով Զանգեզուր տանող ուղիները: Անհավասար մարտերում արցախցիները նահանջեցին: 1921 թ. ապրիլի 18-ին Թևանը 700 զինակիցների հետ կատաղի մարտերով հասավ սյունեցիների կողմից բացված Զաբուղի միջանցքը և անցավ Լեռնահայաստան, ավելի ուշ՝ Պարսկաստան»[8]:

Հետագայում մի քանի անգամ Թևանն անցավ Արաքսը և կնոջն ու դստերը տանելու նպատակով հասավ Արցախ, եղավ հայրենի գյուղում, նաև Ստեփանակերտում, ուր տեղափոխվել էր ընտանիքը: Հարազատներին արտերկիր փախցնելու ծրագիրը ձախողվեց, բայց նրա հանդեպ մատնության, հետապնդումների, նրա՝ մատնիչին պատժելու, սարերում թաքնվելու, ծածուկ գործելու մասին առասպել դարձած պատմությունները շրջանառվում էին ժողովրդի մեջ:

Թևանը շատ անգամներ անցավ հայոց մայր գետը,

Թևանի կիսանդրին հայրենի գյուղում՝ ներկայումս ավերված է ազերիների կողմից

հաստատվեց հայրենի Արցախում, բայց հետո էլի ստիպված եղավ տարագրվել: Նա, ինչպես արդեն ասել ենք, Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության սարսափն էր, և 1941 թ. Խորհրդային Ադրբեջանի ԿԿ առաջին քարտուղար Միրջաֆար Բաղիրովը խորհրդային հետախուզության աշխատակից Էդուարդ Մարտիրոսովին հանձնարարում է ձերբակալել նրան: Ահա Բաղիրովի հանձնարարականը հայազգի բոլշևիկ հետախույզ Մարտիրոսովին. «Պետք է ձերբակալել ավազակ Թևանին, պետք է ոչնչացնել այդ հային, պետք է գնդակահարել այդ ղարաբաղցուն, պետք է ջնջել Թևան անունը»[9]:

Իհարկե, խաբեությամբ ու դավադրությամբ Մարտիրոսովը կարողացավ Իրանում ձերբակալել և Բաքու տեղափոխել Թևանին, որտեղ էլ, ըստ տարածված լուրերի, տեղի ունեցավ նրա դատավարությունը: Թևանին դավադրությամբ ծուղակը գցած և ձերբակալած Մարտիրոսովը գրում է. «….դատավարության վերջին օրը Թևանը, արյունոտված պիջակի գրպանից հանելով մի փոքրիկ քսակ, պարզում է դեպի Մարտիրոսովը և ասում. «Այս քսակի մեջ ես պահում եմ մի բուռ հող, որը վերցրել եմ հայրենի Ղարաբաղից: Այս բուռ հողը իմ սրտի մեջ պահում եմ քսան տարուց ավելի: Ես այս հողի համար եմ պայքարել, այս հողը հային պահելու համար են ինձ հետապնդել և օտարել իմ հայրենի Ղարաբաղից: Այս հողը, իբրև սրբություն, որպես մեր քաջ նախնիների արյամբ ամրացած, կրել եմ մարմնիս վրա և ուժ ու եռանդ ստացել: Որտեղ էլ որ մեռնեի, իբրև պատգամ պիտի խնդրեի այս մեկ բուռ հողը շաղ տան գերեզմանիս վրա: Խնդրում եմ կատարեք իմ այս պատգամը….»»[10]:

Թևանին դատապարտում են գնդակահարության, և այստեղ է, որ սկսվում է իրարամերժ պատմությունների մի ամբողջ շղթա այն մասին՝ գնդակահարվե՞լ է արդյոք Թևանը, թե՞ ոչ: «Որոշ տեղյալներով, նրան գնդակահարել են, ոմանք պնդում են Սիբիր աքսորվելու, մյուսները՝ իբր բոլշևիկների կողմն անցնելու և որպես հետախույզ աշխատելու, ուրիշներն էլ՝ դարձյալ փախչելու մասին: Տեսակետ կա, որ Թևանին առհասարակ չեն բռնել, և այս պատմությունը հորինվել է իրենց երբեմնի հրամանատարին սպասող թևանիստների (այսպես էին Արցախում կոչում հակախորհրդային տարրերին) հույսերը մարելու համար: Հայաստանում գտնվող արխիվային սակավ փաստաթղթերում նշվում է միայն գնդակահարության մասին: Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության տեղեկանքով՝ Թևան Ստեփանյանի քրեական գործի պահման մասին տեղեկություններ չկան: Նշված է միայն, որ գնդակահարության մասին դատավճիռը կայացվել է 1942 թ. սեպտեմբերի 16-ին, այն էլ՝ ՌԴԽՍՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, ինչը, որոշ մասնագետների կարծիքով, խոսում է Թևանին Ռուսաստան տեղափոխելու վարկածի օգտին: Դատավճիռն իրականացնելու մասին ոչինչ չկար»[11]: Իհարկե, չի կարելի բացառել նաև, որ Թևանին բռնելու և գնդակահարելու մասին լուրերը տարածվում էին հատուկ նպատակով՝ ազատագրական ձգտումներն Արցախում մարելու, նրան սպասողներին հուսահատեցնելու համար, ինչպես մինչև 1955 թվականը բազմաթիվ լուրեր էին տարածում Նժդեհի մահվան մասին, բայց փաստ է, որ 1941 թվականից հետո Թևանի մասին պատմություններն արդեն միայն ենթադրությունների ժանրից են, գուցե նաև այն պատճառով, որ, ինչպես իրավացիորեն նշել է Ավ. Ահարոնյանը, «Մանուկները ծնողի մահը չեն ըմբռնում, ազգերը՝ հերոսի»[12]: Ու թեև հետագա տարիներին Ադրբեջանի բռնապետական կառավարությունը Արցախում իր վայրագությունները, արցախցիների նկատմամբ բռնաճնշումները «բացատրում» էր «թևանիստների» դեմ պայքարով, բայց, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Արցախում ապրող բոլոր հայերը «թևանիստներ» էին, որոնց արդար զայրույթը՝ մայր հայրենիքին միանալու պահանջով, պայթեց 1918 թ. մայիսից ու 1988 թ. փետրվարից հետո՝ առաջին անգամ հանգեցնելով համազգային բացառիկ միասնության: Արցախի կամ, ինչպես այն ժամանակ էին ասում, ԼՂԻՄ հայության (կազմում էր բնակչության 80 %-ը) արդարացի պահանջին, որն արտահայտվում էր խաղաղ ցույցերով, Ադրբեջանը պատասխանեց իրեն բնորոշ ոճով՝ բռնությամբ ու արյունահեղությամբ, և սանձազերծեց պատերազմ փոքրիկ Արցախի դեմ: Հայաստանն իհարկե չէր կարող Արցախին միայնակ թողնել, և Հայաստանից ու Սփյուռքից սկսվեց հազարավոր «նժդեհների» ու «դրոների» կամավոր մեկնումը Արցախ՝ միանալու

համար «թևանիստների» արդար կռվին: Որպես արդյունք՝ ազատագրվեց Լեռնային Արցախը, որի հիմքի վրա հռչակվեց Լեռնային Ղարաբաղի (2016 թվականից՝ Արցախի) Հանրապետությունը: Այսպիսով՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի ՀՅԴ գաղափարախոսության մի փոքրիկ մասը՝ Արցախի ազատագրումը, իրականություն էր դարձել, և ենթադրվում էր, որ այն պետք է պատվանդանը դառնար ապագա Միացյալ Հայաստանի, բայց… 2018 թ. «հեղափոխությամբ» Հայաստանում իշխանության բերվեցին մարդիկ, որոնց համար խորթ է ոչ միայն Միացյալ Հայաստանի, այլև հայկական Արցախի, ազգ-բանակի ու ազգային պետականության գաղափարներն ընդհանրապես: Հետևանքը եղավ 2020 թ. նոյեմբերի 9-ը, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը, ոտնահարելով ՀՀ Սահմանադրությունն ու հայ ժողովրդի ազգային շահերը, միանձնյա որոշում կայացրեց Արցախի 75 %-ը Ադրբեջանին հանձնելու մասին, այնուհետև սկսեց համոզել, որ Արցախը «Ադրբեջան է, և վերջ», իսկ հետևանքը եղավ այն, որ Հայաստանի Հանրապետությունը այսօր կանգնած է իր ինքնիշխանությունը կորցնելու վտանգի առաջ. չէ՞ որ Հայաստանի անկախության գործընթացը սկսվեց միայն ու միայն Արցախում սկիզբ առած ազատագրական պայքարի շնորհիվ: Արցախը դարձավ այն վեմը, որի վրա բարձրացավ Հայաստանի անկախությունը, և Արցախի հնարավոր կորուստը կգուժի Հայաստանի՝ որպես պետության վերացման մասին այնպես, ինչպես 1920 թ. հոկտեմբերի 30-ին Կարսի անկումը գուժեց Հայաստանի Հանրապետության անկախության կորստի մասին:

Այսինքն՝ եթե 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի անկախության կորուստը հանգեցրեց Արցախի, Նախիջևանի, Ջավախքի ու ՀՀ մյուս տարածքների կորստին, ապա մեր օրերում Արցախի բռնակցումը Ադրբեջանին կարող է հանգեցնել Հայաստանի անկախության կորստին… Հայաստանի ճակատագիրը որոշվելու է Արցախով, իսկ Արցախի հայկական մնալ-չմնալու համար չափազանց կարևոր է այն հանգամանքը, թե որքան շուտ Հայաստանի իշխանության ղեկից կհեռացվեն ազգային պետականության գաղափարին խորթ ու Միացյալ Հայաստանի ստեղծմանը դեմ նորօրյա օտարասուն «կայաններն» ու «ավիսները»: Իսկ նրանցից հետո եկողները կլինե՞ն արդյոք Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականը կրողներ: Այս հարցերի պատասխանը պետք է տա հայ ազգը Արցախում, Սյունիքում, Երևանում, Ջավախքում ու Սփյուռքում: Ի լրումն ասվածի նշենք նաև, որ 2011 թ. Տումի գյուղում կանգնեցվել է Թևան Ստեփանյանի կիսանդրին, այնուհետև Թևանի պապենական տունը վերանորոգվել և գործում էր որպես նրա տուն-թանգարան, բայց 2020 թ. Դիզակի հետ միասին դավաճանաբար թշնամուն հանձնվեց նաև Թևանի հայրենի գյուղը՝ Տումին, որտեղ գտնվող նրա կիսանդրին կովկասյան թուրքերն ավերեցին: ■

Հղումներ

1. Հակոբյան Ա., Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը հայոց պատմության հոլովույթում, Եր., 2020, էջ 105-106:
2. Քաղվածքներ ՀՅԴ 9-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներից, Եր., 1920, էջ 5:
3. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7 (Է), Թեհրան, 1982, էջ 206:
4. Նույն տեղում:
5. https://www.artsakhtert.com/arm/index.php/carriage/item/20963-legendy (մուտք՝ 30.10.2022).
6. Ասատրյան Հ., Հայաստան – Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, «Հատընտիր», Եր., 2004, էջ 343, http://bnaban.am/wp-content/uploads/2016/01/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF-%D4%B1%D5%BD%D5%A1%D5%BF%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6.-%D5%80%D5%A1%D5%BF%D5%A8%D5%B6%D5%BF%D5%AB%D6%80.pdf (մուտք՝ 30.10.2022):
7. https://www.artsakhtert.com/arm/index.php/carriage/item/20963-legendy (մուտք՝ 30.10.2022).
8. Նույն տեղում:
9. Թևան, Լեգենդ և իրականություն, փաստագրական ֆիլմ, https://www.youtube.com/watch?v=SyM9DvImR28#t=245 (մուտք՝ 30.10.2022):
10. https://www.aysor.am/am/news/2011/07/23/tevan-stepanyan/315442 (մուտք՝ 30.10.2022).
11. https://www.artsakhtert.com/arm/index.php/carriage/item/20963-legendy (մուտք՝ 30.10.2022).
12. http://www.ysu.am/newspaper/hy/1395060080#.Y10C-_1BzIU (մուտք՝ 30.10.2022).

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. Ասատրյան Հ., Հայաստան – Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, «Հատընտիր», Եր., 2004:
2. Հակոբյան Ա., Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը հայոց պատմության հոլովույթում, Եր., 2020:
3. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7 (Է), Թեհրան, 1982:
4. Քաղվածքներ ՀՅԴ 9-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներից, Եր., 1920:

բ) Համացանցային նյութեր

1. https://www.artsakhtert.com/arm/index.php/carriage/item/20963-legendy (մուտք՝ 30.10.2022).
2. http://bnaban.am/wp-content/uploads/2016/01/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF-%D4%B1%D5%BD%D5%A1%D5%BF%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6.-%D5%80%D5%A1%D5%BF%D5%A8%D5%B6%D5%BF%D5%AB%D6%80.pdf (մուտք՝ 30.10.2022).
3. https://www.aysor.am/am/news/2011/07/23/tevan-stepanyan/315442 (մուտք՝ 30.10.2022).
4. http://www.ysu.am/newspaper/hy/1395060080#.Y10C-_1BzIU (մուտք՝ 30.10.2022).

«Ամե՛ն ջանք» եւ... «բոլո՛ր ուժերով»

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Թէ ուրկէ կու գան չակերտուած չորս բառերը, իւրաքանչիւր դաշնակցական գիտնալու է: Բայց, ի հարկէ, ոչ դաշնակցականը կրնայ չգիտնալ: Ուրեմն անմիջապէս պարզեմ:

Առաջին երկուքը մեր կանոնագրին՝ «ՀՅԴ կազմակերպական կանոններու» առաջին էջին վրայ են որպէս առաջին յօդուած. «Հ.Յ. Դաշնակցութեան անդամ կրնայ ըլլալ բարոյական նկարագրի տէր և 18 տարեկանէն վեր ամեն անհատ՝ առանց սեռի խտրութեան, որ կ'ընդունի կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը, կ'ենթարկուի անոր կանոններուն ու որոշումներուն և **ամեն ջանք** (ընդգծումը մերն է – Վ.-Ա.) կը թափէ իրականացնելու զանոնք»:

Միւս երկուքը նոյն կանոնագրի երրորդ յօդուածին մաս կը կազմեն: Իսկ ի՞նչ կ'ըսէ այդ յօդուածը. «Նորեկ անդամը կազմի մէջ ընդունուելէ առաջ կ'ընէ հետեւեալ ուխտը. «**Կ'երդնում** պատուոյս և հայրենի-քիս վրայ միշտ հաւատարիմ մնալ Հայ յեղափոխա-կան դաշնակցութեան ծրագրին, կանոնագրին ու որոշումներուն և ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐՈՎՍ, իսկ եթէ հարկ ըլլայ նաև կեանքիս գնով ծառայել Հայաստանի և հայութեան ազատագրութեան դատին» (ընդգծումը կանոնագրին մէջ է, իսկ զոյգ բառերու գլխագրումը մերն է– Վ.-Ա.)»:

Այս երկու յօդուածներուն մէջ երևցող բառերէն շատերուն մասին կարելի է երկար գրել, մանաւանդ «Հայաստանի և հայութեան ազատագրութեան դատին» բանաձևումին մասին (ոչ միայն Հայաստանի, այլև հայութեա՛ն ալ ազատագրութեան), բայց, ինչպէս հաւանաբար կռահեցիք, այստեղ նպատակս այդ չորս բառերուն անդրադառնալ է, բառեր, որոնք Դաշնակցութեան էութեան անբաժանելի բաղադրիչները կը կազմեն: Կը կարծեմ թէ այդպէս պէտք է ըլլայ որևէ հասարակական կազմակերպութեան անդամակցութեան պարագային, բայց այդպէս կը պահանջուի յատկապէս դաշնակցականէն որպէս հիմնական յանձնառութիւն՝ երդումով մը նուիրագործուած:

Մօտ ատենէն արդէն վաթսունամեայ իմ անդամակցութեանս և նոյնքան ու աւելի հրապարակագրութեանս ընթացքին ի հարկէ առաջին անգամ չէ, որ անդրադարձած եմ այդ բառերուն, և այստեղ պիտի ջանամ որքան կարելի է խուսափիլ կրկնելէ նախապէս արտայայտած մտքերս[1]:

Առաջին հերթին կարելի է հարց տալ, թէ ո՞ւր, ի՞նչ պարունակի մէջ պիտի հասկնանք ամեն ջանք թափելու գաղափարը: Անշուշտ հաւաքական կեանքին ու նախ և առաջ կուսակցութեան շարքերուն մէջ, խմբական, ընդհանուր կամ գերադաս ժողովներու թէ անոնցմէ բխած մարմիններու կամ անոնց կողմէ նշանակուած յանձնախումբերու մէջ՝ որևէ պաշտօնով՝ իրագործելու համար որևէ նախաձեռնութիւն՝ դասախօսութիւն, հանդէս, զեկոյց, քաղաքական աշխատանք և այլն: Բնական է:

Բայց դաշնակցականը ամեն ջանք ի գործ պիտի դնէ ոչ միայն կուսակցութեան շարքերուն ճամբով: Ան նոյնքան պատասխանատու է իբր դաշնակցական գործելու, երբ մաս կը կազմէ որևէ այլ կազմակերպութեան, այդ ըլլայ ՀՅԴ ուղեկից միութիւն մը, հայկական որևէ այլ միութիւն թէ որևէ օտար կազմակերպութիւն:

Սխալ չհասկցուիմ: Դաշնակցականը Դաշնակցութեան թմբուկը չէ, որ պիտի զարնէ ամեն տեղ, սակայն Հայաստանի ու հայութեան դատին դաշնակցականի՛ նուիրումով ու կիրքով ան պիտի ծառայէ թէ՛ մշակութային, թէ՛ բարեսիրական, թէ՛ մարմնակրթական, թէ՛ որևէ այլ կազմակերպութեան մէջ, ուր իր ձիրքերը, կարողութիւններն ու կարելիութիւնները կրնան օգտակար ըլլալ ու նպաստել այդ կազմակերպութիւններու ամրապնդման՝ այդ ձևով ալ ծառայելով հայութեան հզօրացման: Նոյնը՝ ազգային մարմիններու մէջ: Նոյնը՝ օտար քաղաքական թէ այլ կազմակերպութիւններու մէջ, ուր հայութիւնը ծանօթացնելու և մեր դատը ճանչցնելու հնարաւորութիւններ կրնան ըլլալ:

Արդարև, դաշնակցականը դաշնակցական է ոչ միայն ակումբին մէջ, ոչ միայն կուսակցական ժողովներու մէջ: Ան ԸՆԿԵՐ է ամենուրեք. այստեղ բառը գլխագրեցի՝ անոր տալու համար իր ամբողջական ու համապարփակ իմաստը՝ ծառայելո՛ւ յանձնառութիւնը:

Սակայն դաշնակցականը միայն հաւաքական կեանքին մէջ չէ, որ կ'իրագործէ իր ուխտը: Ան՝ իբրև անհատ, իր սեփական կեանքո՛վ դաշնակցական է: Չի՛ կրնար դուրսը դաշնակցական ըլլալ, ներսը՝

ոչ դաշնակցական: Զմոռնանք՝ ան շարքերուն ներկայացած է և ընդունուած իբրև բարոյական նկարագրի տէր անձ: Իսկ բարոյական նկարագիր կը նշանակէ նոյն դէմքով երևիլ թէ՛ սեփական կեանքին ու գործունէութեան մէջ և թէ՛ հաւաքական: Ան իրաւունք չունի երկու երես ունենալու:

Չի կրնար անաշխատ եկամուտով, գողութեամբ ապրիլ՝ փոխանակ իր օրինաւոր վաստակով ապրելու: Եթէ գործատէր է, չի կրնար իր աշխատաւորները ստրկացնելով, անոնց աշխատանքը շահագործելով իր ապրուստը հանել: Չի կրնար իբրև արդար մտածող կամայական ու անբարոյ վերաբերում ունենալ իր կողակցին, իր զաւակներուն կամ հարազատներուն հանդէպ:

Չի կրնար ընկերային արդարութիւն քարոզել, բայց ապրիլ ճոխութեամբ յղփացած, անվերջանալի հաճոյքներ հետապնդելով, շռայլ ու իր գաղափարականին անյարիր կեանքով մը: Չի կրնար հայապահպանում քարոզել, բայց չտիրապետել իր պատմութեան, մշակոյթին, լեզուին: Չի կրնար Հայ դատ հետապնդել, բայց իր զաւակները հեռու պահել հայութենէն, ազգային կրթութենէն, հայու հաւատքէն:

Չի կրնար, չի կրնար, չի կրնար...

«Բոլոր ուժերովս» այդ կը նշանակէ նաև: Բոլոր ուժերը իր ժողովուրդին տրամադրել կը նշանակէ:

Ես քիչ ըսի, դուք շատ հասկցէք: ■

1. Տես «Յանձնառութիւնը ամբողջական պէտք է ըլլայ», «Դրօշակ», 1989-01-04, «“Ամեն ջանք թափել”... ինչպէ՞ս», «Հորիզոն», 2002-07-01. երկուքն ալ կարելի է առցանց կարդալ նաեւ «Ոստայն 17 – Բարեւ, ընկեր» հատորին մէջ):

Հայությունը և Հ.Յ. Դաշնակցությունը

Հայության թշնամի թալիաթները բնորոշում են.

- Դաշնակցությունը սպանել համազոր է հայությանը սպանելուն և փոխադարձաբար:

Այդպես էին մտածում գոլիցիններն ու դաշկոմները: Մեր հակառակորդ ձախ կուսակցությունները բնորոշում են.

- Դաշնակցությունը այն քաղցկեղն է՝ հայության սրտին բուսած, որի վիրահատումից հայությունը կմեռնի:

Հայության թշնամիների որակումներով ուրեմն դժվար է որոշել Դաշնակցության և հայության սահմանները: Այդ կուսակցությունը, լինի չարիք թե բարիք, երկրորդական հարց է դառնում: Նա հայության հարազատ զավակն է և միացած է նրան: Նա, ով ցանկանում է սպանել Դաշնակցությունը, թշնամի է հայությանը, և, փոխադարձաբար, հայության թշնամին թշնամի է Դաշնակցությանը: Բոլշևիկները արդեն քառորդ դարից ավելի է, իսկ այսօր էլ իրենց «առաջադիմականներով» ցանկանում են սպանել Դաշնակցությանը, ուրեմն թշնամի են հայությանը:

Դաշնակցությունը կենտրոնի կուսակցություն է: Նրան կուսակցություն անվանելը սխալ է, որովհետև այն ներկայացնում է հայ ժողովրդին: Այն ավելի շատ հայ ազգի կազմակերպությունն է: «Հայր Աբրահամը» ասում էր.«Դաշնակցության ուժը իր խորհրդավորության մեջ է»: Կուզեի այդ խոսքը ճշտել այսպես, որն ավելի իրական է՝ Դաշնակցության ուժը հայության բնազդի և ենթագիտակցության մեջ է: Այն չունի տեսական մեծ գրականություն ծրագրերի և նախագծերի շուրջ, բայց ունի մի քանի նախադասություններից կազմված նպատակներ, որոնց սեփականատերը ավելի շատ հայությունն է, քան ինքը:

«Միացյալ, Անկախ, Ազատ, Ժողովրդավար, Ընկերվարական Հայաստան» խոսքերի մեջ կարելի է սկսել և վերջացնել նրա տեսությունը:

Ռուբեն, Հայաստանը միջցամաքային ուղիների վրա, Եր., 2001, էջ 119-120:

ԴՐՕՇԱԿ

Ստեփանակերտ
30-ը հոկտեմբերի 2022 թ.